ԻՄԱՍՏ։

ՅԱՄԵՆԱՅՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԸՆՏՐԵՑԻ
ՔՐԱՆԱՄՏԵՂԾՈՒԹԻՒՆ։
ԲԱՆԱՄՏԵՂԾՈՒԹԻՒՆՆ ՀՐԱՀԱՆԳԷ, ԱՅԼ
ԱՐԾԱՐԾԱՆԷ ՔՀՈԳԻ ՆՈՐՈԳԷ։

ԹԱՐԳՄԱՆԻՉ։

2004

2995
1402-Ակ
Պատրիարքական Գրադարան Սուրբ Էջմիածնի Ս. Գայանեան

ՍԱՆ ՊԵՏՐՈՍԻ

ՊԱՅԼՈՍ ԵՒ ՎԵՐԳԻՆԵԻՍ

Սերալն շէմ եբէլոցուն՝ ՝է հոգմանուայցն չօշէ՝ ինչ յուշ ածէն զերէնս լէրայ թանէալ ՝է գնամ լեցէպոպէնէ։ յէջ 19։

9870-Հ-Ա

՝Ի ԿԱՂԿԱԹԱ

1830

84

ՆԱԻԱԿՈԾՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՊԱՒԼՈՍ ԵՒ ՎԵՐԳԻՆԻԱ։

Էր՝ի կղզեն գաղղիական լեառն մի՝ի վերոյ քան զՆաւահանգիստն Լուդովիկոսի, յորոյ արևելեան ցարդ ևս տեսանին կողման՝ աւերակք երկուց փոքրիկ երՀԹաց շրջապատեալց՝ի բարձրաբերձ լերանց մանուռիկ, դուռն դէպ՝ի հիւսիսակողմն ունելով բաց. որոյ պարուսնակ պատկեալ երբեմն երևի գալ՝ի ձեռն ժրաջան մշակաց։ Ընդ այս դուռն ելեալ՝ գացես՝ի ձախակողմանն զՅայտնութեան Սար անուանեալ Լեառն, ուստի ընդգալուստ զականեն նաւաց. առ ստորոտովք սորա է քաղաքն Նաւահանգիստ Լուդովիկոսի անուանեալ, յորմէ՝ պողոտայն որ հանէ՝ի քաղաքէն՝ի Պամպլմանքոս, ուր հոմանուն եկեղեցի մի պարառեալ շամբիւք եղեգան՝ կանգնի՝ի միջի լայնածաւալ գաշտի. յայնկոյս որոյ տարածեալ ձգի անտառ մինչ՝ի ծով։ Ականելով առ ծովափամբք՝

դէմ յանդիման երևեցի Պարոյրն գերեզմանի, և սուն մի առ աջակողմամբ Դիժբաղդութեանն Սարաւանդ, յայնկոյս որոյ լայնածաւալն ծով ածէ յերևան զանբնակ կղզեակս ինչ, յորոց մինն որ ըզմարտկոցի 'ի պայքար մտելոյ ընդ կոհակաց բերէ զնմանութիւն, անուանի Սար Հգանց:

'Ի մուտս ցանկին՝ ուր ոչ սակաւ առարկայք ընծային ակամեղեաց, արձագանգ լերինն անդուլ յեղյեղէ զդաշն սօսաւին մօտակաց մայրեաց շարժելոց 'ի քաղցր սիկ, և զխռովեալ ձայն ալեաց ծովու բախելոց ընդ գահս 'ի հեռուստ: Իսկ առ աւերակ դաստակերտօքն ամենայնն է խաղաղ և լռին. և մի միայն գահավէժ ժայռք դարբուկ՝ Իբրև զշրջապատ հողաբլուրս, 'ի տես ելանեն աւկանողաց. զորոց ստորոտս՝ զծերպս և զերկնաբերձ անդորդանս, ուր հանդուցեալ սառն երևին ամպք, պսակեալ զարդարեն մեծամեծ կոհեղք ծառոց. նա՝ յոլով անգամ խակ տեղք՝ զոր նոցին արտեանք խորեն, ներկանեն զգարնային և զարջնաթոյր զառիթափս նոցին յամենաղուարհ գոյն Երկնից աղեղն. և զակունս Պամպանոս գետոյն գործեն յորդառատ:

'Ի միջի ցանկին թագաւորէ խորին լռութիւն: Եւ՝ ջուր և՝ օդ և ամենայն տարերք 'ի խաղաղութեան վայելեն: Ուր ուրեմն կրկնէ արձագանգ զխուշիւն արմաւենեաց 'ի տարածանելն զբազուկս իւրեանց, զերկայն ծայրս որոց հեղիկ

Հօհեն սիք անուշակ։ Լոյս իմն ընդ աղօտ լուսատու լինի 'ի յատակ խոր հովտիս, որոյ 'ի վերայ 'ի միջօրէէ և եթէ Հսուսագայթէ արևակն։ Իսկ 'ի ծագիլ արփիականն՝ ՀաՀանչք զշրջակայ ժեռոքս անկանին լուսափիւռք, որոց շեշտ կատար ամբարձ քան զլերինն ելով ստուերս, երևին ներկեալ յոսկի և 'ի ծիրանի գոյն, Հսուսագայթս 'ի կապուտակն արձակելով երկին։

Քաղցր էր ինձ հանապազորդեալ յայս տեսարան, ուր վայելէի ընդ շքեղութիւն լայնածաւալ դաշտավայրին միանգամայն և զանվրդով առանձնութեանն զմայլումն։ Այն ինչ յաւուր միում հանգուցեալ առ ոտիւք խրՀթացս և յառեալ ընդ միտս խորհէի 'ի վերայ հոլովման ամանակին, տեսի զծերունազարդ ալևոր ոմն անցանել առ ինև։ Հանդերձք նորա ըստ տարազու կղզականացն, բոկոտն, յեցեալ յաքանոս ցուպ, ծաղկեալ ալեօք և տիպար դիմացն մեծարու։ Ողջունեցի զնա խորին խոնարհութեամբ, զոր և ինքն փոխարինեաց ինձ բարեկամաբար։ և գկնի ուշի ուշով նկատելոյն զնս երկն բազմեցաւ առընթեր իմ 'ի նմին իսկ բլրակի։ Քաջալերս առեալ իմ 'ի զոր առիսն եցոյց մտերմութենէն, զայս օրինակ հաւեցի խօսել ընդ նմա։

ՀաՀեաց՝ ով հայրիկ, ցուցանել ինձ եթէ գիտես զնախկին բնակչաց 'ի յայս դաստակերտս։ Առ որ "Էր որդեակ իմ" պատասխանեաց ծերունին "երկու տասն ամաք յառաջ բնակէին 'ի

յայս՝ զոր արդ տեսանեսդ կարկառ աւերածոյ, և՝ ի յայն անարօրադիր կորդ երկիր, գերդաստանք երկուք, որ երանաւետեալ՝ զաւուրս իւրեանց յանապատի առտ երջանիկս անցուցանէին: Է՛ անցք սոցին պատմութեան այն սրտառուչ, այլ ո՞ր Եւրոպացի՝ ի գալն՝ ի հնդիկս մնայցէ առ վայր մի քաղել անձին օգուտ օրհասիւ ոմանց անենշանից էակաց: Ո՞ր Եւրոպացի աւաստասցէ գտանիլ երջանկութեան՝ ի չքաւորութեան և՝ ի մառնութեան: Այո՛ հաղորդի հետաքրքրութիւնն անցից երևելեաց, ուստի սակաւս քաղեսցեն մարդիկ անձին օգուտ: "Աղէ՛ հայր," կրկնեցի ասել, "եղանակ բարուց և բանից իսկ քոց՝ ինձ քաջ ցուցանեն զաջողութենէ քումմէ՝ ի փորձս կենաց. և եթէ ոչ ինչ խափանէ քեզ անագանել առտառիս, պատմեա ինձ յաղաչել իմում զերեսս քոյ՝ զնաւնի բնակչաց անտպատիս և հաւատի լեր զի թիւրեալք և զառածեալքն ևս և յաշխարհային նախապաշարմանց, նոքա ևս զգան յանձին զբերկրութիւն ինն նկատմամբ երջանկութեան առաքինեաց. ծերունին որ յընթացս լուութեան իւրոյ յեցեալ էր յարմունկն իւր, իբր թէ յարուցանել՝ ի միտս առակեալ՝ զանցելոցն զպատկերս, այսպուանակ կալաւ զթել պատմութեանն:

Այր ոմն ջաւանհատակ մանսիուր տ՛ալ Դասիր անուն, բնիկ Նորմանդիոյ, յետ վայրապար յածելոյն՝ ի ինդիր պաշտօնի՝ ի ջօրս պաղլեոյ, և

զերդ և ելոյն յօգնականութենէ յիւրոյն ազգայնոց, հաստատեաց 'ի վերջոյ երանելի զՀետ իւրումն Հաղկատագրի 'ի կղզի սատ, ուր ժամանեալ ԵՀատ յամին 1726։ Աղ և ընդ ինքեան զմանկամարդ ոմն բամբիշ, զոր խանդակաթ ինն սիրէր սիրով. յումմէ ևս ոչ նուազ կաթոգին էրն սիրեցեալ։ Էր սա յաշնուական և 'ի հինաւուրց տոհմէ 'ի նոյն գաւառի, ոակայն մենաւոր ա'լա Դաւիր աղ զնս յիւրն 'ի կնութիւն անուժիտ, և ընդդէմ իսկ հաւանութեան նորին ազգականաց. որք ոՀՀՀ էին ընդ այս լծակցութիւն 'ի պատՀառս լինելոյ նորա անմասն յիրաւանց այնուակնութեան։ Թողեալ մենաւոր ա'լա Դաւիր զեզարն իւր 'ի Նաւահանգիստն Լուդովիկոսի, մուտ 'ի նոսա երթալ 'ի Պատակաւակար առ 'ի գնել անտի զՀնդիկս ոմանս յօգնութիւն ինքեան 'ի հաստատելն զբնակութիւն 'ի կղզի սատ։ ԵՀատ նա 'ի դէմ եղեալն յայնմ մահարբաւէր եղանակին, որ ոկսանի 'ի կիսոյն Հոկտեմբերի, ուր կենսաւազ եղև 'ի մահաշունչ ջերմախտէն՝ որ բռնանայ յերկրի անդ զվեց ամիս 'ի յամին. և որ 'ի յաւիտեան 'ի դերեւս հանցէ զփոյթ Բոլէական ազանց՝ առ 'ի հաստատեալ 'ի մահաբերն յայն երկիր։ Անյաղութիւն եկաց երթալ և չինչ 'ի յընչից նորա. և եղար նորա տաղմնաւիկ մնաց անտերունչ յայնպիսեմ վիճակի, ուր չունէր ոչ համբաւ՝ ոչ ծանօթ և ոչ ըստացուած ինչ երկրի և կամ զթիկունս, քան 'ի

միոջէ զանդիկ կնոջէ։ Քնքշասիրտ ոչ բաւելով գիմել առ այլս, յետ վախճանին իւրումն միակ սիրելւոյ վառեցաւ 'ի Թշուառութենէն 'ի զէն արուորութեան, և Հաստատեաց 'ի մտի գործել ընդ տանկին իւրում զփոքրիկ վիճակ ինչ երկրի, և այնու ընաւ զպէտս կենաց։ Առ այսր աղագաւ ելթող լինք բարձի Թոռի արար և Հեռացաւ յարգատալիր և 'ի միանգամայն զուարճալի և շահաբեր վայրացն լայնածաւալ անապատի կղզւոյս, որ 'ի գաղթականին Թոռեալ է 'ի կամն ընտրութիւն վայրացն, և 'ի խնդիր ելեալ անկեան ինչ լերին՝ զանխուսալ ապատանալոյն իրիք, ուղղեաց զգնացս իւր դէպ 'ի յանմատոյց կորէսս, ուր իբրև 'ի բնի մարթասցի կեալ մենաւոր և անտես։ Ամենայն զգայուն էակք ունին զբնաւոր իմն բերումն վախչելի Թաքչիլ 'ի միջի տառապանաց իւրեանց 'ի ոչոր յետ վայրիս և անմատչելիս. որպէս զի՝ սրբեալք պատուարս ընդդէմ կանգնեսցեն Թշուառութեան, և կամ զի բնութիւնն անդորր խաղաղեսցէ զտագնապս Հոգւոյ։ Տեսչութիւնն Աստուածային՝ որ 'ի կարիս ձեռնտու լինի մարդկան, ոչ աւելի քան որումն պէտս ունին, Հոգացեալ էր վասն տիկնոջն տ'ս Դավրի զելանութիւն իմն՝ զոր ոչ մեծութիւն և ոչ վարանութիւն գնել բաւէին. այս էր բարեկամ մի։

'Ի յերկրին ուր տիկինն տ'ս Դավրի ուղղեալ էր զգնացս իւր, ամաւ կանխիկ բնակէր

մանկամարդութեան՝ աժխոյժ, բարեհամբոյր և գորովագութեամբ բնաւորութեամբ՝ Մարգարիտ անուն։ Ծնեալ՝ ի Բրիտանիոն և մնեալ՝ ի գեղջուկ տան, ուր սիրեցեալ և դգուեալ՝ մարթ էր թերևս անցուցանել զաւուրս իւր՝ ի շինականն պարզ երջանկութեան, եթէ չէր կանացի բնութիւն նորա տեղւոյ տուեալ հրապուրանաց ազնուականի ուրեմն իւրում դրացւոյ, որ յուսացոյցն զնա յամուսնութիւն։ Այլ սակայն՝ շոյտ՝ ի չիք դարձաւ այս պատիր յուսադրութիւն. քանզի ընդ հուպ բարձի թողի արարեալ զնա՝ յաւել և զտմարդութիւն ընդ պատրանս, և չինչ հոգալով վասն մանկանն որով յայնժամ յղին էր։ Ուրեմն որոշեաց Մարգարիտ թողուլ լքանել՝ ի յաւիտեան զծննդեան իւր տեղին, և երթալ հեռանալ՝ ի հատուածս ինչ հեռաւորս, ուր թաքուն ունիլ հնար լինէր իւրն յանցութիւն. հեռի ելով՝ ի յերկրէն՝ ուր կորուսեալ էր զմայկ ուժիսն գեղջուկ կուսանի՝ զիւրն համբաւ։ Յանօթի առեալ դրամովք ինչ գնոյ առեալ էր զՀինաւուրց զանդիկ սմն, որով գործէր զփոքրիկ վիճակ ինչ երկրին։ Ասա ուրեմն տիկինն տ՝ալ Դավրի պաշտեալ՝ ի խափշիկ կնոջէն իւրմէ եգիտ զՄարգարիտ գիւեցուցանել զորդին իւր։ Շոլմեալ՝ ի տեսութենէ ուրումն՝ որոյ վիճակ չէր ինչ աննման իւրեան, եցոյց հակիրճ բանիւք զիւրն անցեալ վիճակ և զայժմեան զիւրն զկարօտութիւն։ Խանդաղատեալ Մարգարիտայ՝ ի

վերծանութենէ առտի, և անձուկ յուէտ զմտերմութեան քան զմեծի ուրուք համարումն տալ զինքենէ ունելով՝ հոլանեցաւ մերկացաւ առաջի նորա զիւրն ամենայն զյանցութիւն: "Եւ" յուէլ ասէ, "ես բոտիս անգութ եմ այսպիսեաւ Թշուառութեան. իսկ դու տիկին... դու և՝ պարկեշտ և՝ Թշուառ:" Ապա յաղեաց երանելով առաջի ալսար տիկնոջն տ'ալա Դաւթի զիւրն աղքատին տուն և զբարեկամութիւն: Շարժեալ բամբշիս 'ի սիրատարուն այս ընդունելութենէ՝ գիրկս արկանէ նմա և գոչէ. "Ո՞հ. այն սրդարև և այլ ջինչ երկուանամ, զի ունի բալձրեալն վաղճան դնել իմումս տառապանաց. և զի շարժեաց զգեզ՝ որում եմս օտար ոք, ցուցանել առիս զայն քաղցրութիւնն, քան զոր երբէք յիմոցս իսկ ազգայնոց ջունիմ գնաշակ:"

'Ի Հարուստ ամենակաց հետէ Ծանօթ էի ես Արգարիտայ. և իմն ընակութիւն թէպէտ մին և միս փարանգաւ հեռի 'ի նմանէ, 'ի միջի Հաղագաց՝ յայնկոյս զառիթաւ լերինն զոր անդ տեսանես. և այնպէս ունէի զնա 'ի համար իմոյս դրացւոյ: 'Ի քաղաքս Եւրոպիոյ՝ գուեհք և կամ ես սղագոյն միջոցք տարանջատեն զազգայինս՝ զորս բնութիւնն շաղկապեաց ընդ միմեանս. իսկ մեք գաղթականքս ոչ իսկ վերջամեմք և զնոսա՝ զորս Հաղագք և լերինք տարատարեն 'ի մէնջ, յարգել անուամբս դրացւոյն. և քան զամենայն՝ մինչեւ էր

կողմանց տածեալ զհաղորդակցութիւն ընդ հնդիկս, զբարութիւնն և եթէ պանծայր իրաւամբ բարեկամութեան, և հիւրասիրութիւնն առ եկս՝ առաւել զհաճութեան քան զպարտաւորութեանն բարձեալ տանէր զկերպարան։ Իբրև ազգ եղև ինձ եթէ գտեալ էր Մարգարիտ զմին ընկերակից, առօրին Հեպ ետու ժամանել առ նոսա՝ ակն ունելով պիտոյանալ իւիք իմումս դրացւոյ և հիւրոյ նորին։

Վաշտատեսիլ շնորհք տիկնոջն տ'ալ Դաւթի յաւէտ ինձ ձեռնտու լինէին նորուն գեղեցկութեան, շաղկապելով զհամակրութիւն ընդ զարմանս։ Դիտակ նորա բարետեսիլ, և տեսիլ գիմացն միանգամայն արտայայտէր զփարաղնութիւն և զթաղծութիւն։ Ապաքէն հատեալ երևէր առ դրուանս ծննդականութեան, և ես պէտ յանձին կալայ առաջի առնել նոցա առ'ի զլայնածաւալ երեսնահրատարակչի լայնութիւն դաշտավայրին յերկուս հաւասարաչափ մասունս տրոհել'ի միջի իւրեանց, որով զիւրեանցն նախանձամիտին զաւակաց օգուտ, և զուսով ունէին զբռնութիւնս գաղթականաց։ 'Ի յիս զայս ընկեցին նոքա հոգ։ և ես զլայնատարդ անապատս այս 'ի կրկին հաւասարաչափ մասունս տրոհեցի։ մինն պարսկակէզ վէրին մասն այսր ցանկի, յարեւանէ անտի զոր տեսանեն դարակին Թաղէոսի յամսս, ուստի ծագի սրբոյն Թադեոսի գետն Պամպանաս, մինչև ցընդարձակա-

բերան Հեղքուածն այն 'ի կատար լերին անուա-
նեալ բերան Թնդանօթի՝ բերելով զնմանութիւն
ինչ այսր ձեւոյ։ Այլ՝ կարի պարտատելի եղեալի զար-
գիս նկրտիլ գտանել զմուտ 'ի յայս գոգ անապատ
մասն ցանկին, ոլոյ երկիր է զի խցեալ է բերկտո-
ղովք ապառաժից և է զի խրամատեալ 'ի հեղե-
ղաց։ և այնպէս ունի զանձնիւ ծառս և զբիւրաւոր
աղբերակունս և զառուակս։ Իսկ միւս մասն սար-
վակի 'ի դաշտավայրի, տարածեալ ձգելով 'ի
Թմբոց անտի Պամպանոս գետոյն ցբացուածս այս՝
ուր արդ իսկ կամք բաղմեալ, ուստի խաղալով կա-
տարէ գետն զընթացս իւր 'ի միջոյ այնց երկուց
բլրոց մինչև Թաւրի 'ի ծով։ Բա՝ հնարաւոր և
զարգիս իսկ զմարգագետնոց ոմանց զհետս անգամ
գտանել։ և այս մասն դաշտագետնի այս՝ ոչ այն-
չափ երիզաւտ, սակայն և ոչ պատուականագոյն
քան զմիւսն։ այնուհետև զի 'ի Թանընկէցս եղանի Հախ-
Հախուտ, և յերաշտութեանէ այնչափ կարծրանայ,
մինչև տեղն և եթէ տալ հարուածոց դալապրի։
Իմ զայս օրինակ յամբաւկ գործոյն ժամանեալ՝
կոչեցեալ զդրացիս իմ առ 'ի վիճակ արկանել վասն
առաջնոյն ոտացուածոց՝ զոր ունէին ժառանգել։ Ար-
կաք վիճակ։ և վերին մասն վիճակեցաւ տիկնոջն
տ'ալ Դաւրի, և ոտորինն Պարգարիսայ։ և անց-
նելոյն հանդ ընդ իւրն շատացեալ երևէր վիճակ։
Այսմ այսպէս եղելոյ՝ աղերս մատուցին առաջի իմ
կնոջ առ վմեանս զիւրեանցն առեալ բնակութիւն,

զի մերձ առ իրեարս եղով, վայելել ցանգ կարող եղցին զամենանկելին բարեկամութեան զՀաղորդութիւն և զմիութարութիւն փոփոխ մտերմական ցուցմամբք: Զբնակութիւնն Արարգարիտայ 'ի կենտրովն ձորոյն կառուցի առ սահմանագլխով իւրումն փոքրիկ տէրութեան: Առ երկոսորա միւս ևս կառուցի 'ի բնակութիւն տիկնոջն տ'ալա Դավրի. և զայսօրինակ համշիրակքս երկոքին մինչ վայելէին զամենայն զՀեշտութիւնս դրացութեան, անձնիւրն յիւրում բնակէր տէրութեան: Աճի 'ի լերանց գցիցս վայտից և 'ի ծովափանց զաղարթս արմաւենեաց, ամրացուցանել նոքաք զբնակութիւնս նոցա, զորոց ջիք յայժմուս յստակ տեսանել և զմուտ և զյարկ: Այլ ո՞վ աղէտիցս. Ցիսն ինձ՝ ցիսն և այնպէս ոչ սակաւ հետք առ իմոյս յիշատակի: Ամանակն՝ որ այնպէս շոյտ յաղարտ վարեալ 'ի ջիք դարձուցանէ զանքացեալ և զսինլեալ մահարձանս ինքնակալութեանց, անխայտեալ երևի աստ 'ի բարեկամութեանն յիշատակ. այնու զի զիսն յաւերժացուցէ զվիշտ մինչև ցյետին կէտ շնչոյս:

Ուր ուրեմն վաղչանեցաւ շինութիւն խրՀթին. և տիկինն տ'ալա Դավրի ընծայեաց յաշխարհ զէգ ինն զաւակ: Որդւոյն Արարգարիտայ իմ էր լեալ մնդիկնոս. և զնոյն պաշտօն աղաչեաց զիս տիկինն տ'ալա Դավրի բարեկամաւն իւրով Հանդերձ, յանձն առնուլ 'ի Հանդիսի մկրտութեան նորա-

պարգև դասերն իւրոյ, որում Մարգարիտ անուն
էր Վերգինիա. "քանզի" գոչեաց՝ "Թուի ինձ ե-
թէ յառաքիչութեանն մատչելի՛ի հանդէս ատ-
ուածատուր այս զաւակ. և երանեալս տեսցէ զա-
ւուրս իւր: Ընդ առաջ ել ինձ Թշուառութիւնն
միայն՝ իբրև զերդևեցոյ յառաքիչութենէն:"

Ապաքէն իբրև տարաքինեցաւ տիկին
տ'ալ Դավրի, հաւեալ էին երկու փոքրիկ տէրու-
Թիւնքն ընծայաբերը լինիլ դոյզն իմն երեւայրեաք,
որ մտամբ իմն Թերևս զՀետ եկեալ իմումն ըստ
բերման վաստակոց՝ի զարգացումն նոցին, այլ սա-
կայն յաւէտ իմն ընծայելի է անխոնջ և անպար-
տասելի աշխատանաց երկոցունց զանգկայն: Դո-
մինկոն (զի սապէս անուանէր զանդիկն Մարգարի-
տայ) Թէ և զալիս ծերութեանն համբուրեալ՝ և
այնպէս էր տակաւին քաջամարմին և հուժկու,
ամբարեալ՝ի միտս ունելով զսուն ինչ գիտութիւն
և զ'ի բնէ սուր հասողութիւն: Արօրէր անխտիր
զերկոցունց տէրութեանց զյաւէտ արդաւանդաՀող
վայրն, և սերմանէր՝ի տեղիս տեղիս զայնոսիկ
հատս՝ որոց երկրին ընդունակ գիտէր: Յանալոցա-
գոյնս արկանէր զմայիչ, յարգաւանդս զցորեան,
և՝ի ԽոնՀախուտս զորիզ սերմանէր: Ա՛ռ ատորա-
տուք բլոց արկանէր զսերմանիս դդմի և վարունկոյ,
ընդ որ բերեն երանել և պՀնազարգել ջոմացեալ
տարաթիւք իւրեանց: Յանջրդի դաշտագրաՀաշակն
անկէր զգետանինձոր. բամբակենիք փթթեալ

պերճանային 'ի դարեւանդս և եղկ գնաշաւքարք 'ի
կաւուտս պար բոլորեալ ուռճանային 'ի յերկրի։
'Ի դարակս մնուցանէր զտունկս սրձոյ, ուստի այն
մանրահատ՝ ելանէին պտուղանագոյն յոյժ։ Զզա-
խոտք սիռեալ տարածեալ զբովարար հովա-
նոց իւրեանց 'ի վերայ թմբոց գետոյն և պար ա-
ծեալ շուրջ զբնակութեամբքն՝ զանն ողջոյն
ընծայարեր լինէին պտղովք գալարեօք։ 'Ի վախ-
ճան ամենայնի և ոչ մոռացաւ Դամինկոն դարմա-
նել զտունկս ինչ ծխախոտի, առ 'ի զաշխա-
տանս իւր յանկուցանել։ Էր զի երթայր հար-
կանել 'ի լերանց զփայտ կիզանելոյ, և էր զի
պարապէր 'ի կոփումն դարբկաց 'ի միջի ցանկին
'ի հարթ յատակ յօրինելն զպողոտայս։ Պաշ-
տէր զՄարգարիտ ամենայն ակնածութեամբ և
չինչ ընդհատ 'ի նմանէ և զտիկինն տ'ա-
Դավրի, զորոյ զանդիկ պաշտակուհին Մարիամ
յիւրն ածեալ էր 'ի կնութիւն, յընծայման
անդ Վերգինիայ յաշխարհ, և զոր կաթոգին
սիրով սիրէր։ Ծնեալ էր Մարիամ 'ի Մատա-
կասկար, ուստի և ածեալ էր ընդ ինքեան զար-
ուեստն ւիւսելոյ զտառաղանս և զազգ ինն վը-
շայ յերկրայն դալարեաց անտառին։ Լուսէր ըզ-
գործունէութիւն և զյատակութիւն և զնաշ-
խարհիկն ասել զհաստատմութիւն։ Փոյթ ա-
ռին էր հանդերձել զհաշ, ինամել զպարարակս
և երբեմն երբեմն տանել 'ի նաւահանգիստն

Լուդովիկոսի պաւելորդս՝ թէ և ոչ շատ ինչ՝ տնկագործութեանն 'ի վաճառ : Առ 'ի տալ քեզ զՁիրդ պատկեր տնտեսութեան, որպէս և կահուց և կարասեաց երկուց վաքրիկ տերութեանցս, յաւելից ընդ զրս արդէն յիշատակեցի զերկուս այծս զարգացեալս ընդ մանկանց, և զգամիս մի որ սկէրն զգիշերայն :

Պարապուհն տիկնոջն տ'ալ Դաւրի և Համշերաքի նորուն էր 'ի մանուհն բամբակի մինչև ցերեկոյ : Զիրկ 'ի յայնպիսեաց զոր Հարտարութեան իւրեանց չէր շնորհեալ 'ի յաղողել, շրջէին 'ի տան հոլանի ոտիւք, և զմաշկս պարհէին և եթ առ կիւրակէի, յորում աւուր վաղաշ ընդ առաւօտն եղեալ փութային կալ առաջի պատարագին յեկեղեցւոջն Սադուկ գրովի, և այս տուն Աստուծոյ այն՝ և ևս հեռաւոր քան զնաւահանգիստն Լուդովիկոսի, և այնպէս ուր ուրեմն յաճախէին 'ի քաղաքն՝ երկուցեալ յարհամարհանաց անտի ոմանց, ագանելոյն իւրեանց աղագաւ զհանդերձս յանթափ երկնագոյն կտաւոյ բանկալայի, զոր սովորաբար զանդիկք առնուն զանձամբ : Բայց կարե՞ն արտաքին սեթևեթք որոց բաղդն իշխէ, կարե՞ն վճարել զփոխարէնն անուշակ երանութեան առանին : Եւ թէ յոմն մի վշտանային յաշխարհէ, այս թերևս տայր նոցա քաղցրանալ իւրեանց աղքատիկ առանն : 'Ի տեսանելն Մարիա-

մաւ և Դոմինկոսի 'ի բարձրութենէ աստի ըզ-
դարձ տիրուհեաց իւրեանց 'ի Սադուկ գրովէ,
հեւս առեալ փութային ի ջանել 'ի լեռնէն,
առ 'ի ձեռն տալ նոցա 'ի վերելս։ Նկարեալ
երևէր 'ի դէմս զանդկացն մեծ ի մեն ցնծութիւն 'ի
տեսանելն զնոսա վերստին։ Գտանէին սոքա 'ի
դարձի իւրեանց զմաքրութիւն, զաղատութիւն
և զայն ամենայն բարիս՝ որ 'ի վաստակոց ծնա-
նին։ և նշմարէին յարբանեակս իւրեանց զփոյթ
եռանդն 'ի սպասաւել։ Ելով ընդ միմեանս կա-
պեալ հանգուցիս հանգուստակ կարեաց և հա-
մակրութեանց մի օրինակ թշուառութեանց՝ ձօ-
նէին իրեարս զամենայնկելի և զփաղաքուշ տիտ-
լոսս համշիրաքի, բարեկամի և քեռ։ մի կամք
էր երկաքանչիւրոցն, մի իշխանութիւն և մի սե-
ղան։ ամենայնն մի էր առ նոսա։ Եւ թէ դէպ
լինէր զի կիրք ի մեն քան զբարեկամութեանն
եռանդուն՝ յարուցանէր 'ի կուրծս նոցա զկա-
րի ի մեն տաստիկ և զանօգուտ վիշտս, ամբիծ կը-
րօն և ողջախոհ կենցաղավարութիւնն ձգէին ըզ-
տենչ նոցա առ միւսն կեանք։ Հանգոյն ծաւալիչ
բացոյն՝ որոյ այլ չինչ գտեալ յերկրի ինքեան
Հարակ՝ ելանէ ծառանայ 'ի վեր 'ի յերկինս։

Տիկինն տ'լա Դավրի զոնուն գործս
երբեմն 'ի Արգաբիտ ընկեցեալ ապատան՝
ելանէր արտաքս շրջիլ մենաւոր և յայնմ մտա-
հաՀ և զուարՀընծայ հայարանի շնորհուկս

առէր այնպիսեաց վշտալից թախծութեանց՝ որ յոյժ և յոյժ ընդ հանոյս ելանեն մարդոյ, յետ առաջին սուզման յուզմանց մտատանջ տրտմութեան:

'Ի սիրայորդոր և 'ի սրբազան սրտերայ 'ի բնութենէ անտի հրամայելոց, ելին ծագեցան կրկնակի ուրախութիւնք գոլովաղէտ մարցս երկոցունց. որոց փափաք մտերմութիւնն 'ի ձեռս բերէր գնարոգ ինն հզօրութիւն 'ի տեսութենէ անտի զաւակաց իւրեանց՝ երկոքին և միօրինակ ծնունդք տժբաղդ սիրոյ: Խնդութիւն ինն զգային յանձինս լուսաւոր զմանկունս իւրեանց 'ի միասին 'ի միում լոգարանի, դիեալ զնոսա 'ի միում լաշտոցի, և երբեմն երբեմն փոխեալ զմայրենի ծոցն անդարար. որպէս զի շաղեսցեն ընդ բարեկամութեանն հանգոյց զայն ինքնագոյական սէր՝ որ 'ի մտերմականն առտի 'ի գործոց ծագիցի: "Օ՛ն անդր մտերիմդ իմ," ասաց տիկինն տ'ա Դավթի ցՄարգարիտ, "թող անձնիւրն 'ի մէնջ ունիցի զկրկին զաւակս, և անձնիւրն 'ի զաւակաց՝ զկրկին մաս:" Օրինակ ինն. երկու ընծիւղք յարակցեալք յերկուս ծառս համատեռս, զկնի բեկանելոյ բքոց զամենայն զբարունակս նոցին, ընծայաբերեսցեն և համեղաճաշակ պտղովք, եթէ անցնիւրն տաբաստեալ 'ի մայրենի 'ի բնոյն՝ պատուաստեսցին 'ի մերձակայ ծառն. ոչինչ ընդհատ յօրինակէս ինձ

տէս դու զերկուս մանկունս զայսոսիկ, որք՝ զուրկ յայլ ամենայն օգնական, իբրև փոխադրեալ լինէին 'ի ծոց իւրեանց կենսատուաց, յինքեանս ձըգէին զբերմունս առաւել գորովականս քան որ առ որդիս և դստերս, եղբարս և քորս։ Այն ինչ դեռ յօրորի էին, մարք նոցա բանս 'ի մէջ առնուին 'ի վերայ հարսանեկաց նոցին. և այս պատկեր ամուսնական բարեբաստութեան՝ որով ամենքեին զվիշտս իւրեանց՝ շատ անգամ և քամեր յաչս նոցա զարտասուս դառն ցաւոց։ Թըշուառութիւն միոյ մեր ծագեալ էր յանկուշելոյն զամուսնութիւն. իսկ միւսոյն՝ յարկանելոյ զանձն ընդ օրինօք նորին. մինն չուառացաւ փորձելով զանձն քան զիւրն ամբառնալ աստիճան, իսկ միւսն՝ խնարհելով յիւրմէ իսկ բարձրութենէն։ Սակայն և այնպէս՝ արգահատէին զանձինս 'ի յուսադրութենէ աստի. եթէ բարեբաստիկ ծնունդքն իւրեանց՝ հեռի 'ի սուարիմ ժանդ նախապաշարմանց անտի Եւրոպիոյ, որք վարակեալ թունաւորեն զամենաինկաւոր սկզբունս մարդկան երանութեան՝ վայելեսցեն միանգամայն զքաղցրութիւնս սիրոյ և զբարիս հաւասարութեան։

Ո՛չինչ թերևս գերազանց անցցէ քան զսէրն՝ զոր նորաբողբոջ մանկունքս այսոքիկ ունէին առ իրարս։ Եթէ զլալ հարկանէր Պաւլոս՝ մայր նորա յակն արկանէր նմա զՎերգինիա։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Մ. Մաշտոցի

և յայն տեսիլ ժամտէր նա և խաղաղանայր ։ Եթէ դէպք ինչ անցանէին ընդ Վերգինիա, Պաւլոսի Ինչք վերուցանէին զայնմանէ, և Վերգինիա լուէր նոյնհետայն 'ի լալոյ՝ իբրև զՊաւլոս տրտմեալ տեսանէր ։ Շատ անգամ դէպ լինէր ինձ տեսանել զնոսա մերկս ամենևիմբ, ըստ սովորութեան երկրին. գայթն 'ի գայթին գնալով, ունելով զձեռանէ իրերաց և զբազուկս իւրեանց զպարանոցաւ իրերաց արկեալ ըստ օրինակի համստեղութեան երկաւորաց ։ Եւ ես 'ի գիշերի ջառնուին յանձն անջատիլ յիրերաց, և անդ էր տեսանել զնոսա. ընկողմեալ 'ի միում որոբանի՝ զթուռ և զլանջս իւրեանց սեղմեալ ընդ միմեանս՝ զձեռս զուլամբ իրերաց արկեալ և աղխեալ 'ի բազուկս իրերաց խոնարհեալ 'ի քուն ։

'Ի բանալ լեզուի նոցա՝ նախկին անունն զոր ուսան տալ իրերաց, էր անուշակ անունս եղբօր և քեռ. և քան զայս ոչ ինչ այլ քաղցր գիտէ անուանակոչութիւն մանկականն հասակ ։ Հրահանգութիւնն ձեռն ետ անձեցման նոքաքողքոջ մտերմութեան նոցին՝ ձկտեցուցանելով զայն 'ի լրումն փափուկս կարեաց իրերաց ։ Ո՛չ յետ բազմաց՝ ամենայն ինչ որ հայէր յառանին տնտեսութիւն, և փոյթ հանդերձելոյ զկերակուր նոցին շինական, եւ պաշտօն Վերգինիայ. որոյ գործն ոտէպ գովեստք և համբոյրք եղբօրն պակէին ։ Իսկ Պաւլոս՝ էր զի արօրէր զդա-

բատան իւրեանց ընդ Դոմիտիանոսի, և էր զի վա-
րէր զՀետ նորա 'ի Հաղագս՝ ունելով զվոքրիկ
զդակուր 'ի յուս. ուր 'ի յատանդելն Թէ դէպ
լինէր ինքեան նշմարել զբաղցրահոտ ծաղիկ ինչ
կամ զպտուղ անուշակ և կամ զբոյն ինչ Թռչ-
նոյ՝ Թող 'ի կատար ծառոց եղեցի՝ մագլցի ե-
լեալ ածէր զայն առ քուրիկն իւր։

Թէ դէպ լինէր քեզ պատահել մի-
ումն 'ի նոցանէ, պիտէր անշուշտ գրել եթէ
չէր միւսն անտի հեռի։ Արինչ յաւուր միւմ
իջանէի 'ի զոր արդ տեսանեմն 'ի լեռնէն, նրշ-
մարեցի զՎերգինիա 'ի սահման անդր դրաստին
վազս առեալ դէպ 'ի տուն. զգլխով զիւրն ար-
կեալ զլոգիկ՝ 'ի հովանի առնել ինքեան ընդ-
դէմ տարափոյ անձրևաց։ 'Ի բացուստ գնա մի-
այն գոլ վարկանելով՝ փութացայ 'ի Թիկունս
նմա հասանել. այլ ուրքան մեծ զարմանք կալան
զիս 'ի տեսանելն գնա ունիլ զձեռանէ Պաւլոսի.
որ և իսկ գլխովին ծածկեալ էր ընդ նոյն ամպ-
հովանեաւ. երկաքանչիւրքն ևս յանհնարին ծաղր
զգրգռեալ 'ի պատասարելն իւրեանց 'ի միասին
ընդ հովանեաւ իւրեանցակերտն ամպհովանւոյ։
Սկսալի դէմք երկոցունցն 'ի հողմառոյցն լոգիկ՝
ինձ յուշ ածին զորդիս Լեռայ՝ փակեալ 'ի մի-
ում խեցեպատեանի։

Ցատուկ պարապումն նոցա էր եթէ
զնարդ հաՀոյասցին և 'ի Թիկն հասցեն իրերաց.

քանզի զայլ իմն ոչ գիտէին ոչ զընթերնուլ և ոչ զգրել։ Ո՛չ երբէք խոյզ և ինդիր անցեալոց ամբոխեաց զմիտս նոցա. և ոչ հետաքննութիւն նոցին ձգեցաւ անդր քան զսահման ահա այս լերին։ Ո՛չ խակ բարժամտէին՝ եթէ անհունն տիեզերք ամփոփէին 'ի փոքրիկ կղզի իւրեանց. և ամենևին միտք և յօժարութիւնք նոցա ոչ երբէք բերէին ելանել քան զսահման նորա։ Փոփոխ խանդաղատանքն իւրեանց և մարցն իւրեանց պատաղեցուցանէին զնեղգործականութիւնս հոգւոց նոցին։ Ո՛չ երբէք ընդերկար պարապումն յանօգուտ մակացութիւնս քամեցոյց յաչս նոցա զարտօսր անկամութեան։ Ո՛չ երբէք ծանրաբեռնեցաւ միտք նոցա բարոյական վարդապետութեամբք՝ անպիտան սրտից տգէտ զչարութեանց։ Ո՛չ երբէք ուսան զմի՛ գողանարն, զի ամենայնն 'ի հասարակի էր առ նոսա. և ոչ զժուժկալ լինելն, զի պարզ կերակուր նոցա 'ի կամս նոցին էր ապատանեալ. և կամ զմի՛ սուտ ասելն, զի չունէին զաւելի զՀշմարտութիւնն գաղելոյ։ Ո՛չ երբէք ահեցաւ առոյգ միտք նոցա նկարագրութեամբք պատկերաց պատժոց պատուհասոց գանձելոց 'ի Տեառնէ վասն ստամբակ մանկանց. քանզի ընդ նոսա ծնաւ որդիական սէրն և 'ի մայրականն զԹոց աՀեցաւ։ Իսկ՝ որչափ առ Աստուածպաշտութիւնն, զամենայն զոր միանգամ ուսեալն էին՝ էր սիրել զնոս բոլորով սրտիւ. և

թէ 'ի տանն Աստուծոյ զերկար պաղատանս վեր-
առաքելոյ ջգտանէին պարապ, ուր և հաստանէին
թէ 'ի տան, թէ 'ի բացի, և թէ յանտառի,
անդէն առ տեղեաւն զկայ առեալ ամբառնային
'ի յերկինս զիւրեանց անարատ ձեռս և զմաք-
րեալ սիրտս առաքինականն գործովք:

Զայսօրինակ խաղայր անցանէր ա-
ւուրք նոցին մանկութեան ըստ օրինակի գեղե-
ցիկ աշալրջոց՝ որ յուսացուցանէին զլոյծառ օր:
Ապաքէն կցորդեալ էին ընդ մարց իւրեանց 'ի
հոգս գերդաստանին: Այն ինչ աչալուրջ ալքա-
զանն աւետէր զսիրեալ արևականն զիւր ոսկեՀա-
Հանչ գէսս ընդ երկնիւք՝ յառնէր Վերգինիա,
փութայր 'ի խնդիր ջրոյ 'ի մերձակայ աղբիւրն.
և 'ի դարձին պատրաստէր զնախաՀաշիկն: Եւ
եբրև ծագումն արևուն ելանէր գայր անկանէր
'ի վերայ անդորդանաց ժեռոյն՝ որք տարածեն
'ի վերայ ցանկին՝ ելանէր Արգարիտ ընդ որդ-
ւոյն իւրում և երթայր 'ի բնակութիւն տիկ-
նոջն տ'ալ Դավրի. ուր ամենեքին համախմբեալ
վերառաքէին զառաւօտու աղօթս իւրեանց յեր-
կինս: Ա՛յս պատարագ գոհաբանութեան յամե-
նայնում առուր կանխէր քան զնախաՀաշիկն՝
զոր յաՀախակի առ դրան խրՀթին ակամբ ա-
ռեալ ուտէին. բոլորեալ նստեալ 'ի վերայ
դալարագեղ սկզոց ընդ հովանեաւ ջղսխոտից.
որոյ՝ մինչ բերկրաշուարՀ զվանոց շառաւղն

մատուցանէին՝ պտուղքն քաղցրաճաշակ ընծայէին 'ի սեղան 'ի բնութենէ անտի հանդերձեալ և պատրաստեալ և սաղարթքն ափռեալ 'ի վերայ սեղանոյ զտեղին մեղմն ընուին։

Լիսլի և հոգեպարար մնունդք զվաղքաշ իմն ժրութիւն և զօրութիւն ետուն ոգւոց մանկանցս այսոցիկ։ որոց մաքրութիւն և անգործութիւն ոգւոյն ընթերցեալ լինիւր 'ի գէմս նոցա։ Դիտակն Վերգինիայ յերկոտասան ամի հասակին զգեցեալ ունէր զվայելչութիւն։ առատութիւն խարտեաշ գլխոց թլխի ածէին դիմաց նորա։ յոր խաժ ակունք և կորոլիսիկեայ շրթունք յաւելուին զմայլեցուցիչ իմն պայծառութիւն։ 'Ի ժամ բարբառելոյն բոցք հառանէին յաչսից նորա կայտառութեան։ և մինչ 'ի լռութեան նստէր՝ հայեցուածք նորա յերկինս 'ի վեր ձգեալ արտայայտէին զխորին իմն մտախոհութիւն կամ մանաւանդ և զգողտրիկ թաղծութիւն։ Ապաքէն՝ պատկերն Պաւլոսի հաւեալ էր պարզել ցուցանել զառնացի շնորհս վայելչականութեան։ Դրակաւ բարձր քան զՎերգինիա՝ շիկամարմին՝ արծռունկն։ և ակամտոլիք նորա սեաւ լինէին անշուշտ կարի թաւմանցիկ՝ երկուց հրայայտ աստղոց պէս՝ եթէ երկայնահեր արտեւանունք նորա ոչ թեւաքօղեալ ցուցանէին զնոսա անոյշս և հեղասամբոյրս։ Երբէք չունելով գնանգիստ՝ երբ և յանգիման լինէր քուրիկն իւր,

գնացեալ դադար առնոյր առ նովաւ։ Եւ այն ժամ էր տեսանել զնոսա։ վայելչականութիւնն, քաջ յարմարութիւնն դրակաց, և բոկիկ ոտք նոցա հերկեալք էին տալ քեզ երևակայել տեսանել զվանդակն յապիտակ կՀեայ անգրիանդ ինչ անկոի՝ ոմանց ծննդոցն Նէոբեայ։ Եթէ ոչ ակամողիք նոցին ցանկ նկրտեալ ընթեռնուլ 'ի դէմս իրերաց գեղոցը իմն ժպիտ՝ որ պատասխանեալ լինիւր և ևս սիրալիր ժպտմամբ հեշտութեան՝ 'ի գերևս հանէին զայս վարկած և ցուցանէին զնոսա յաւէտ երանելի երկնաքաղաքացիս՝ որոց բնութիւնն է սէր։ և որ չունին այլ պէտս բանից 'ի յայտնութիւն հայեցողական զգացմանս այսորիկ։ Իսկ տիկնոջն տ'ալ Դավրի օր քան զօր առաւելուին վիշտք և ցաւք ընդ մայրականն գորովոյ, 'ի նշմարելն զվայելչութիւն ինչ շնորհաց՝ զնորաբողջոջ գեղեցկութիւն իմն յաւուրց յաւուրս հեղանիլ զեղանիլ 'ի դէմս գոտերն իւրոյ։ Ստէպ ասէր ընդիս։ "Ո՞հ։ Եթէ հասանիցի ինձ զարդիս զկեանս վըՀարեալ, զի՞նչ ապա եղիցի իմայն Վերգինիայ անինչ և անպտղոյգ"։

Ունէր տիկինն տ'ալ Դավրի զՀօրաքոյր մի 'ի գաղղիա՝ վարսաղուն, մեծանուն, փայլթամ, անցեալ զաւուրքք և խիստ անմուէր։ Այնչափ անգութ և գժխեմ եղև սա առ դուստրն Եղբօր իւրոյ 'ի ժամ ամուսնանալոյն, մինչ զի

վՀռետաց որոշետաց Հաստատետաց տիկինն տ՛ալ Դաւ-
բի՝ եթէ ոչ ինչ աղէտք և ոչ ինչ թշուառու-
թիւնք Հարկէլ անգամ կարասցեն զնոքն գի-
մել առ այս ապառում և դժխեմ աղգական։
Սակայն փոյթ ՚ի գերև և ՚ի ջինչ Հան զայս
սէգ գժտմուութիւն մայրենին գորով։ գրեաց առ
Հօրաքոյրն իւր, եցոյց նմա զյաղագարՀ մահ առն
իւրոյ, զգաստելն իւրոյ ընծայումն յաշխարՀ և
զ՚ի յոր անկեալն էր իւր տագնապ և թշուա-
ռութիւն՝ տարակաց եալոյ յիւրոցն Հայրենեաց,
առանց օգնականի և ծանրաբեռնեալ դստերք
միով։ Այլ ՚ի զուր, այլ ընդ վայր։ ջերեն լսե-
լի բանք նորա։ սակայն և այնպէս թէ և ՚ի բը-
նուստ անդուստ սէգ և բարձրայօն, ոչ ինչ զան-
գիտեաց առաջի արկանել զանձն նախատանաց
և թշնամանաց։ և թէ և քաջիկ գիտէր զան-
նուէր կամս մերձաւորին իւրոյ ամուսնանալոյն իւ-
րոյ աղտաւ ընդ առն արդիւնաւորի այսմ՝ այլ ոչ
փարագնոտի, սակայն ոչ դղցաւ յբստէպ ստէպ
գրելոյ՝ դէտակն կալեալ ՚ի գուռթ շարժել ըզ-
նա գոնէ ՚ի վերայ Վերգինիայ։ Եւ այնպէս՝ հա-
ռուստ ամք անցին և չեգիտ զյոլտ մի հաստա-
տութիւն մտաց նորա։

Հուսկ ուրեմն ՚ի 1738 ամին, ե-
րիւք ամաք զկնի ժամանելոյ Շահսոյ Պուռատոն-
նէսին յայս կղզի, գիտաց տիկինն տ՛ալ Դաւբի ե-
թէ էր առ Շահսոյին թուղթ մի հօրաքեռն

իւրոյ։ Անխոյթ զանազանչնչութեամբն յորում գտանիւր՝ 'ի քթիթ ակն հեա առեալ պարկեցաւ 'ի նստահանդիստն Լուդովիկոսի։ Արայրենի ակնկալութիւն և ցնծութիւնն յաղթեցին պարտեցին ամէն փոքունց զգուշաւորութեանց, ոլք մաւնեալ մատնին՝ երբ միտք մարդոյ յուզեալ վերանան հզօրաւոր զգացողութեամբք։ Հօրաքոյրն 'ի նամակին նախատէր զնա լինիլ անգուիւրոցն ջարադիպութեանց 'ի պատճառս հարսնանալոյն Թափառականի ուրեմն և վատշուէր առն. եթէ՝ անվայելուչ սէրն ած և ընդ ինքեան և զիւրն պատիժ պատուհաս. և թէ՝ ըզյանկարծահաս մահ առն իւրոյ պիտէր վերագրել երկնիցն վրէժինդրութեան. եթէ՝ յոյժ բարիոքն էր աղղեալ հեռանալ մենիլ 'ի տարկղզի՝ քան ելանել 'ի գաղղիա յամօթ և 'ի նախատինս զիւրն առնել ընտանիս. և եթէ՝ տալով զրաւ բանից իւրոց՝ 'ի կղզւոջն ուր գաղթեալն էր, մի միայն սղերգք մնային տառապեալ։ Զայս օրինակ հերիք դարմանս կուտակելով 'ի վերայ դատեր եղբօրն իւրոյ՝ կնքէր զբանն իւր ներբողենիւ միով 'ի վերայ անձին իւրոյ. "Զերդևիլ փախչիլ խոյս տալ," կոկոմէր, "ասա յանհրաժեշտ ջարեաց՝ որ յամուսնութենէ անտի ծնանին, հաստատեալ կնքեալ էր մնալ ամուրեայ։" Զհշմարիտն ասել, յաւակն և ապառում իւր բնաւորութիւնն ուչ երբէք տե-

զի տայր, բայց եթէ զփարազունս ունիլ ինքեան զուգակից. և յոյժ փարթամ այն՝ տակայն իւր համբուն մեծութիւնն և ոչ յարքունիս անգամ հանդիսացաւ հերիք շլացուցիչ, առ 'ի հանդիսակշիռ առնել զայն ընդ գժխեմ տրամադրութեան մտաց և անյարիր դիտակի նորա. Յաւելեալ էր ևս 'ի վերջոյ նամակին, եթէ զկնի հասուն կշռողութեան՝ 'ի խնամս Շահապ տ'ալ Պուռտոննէսին ապսպարեալ էր զդուստրն եղբօր իւրոյ: Այն արդարև չէր սպասեալ յայսմանէ, տակայն այնուիկ ինն եղանակաւ որ զարդեա 'ի հասարակի է առ ամենեսին. և որ զբարերարն ևս ահռելի քան զյայտնի թշնամին առնէ, զի 'ի ջատագովութիւն անձին իւրոյ՝ դիզեալ բարդեալ էր անդթաբար զբարրանս և զբասրանս 'ի վերայ դստեր եղբօրն իւրոյ, մինչ առ երեսս կեղծէր գութք ունիլ 'ի վերայ չարադիպութեանց նորա:

Տիկինն տ'ալ Դավրի՝ զոր ոչ ոք թարց նախապաշարմանց կարէր տեսանել և չծնանիլ վասն նորա զկարեկցութիւն և զյարգանս, ընկալեալ եղև 'ի Շահապ տ'ալ Պուռտոննիսէն կարի ինն ցրտաբար. և իբրև նկարագրեաց առաջի նորա զիւրն և զիւրեան դստերն զաղէտ, ոչինչ ընդհատ յաւակնութեամբ ընկալաւ ըզպատասխանի՝ "Տէրոյք," ասէ, "զինչ մարթ է լինիլ—և այլ բազումք գոն կարօտաւորք—երո՞ւմ

ընդդէմ դարձար այսգոյն բառացի ընտանւոյ։ մեծի տգոտանաց անգու ես դու։"

Դարձ արար տիկինն տ'ալ Դաւրի 'ի խրՀելեն իւր։ սիրտն իւր տրսիէր ամենայն դառնութեամբ՝ որ յանյաջող եղեցն ծնանի։ Ընդ հասանելն 'ի տուն՝ անկաւ 'ի վերայ բազմականի մոջ։ և զընկենլով զնամակ հօրաքեռն իւրոյ 'ի վերայ տրապզին, "Ա'ւասիկ ուրեմն," գոչէ ցհամշիրակն իւր, "ահաւասիկ մեռտանամեայ անթարթափ ակնկալութեանն իմոյ տրիտուր։" Եւ զի 'ի փոքրիկ երեխանին ինքն միայն գիտէր զընթերցուլ, անգրէն 'ի ձեռս էառ ընթուղթն և հաւեաց ընթերցուլ բարձրաձայն։ Ուր ուրեմն յանկ եղ ընթերցուածն և գոչեաց Մարգարիտ։ "Ձի՞ կայ մեր և քոց ազգայնոց։ Ուրե՞մն բարձի թողի եղիք զմեզ Բարձրեալն խսպառ։ Նա է մեր մի միայն Հայր։ Թերևս ո՞չ մինչև ցարդ վայելէաք յերջանկութեան։ Առ ի՞նչ ապա այս քուք և թախծութիւն։ Երևի երթէ չունիս զարութիւն սրտի։" Եւ տեսանելով զտիկինն տ'ալ Դաւրի ցնդեալ յարտասուս՝ հեղու զինքն 'ի վերայ լանջաց նոյա։ և սեղմելով զնա, "Մտերիմդ իմ," գոչէ "բարեկամդ իմ։" այլ սակայն յուզմունքն իւր 'իսկ գելուն զխօսսն 'ի բերանի իւրում և հեղձուցիկ առնեն 'ի վերայ շրթանցն։

Բայց տեսիլ յարուցանէ Հարկանի Վերգինիա. և հաւէ մատուցանել 'ի շրթունս իւր և 'ի կուրծս մերթ զձեռս մօրն իւրոյ և մերթ Պարգարիտայ. այն ինչ Պաւլոս աչքք բորբոքելովք սրտմտութեամբ՝ գոչէ, ձեռն 'ի ձեռն Հարկանէ, դոփիւն դոփէ յերկիր՝ ոչ գիտելով զի՝ ոք երդիծանել ողբալի տեսարանիս զպատճառս: Այս ջայլ և շիւանքս այսոքիկ առօրին ածին զԴոմինկան և զՊարիամ 'ի տեղին խռովութեան. և հաւեաց փոքրիկ խուզն արձագանգս հնչեցուցանել խառնափնդոր ձայնից ողբոց. "Ո՞վ տիկին—տիկին բարի—տենչալի մայր իմ—մի՛ ողբայք:"

'Ի սիրասատար փորձոյ ատոի վարատեցան վարատեցան անհետ ուրեմն եղեն թախիծք տիկնոջն տ'լա Դաւրի. գիրկս ածէ Պաւլոսի և Վերգինիայ. և փարելով զնոքօք՝ ասէ. "Դուք ո՞վ սիրելիքդ իմ, դուք ծնուցանէք 'ի յիս զայս ամենայն՝ զոր տեսանէքդ՝ տրտմութիւն. և այնպէս 'ի ձէնջ վայն կախի իմ ամենայն բերկրութիւն: Այո՝ որդեակք իմ. թշուառութիւն ինձ 'ի հեռատանէ է ժամանեալ, և սակայն շուրջ պատեն զինև երջանկութիւնք:" Եւ չինչ ակամ եղեն այսմ Պաւլոս և Վերգինիա. այլ զսկանելով զնա խաղաղացեալ, այլ անդորրացեալ, ժամեն և փայփայեն զնա:—Ահա այսանակ դարձաւ նորոգեցաւ անդորրութիւնն միւս-

անդամ. և որ միանգամն անց՝ եցոյց զվաղանցուկ ինն փոթորիկ, որ միայն պիտեանայ ընծայել զնորոգ դալարութիւն գեղաշուարչն գարնայնոյ:

Տիկինն տ'ալ Դավրի՝ թէ և առ ընտանիս իւր զհաղորդութիւն կերպարանէր, և այնպէս երբեմն երբեմն հաղորդս առնէր զիս տուայտանաց և տառապանացն՝ որով սիրտն իւր Հնշեալ տառապէր:

Նազելի և համբոյր բոյս բարուց երկուց մատաղատունկ մանկանցս յաւուրց յաւուրս պարզեալ զօրանայր: Այն ինչ՝ յաւուր միում կիւրակէի՝ 'ի մերկանալ այդուն զգիշերն գնացեալ էին մարք նոցա կալ առաջի պատարագին յեկեղեցւոջն Սագուկ գրովի, նշմարեցին երկոքին աքա զզանդիկ ոմն ընդ հովանեաւ ջրաստոտիցն՝ որ հովանի առնէր ձեռակերտին իւրեանց: Տառապեալս այս այնպէս ծիւրեալ ծմրեալ և ծնկեալն էր, մինչև երևիլ գոգ ուրուական ինն ոսկերոտի. ջունեալ զձորձ՝ քան 'ի պատառոյ անթափ կտաւոյ ինչ, զոր 'ի խոտորնակս արկեալ էր 'ի վերայ աղդերաց իւրոց: Եկն սա անկաւ առ ոտս Վերգինիայ, որ հանդերձէր զնախաճաշիկ վասն ընտանեաց: "Ողորմեաց ինձ," գոչեաց, "ողորմեա ինձ տիրուհի. գթա 'ի վերայ թշուառացելումս: Ապաքէն ամիս մի թափառիմ 'ի միջի լերանցս, գոգ-

ցեռ առ դուրս մահու գրաւեալ 'ի սովու, և ցանկ հալածեալ յորսորդաց և 'ի բարակաց նոցին: Փախուցեալ եմ ես 'ի տեառնէ իմմէ՝ 'ի վարթամ և սուարիմ անկագործէ միոջէ Սեաւ գետոյն. և որ զայսօրինակ անգթացեալն է 'ի յիս". ցուցանելով զմարմին իւր ջարաչար ապիսացեալ 'ի թոսից: "Ապաքէն," յաւել ասել, "յանդունդս ծովու խորասոյզ զիս առնել փութայի, այլ իմանալով եթէ դուք ամոտ էք՝ ատացի ընդիս, յորմէ հետէ դեռևս գոն ոմանք սպիտակ անձինք քաղցրաբարոյք յերկրիս յայսմիկ, չպիտի ինձ այժմուս անձնամատն լինիլ:"

Խռովեալ Վերգինիայ 'ի յայս յետին բանից նորա, "Մի՛ աւաղեա՛կ դու մի՛," ասէ, "մի՛ ինչ վհատիր. ահա՛ քեզ հաց." և եդ առաջի նորա զհանդերձեալ նախաճաշիկն. զոր ողորմելին 'ի քթիթ ական եկեր ոպառեաց: Իբրև շինչաւ քաղց նորա՝ եհարց ցնա Վերգինիա, եթէ հաճոյ էր զի ինքն իւրոյին գնացեալ աղերս առաջի տեառն նորա արկանիցէ վասն նորա: "Անշուշտ," յաւել ասել, "քոյ վիճակն 'ի գութ շարժեացէ զնա:—Եկ ուրեմն ցոյց ինձ զճանապարհն:" "Հրեշտակդ երկնայինն," գոչեաց ջնարգին, "հետևեցայց քեզ ուր և կամք քոյ:" Խնդրեաց ուրեմն Վերգինիա յեղբօրէն իւրմէ ընկերակցիլ ընդ ինքեան: Զանդիկն եհատ նոցա Հանապարհ ընդ

ոլորտապտոյտ և տարժանելի շաւիղս, ընդ մա-
ցառս և ընդ լերինս՝ ընդ որս կարի տարժան-
մամբ ելանէին 'ի վեր, և ընդ գետակս՝ յանց-
ցանել ընդ որս թաղեալ լինէին ընդ ջրով։
Հուսկ ուրեմն ժամանեալ հասին առ ստս գա-
հի միոջ յերկերս Սեաւ գետոյն։ Անդուստ ու-
րեմն ականեցին զկանեցին զգեղեցկագիր տուն մի
շուրջ շրջանակի ածեալ անկագործութեամբք,
և զբազմութիւնս ստանկաց՝ մատուցեալ յանց-
նիւր գոլծ։ Տէրն նոցա՝ ծխաքարշ 'ի քերա-
նի և տաՀկնակ 'ի միում ձեռին՝ Հեմն ա-
ռեալ զգնայր 'ի միջև նոցա։ Էր սա հասա-
կաւ բարձր և վտիտ. դէմքն՝ թխատիպ. ա-
կանողիքն՝ խորունկ. յօնքն՝ սեաւ կցակս ընդ
միմեանց։ Մատեաւ Վերգինիա զձեռանէ ունե-
լով զՊաւլոսի. և կարի շփոթեալ՝ աղերս մա-
տոյց առաջի նորա շնորհել վասն սիրոյն Ա-
ստուծոյ ողորմելի ստանկին. որոյ քանի քայ-
լիւք հեռի կայեալ 'ի թիկանց կուսէ՝ գլխա-
վին զդողանի էր հարեալ։ 'Ի սկզբանն անդ՝
կոկոզ ելքս այս և ոչ մտադիր անգամ եղև ման-
կանցն՝ զորս 'ի թամբատ ձորձս տեսանէր։ Իսկ՝
իբրև քաջ հասու եղ վայելչութեանն Վերգի-
նիայ և խարտեաշ թաւ գլխոց նորա՝ զերծե-
լոց 'ի ներքուստ անդուստ երկնագոյն գլխանոցին,
իբրև լուաւ զդաշն հնչիւն ձայնի նորա՝ որ
թրթռայրն, որպէս և ինքն իսկ գլխավին զդո-

զի հարեալ յաղերսեն զերկայնմտութիւն նո-
րին. 'ի բաց էառ զծխաքարշն 'ի բերանոյ իւր-
ոյ և ամբարձեալ զխարազանն երդուաւ դառ-
նաշունչ իքս ահեղ ինն երդմամբ շնորհել
ստանկին ոչ վասն սիրոյ Բարձրելոյն, այլ նո-
րին՝ որ յիւրմէ անտի զԹողութիւն հայցէրն:
Ուրեմն նշանացի արար Վերգինիա զանգկին մեր-
ձիլ առ տէրն իւր. և ինքն առ ժամայն եկ
մեկնեցաւ անտի դառնալ ընդ Պաւլոսի 'ի
տուն:

Եկին ընդ գահաւանգն ընդ որ ի-
ջեալն էին յառաւօտուն. և շահեալ զարտեանն՝
հանգեան ընդ հովանեաւ ծառոյ միոջ նքթեալ
նքողեալ նկուն եղեալ յաշխատանաց՝ 'ի քաղ-
ցէ և 'ի ծարաւոյ: Ընդ մերկանալն աշալրջոց
եղեալ էին 'ի տանէ նօթի, և հատեալ զհա-
նապարհ հինգ փարսանգաչափ: "Սիրելի Քաւ-
րիկ," ասաց յայնժամ Պաւլոս, "ապաքէն անց
գնաց ընդմիջեցաւ օրն. և հաւատեաւ գիտեմ
զի նքթեալ եւ դու և ծարաւի. ուտեստ ինն
չկայ մեզ գտանել ստէն. բէր ուրեմն, եկ ի-
ջցուք միւանգամ 'ի լեռնէս և հայցեսցուք 'ի
տեառնէ զանգկին զհարակ ինչ:" "Քաւ, եղ-
բայր իմ քաւ" պատասխանեաց Վերգինիա.
"քաւ լեցի ինձ այդ. դժնեայ գէմք նորա զմեծ
ինն զըմբաղ ծնուցանեն ինձ. յուշ լեցի քեզ
զոր միանգամ մայրն մեր ասէր երբեմն. "Հանց

անօրինի քար է 'ի բերան մարդոյ։" "Եւ զի՞նչ ասա արասցուք," կրկնեաց Պաւլոս. "ում և պէտ ծառքս՝ զոր տեսանեսդ, ջան ինչ պտուղ կերլի. և ևս՝ ոչ գոյ ատէն թթուիկ[3] և կամ լեռնն որով զքեզդ կազդուրեալ։" Մինչ-չև էր զրաւ տուեալ բանից իւրոց և ահա լուան զլսոխոնջիւն ինչ ջրոց ահագին դդչմամբ հոսելոց 'ի մերձակայ քարաժայռէ միոջէ։ Փութան Հեպեն հասանեն անդր՝ և անցուցեալ զպապակ իւրեանց յականակիտ 'ի յաղբիւրն, ժողովեն զդոյզն ինչ կոտիմն առ ափամբք վտակին բուսեալս։ Ապա յածելով 'ի խնդիր այլոց իմիք հզօր անդեան՝ նշմարեաց Վերգինիա ըզմատաղատունկ արմաւենի՝ մի։ Պտուղն այսր ծառոյ բերէ զնմանութիւն կաղամբի՝ և է 'ի ծագս ծառոյն պատատեալ իւրովքն տաղարթիւք. և ևս՝ է քաղցրահաշակ և կազդուրիչ։ Կանթեն այսր՝ չէ ինչ հատ քան զսրուտս մարդոյ, և այնպէս ունի քան զվաթսուն ոտնաչափ բարձրութիւն։ Փայտն շարամանեալ յարամուր թելից և պատեանքն այնչափ կարծր և կուռ՝ մինչև գլացուցանել զդալապս. մինչ զի չկայր Պաւլոսի և ոչ ինչ դանակ։ Որոշեաց ուրեմն հուր հարկանել զարմաւենեաւն, և ահա այլ նոր իմն խութք ելին ընդ առաջ. չունէր Պաւլոս զպողոպատ առ 'ի հատանել զհուր. և կըզգլնն ողջոյն այսր՝ երիզուտ և անկոխելի, և այնպէս

չաւատամ եթէ գոցի երբէք գայլախաչ։ Զի-
արդ և ինչ՝ հարկն հնարաւոր առնէ զամենայն.
և շատ պիտելի իրս գտին արք կարօտաւորք։
Հաստատեաց Պաւլոս առտակել լուցանել ըզ-
հուր ըստ տարասի Հնդկաց։ Ա՛ռ զսրածայր վէմ
մի, երբաց զփոքրիկ սոր յոստս ջրացեալ ծառոյ
միոջ՝ զոր կալաւ ընդ մէջ ագռամէջից իւրոց. ա-
պա սրեալ զայլ իմն ջոր ոստ այլասեռ ծառոյ՝
և եդեալ զսուր ծայրն 'ի փոքրիկ սորն զոր ու-
նէր ոստամբ, հաւեաց արագ արագ պտոյտքեալ
զայն 'ի մէջ ձեռաց իւրոց. որ վայրիկ մի ևս և
ծուխ արձակեաց. և կայծակունք հրոյ թօթա-
փէին 'ի շփման անդ երկուց ծայրիցն։ Յետ ո-
րոյ շեղջեաց Պաւլոս շուրջ զարմանէնեաւն
զչոր խոտս և զտերևս և հուր հար զնովաւ. որ
'ի թարթ ական անկաւ գլորեցաւ յերկիր։
Զհուն ետ և հուրն 'ի կոնոպտել զերկայն՝ ըզ-
թաւ և զսրածայր տերևան, 'ի վիշն որոց թա-
գուցեալ կայր կաղամբն։

Զկէս կաղամբին հմահում կերին
Պաւլոս և Վերգինիա. և զմիւս կէսն խորովեալ
'ի վերայ կայծականց, զոր գտին և ևս անուշակ։
Ուրախութեամբ ուտէին զայս աստուած կերա-
կուր՝ յիշելով զբարեբարոյն գործ զվնարեալն
յտուաւօտուն. այլ իբրև զմտաւ ածէին զտագ-
նապ և զվիշտս՝ զոր այսչափ ընդերկար բացա-
կայութիւնն իւրեանց հարկիւ պատճառէր մարդ

իւրեանց, բերկրութիւն նոցա 'ի դառնութիւն վսխարկիւր։ Ստէպ կրկնէր Վերգինիա զայս բան. կրկնէր և վերստին դառնայր 'ի նոյն. իսկ Պաւլոս՝ որ զգայր յանձին զնոր ինն զզօրութիւն Հաշակմամբ պաղոյն՝ յուսադիր առնէր զնա նախ քան զսարսաժամիլն աւուր լինիլ 'ի տան։

Ցուշ եղև նոցա զկնի Հաշուն՝ եթէ ջունէին զոք կարասկետ ռահացոյց. և ինքեանք ևս տգէտ էին զՀանապարհէն։ Պաւլոս՝ զորոյ զոգին ոչինչ խոչ և դժուարութիւն նկուն առնել մարթայն, "Սիրելի Քուրիկ," ասէ ցՎերգինիա, "զարդիս զվիշաւորբս Հնխր առնու արփիակն 'ի վերայ խրՀթին մերոյ. տես ահա անդ զլեառն Եռասայրի ընդ որ ինքաք յառաւօտուն. քեր ուրեմն էկ ելցուք 'ի յայն։ Օ՞ն էկ 'ի ջու անկցուք։" Ինչն Պաւլոս և Վերգինիա ընդ դարևանդն Սեաւ գետոյն 'ի Հիւսիսոյ կոլմանէ. և զմիով ժամաւ զկնի Հանապարհ հատեալ հասին առ եզերս լայնածաւալ վտակի մոլ։

Սեծ մասն կղզւոյս նա և զարդիա իսկ այնչափ անծանօթ է մեզ, մինչ զի և յոգունց գետոց և լերանց ջունիլ իսկ զանուն։ Գետս այս՝ առ ամբարտակաք որոյ ուղևորքն մեր արձանացեալ կանգնէին՝ փրփրածին Թառալագլոր հոսէր խաղայր 'ի վերայ ապառաժից։ Շառաչիւն ջրոցն այնպէս ստատիկ պակոյց զՎերգինիա, մինչ զի զոտս 'ի հունն անգամ մխել իշխել չստա-

կէր։ Առ այսր աղագաւ եբարձ զնա Պաւլոս 'ի գիրկս իւր, և զայս օրինակ ծանրաբեռնեալ էանց ընդ դիւրասաղլաց հոնն գետոյն՝ առ չինչ գրելով զկատաղի սառանչիւն ջրոցն։ "Մի լեցի քեզ ահիւ հարկանիլ," ասէ ցՎերգինիա. "զքեզ յիմ գրկի ունելով մեծ ևս զօրութիւն զգամ։ Եթէ սամարտակոս և վէս բնակիչն այն Սեաւ գետոյն ժխտէր քեզ զներուսին զանդկին, անշուշտ միայնամարտէի ընդ նմա։" Ընդ ո՞ւմ," գոչեաց Վերգինիա. "ընդ անօրէ՞ն և անասնուած առն այնմիկ... Ո՞վ Երկինք. որպիսի՞ վտանգ. որպիսի՞ փորձութիւնք։ Բաբէ՞։ Ո՞վ, որչափ դժուարին է զբարիս առնել. և զի՞ է զի այսչափ դիւրին է չարագործութիւնն։"

Իբրև անց Պաւլոս ընդ հոնն, ցանկայր զայս օրինակ բեռնաւորեալ երթալ ընդ նոցս իւր. և չինչ երկուանալով զօրանալ ընդ այսու բեռամբս ելանել ընդ լեառն Եռասայրի՝ որ ապաքէն կիսով խրատախաւ տակաւին հեռի էր. այլ ընդ հուպ քամեցաւ 'ի յուժոյ. ուստի հարկեալ 'ի վայր եդ զբեռն իւր և պառակեցաւ առ կողմամբ նորա։ "Սիրելի՛ եղբայր," ասէ յայնժամ Վերգինիա, "ապաքէն մերձենայ արփիակն 'ի մուտս, և ի՛նք 'ի քեզ տակաւին զօրութիւն ինչ վերադիմացեալ. իսկ ինձ չի՛նք և ո՛չ յոլտ մի. հապա սիրելի՛դ իմ, բեր թո՛ղ զիս այսրէն և դարձ դու 'ի տուն առ 'ի զվարանս մարդ

մերոց փարատել։" . . . "Քա՛ւ լեցի ինձ այդ քուրիկ," ընդմիջեաց Պաւլոս, "քա՛ւ լեցի ինձ այդ հեռանալ մեկնիլ վՀարիլ 'ի քէն։ Գիշերն եթէ 'ի վերայ հասցէ մեզ 'ի Հաղագի աստ, հարից ես զՏուր, տապալեցից զմիւս ևս արմատենի, տաց քեզ զկաղամբն և տերևովքն քեզ ծածկոյթ կազմեցից 'ի գիշերոյն պահպանութիւն։" Եւլով տակաւիկ մի ոգի առեալ Վերգինիայ՝ կոՀոպէ 'ի բունոյ ինչ հնացեալ ծառոյ կքելոյ յամբարտակին վերայ զերկայնածիգ տերև ինչ եղջերալեզուի։ Այսքիւք տերևովք կըկեաց զտեսակ ինն կիսասրունգ օդի, որով պատեաց զներբանս ոտից իւրոց՝ թաթաւեալս յարեան 'ի խստութենէ դարբուկ Հնանգարհին։ զի առ մեծ անձկանացն առնելոյ զբարի՝ զմոռացութեամբ էր հարեալ 'ի շտապն անդ առնուլ զիւրն տանտալիկ։ Հովացեալ ոտից նորա 'ի զովարար անտի տերևոց՝ քշտեաց զստեղն մի եղեգան և հաւեաց վարել զգնացս իւր՝ յենլով միով ձեռամբ 'ի ցուպն և միւսովն 'ի Պաւլոս։

Հաւ արարին ուրեմն յուշիկ յուշիկ և խոշտալով ընթանալ 'ի միջև անտառին, և ահա կորեաւ չքացաւ անհետ եղև տեսութիւն Եռասայրի լերինն՝ որով ուղղին զգնացս իւրեանց, և ակամն արևուն 'ի մուտս խնարհելոյն 'ի բարձրութենէ անտի մայրաց և թաւախիտ ոստոց նոցին։ Ուանց տեսանելոյ զայն զարտու-

զերցան ուրեմն յարաՀետ ՀանապարՀէն ուր էին, և անկան յանելանելն իմն գոգցեաս լաբիրինթոս։ 'Ի նիստ արար Պաւլոս զՎերգինիա՝ և ինքն վազս առեալ շամբուշ վարանէր աստ և անդ զելս ինչ 'ի դժուար ելանելեացն գտանել, և այնպէս Հար և ոչ ելինչ կարողացաւ գտանել։ Եւ տարա Պաւլոս 'ի կատար ծառոյ միոջ տարժանմամբ՝ ուստի ակն ունէր գոնէ զեռատայրին նշմարել. տակայն որ միանգամ աչաց նորա երևեցան յանդիման, էին ոստք մայրեաց, զոմանս որոց ներկեալ էր արփիակն 'ի մուտս՝ 'ի գոյն ոսկեթոյր։ Արդէն ստուերք լերանց անկեալ էին 'ի վերայ Հաղագին։ Հաւեաց Հողմն լռել որպէս 'ի պահ երեկի։ Լռութիւնն խորին տիրեաց ահռելի անտառին. և միայն եղջերուաց՝ որք եկեալ էին թերևս անդրէն զՀանգիստ խնդրել՝ զնա խռովէին ձայնք։ Վարկուցեալ Պաւլոսի երթէ որսոնք ոմանք լուիցեն զձայնն իւր, տկտաւ կանչել կարեաք ջոսի. "Եկայք, եկայք 'ի թիկունս Վերգինիայ։" Այլ տակայն գանգիւն Հաղագին և երթ պատասխանի արար կանչմանն նորա կրկնելով կրկին, "Վերգինիա, Վերգինիա։" Յուսակտուր եղեալ Պաւլոսի Հուսկ ուրեմն իջանէ 'ի ծառոյն՝ յոգիս տպաստան եղեալ յաշխատանաց և 'ի սրտին տաղտապանաց. և տկտաւ խորհել ընդ միտս երթէ զկարդ Հնար լինէր զգիշերն յապահովի յանտառի անդ անս-

ցուցանել։ Ո՛չ գոյր անդէն ոչ զուարար վտակ, ոչ արմատենի և ոչ իսկ ջր ոստ ինչ ծառոյ որով հնարել հարկանել զհուր։ Զգացեալ ուրեմն զթալութիւն անձին իւրոյ, սկսաւ նայ-ապէս յոգւոց ելանել։ Զայս տեսեալ Վերգի-նիայ, "Ո՛ւ լայր," ասէ, "եղբայր իմ, մի՛ քանքարտար։ քոյդ քուք ինձ մահ պատճառեսցէ։ Ես իսկ եմ արդարև քոյին ցաւոցդ պատճառ և ամենայն վշտաց՝ զոր արդ իսկ կրեն մարքն մեր։ Ո՞վ անտանելեացս, տեսանեմ զի և ոչ զբարիս անգամ պարտ է մեզ վճարել առանց ծնողացն մերոց գիտութեան։ Ո՞վ անխոհեմութեան։" զայս ասացեալ տեղն ետ արատուաց։ Եւ ապա "Ա՛կ եղբայր իմ," ասէ ցՊաւլոս, "Ա՛կ յաղթիս կացցուք առ տէր, և նա լուիցէ մեզ։"

Մինչչև էին յամբովկ ազթիցն ժամանեալ, յորժամ լուան զհաչիւն շան միոջ։ "Շունս այս՝" ասէ Պաւլոս, "որոորդի ուրեմն է որ եկեալն է ատոէն դարանամուտ լինիլ եղ-ջերուաց։" Այրիկ մի զկնի հաղեաց շունն միւս-անգամ և ևս ուժգնութեամբ։ "Անշուշտ," գոչեաց Վերգինիա, "զՊիտիլէն լսեմ ես... այն արդարև մեր շան ձայնն է այս—ուրե՞մն ոչ՝ չափ մոտ եմք բնակութեանն մերում. առ ոտս իսկ մերո՞ւմն լերին։" Այրիկ մի ևս և երկն եկաց Պիտիլէ առ ոտս նոցա՝ հաչելով ոռնալով

կծկնծելով և ցեռտելով զնոսա քծնութեամբք իւրովք։ Զև ևս զապշութիւնն իւրեանց վարատեալ էին 'ի սպառ, յորժամ տեսին զԴոմինկոն հեռս առեալ թասելով մերձենալ առ ինքեանս։ Տեսիլ այսր ալևոր հաւիշկիս՝ յոլոյ յառաւել խնդութենէն արտասուք քամէին յաչաց՝ ելոյծ և զնոսա 'ի դառնագին արտասուս առանց ատակելոյ և զբան մի արտասանել։ Զգաստացեալ ապա Դոմինկոնի, "Ո՞վ ազնիւ մանկուանք," գոչէ, "ո՞հ թէ յինչպիսի 'ի վիշտս էք զմարս ձեր խորասուզեալ։ Ո՞վ քանի զարմանք կալան զնոսա, յորժամ դարձ արարեալ յեկեղեցւոյն՝ ուր և ես գնացեալն էի ընդ նոսա՝ ոչ գտին զձեզ 'ի տան։ Եւ ոչ Մարիամ՝ որ ոչն մի հեռի Հասպաղեալն էր 'ի գործ՝ ժամանեաց ցուցանել մեզ եթէ ուր էիքն։ Վաղս առի ուրեմն յայսկոյս և յայնկոյս տնկագործութեանն՝ 'ի միոյ 'ի միւսն ելեալ ծայր։ տակայն ընդունայն եղեն ջանք իմ ամենայն 'ի գտանել զձեզ ուրեք։ Հուսկ ուրեմն բերի զՀնոտիկ հանդերձս ձեր։ ցուցի զնոսա Պիտիլէին։ որ իբրև թէ հասու եղեալ մտաց իմոց՝ խոկոյն սկսաւ հոտոտել զՀետս ձեր։ և հանեալ զնս՝ անընդհատ շարժելով զձեռն իւր տարաւ 'ի Սեաւ գետն։ Անդ ուրեմն լուայ 'ի տնկագործէ միոջէ, եթէ յառաւօտուն դարձուցեալ էիք նմա զզանդկուհին իւր և ինքն շը-

նորհեալ էր ձեզ զներումն ստանկին։ Այլ՝ որ-
պիսի՞ ներ ումն, չգիտեմ. տեսի զթշուառականն
պնտեալ կաշկանդեալ շղթայիւք 'ի կոնջ փայ-
տի, և երկաթի անուր եռաձղանի արկեալ
զպարանոցաւ նորա։

"Անդուստ ուրեմն կարապետաց ինձ
Պիտիլէ՝ անդղակի հոտառութեամբ 'ի կատար
բարձրաւանդակին Սեաւ գետոյ, ուր զտեղի
առեալ հաշեաց կարեօք ջուր։ Այս էր առ կար-
կաշառահ վտակի միոջ, առ երի տապալեալ ար-
մատենուոյ միոյ, հուպ առ կրակ ինչ որ տակա-
ւին արձակէր զծուխ։ Հուսկ ամենայնի բե-
ռեալ էած զիս ատտ առ ձեզ։ Զարդիս հուպ
եմք մեք առ ոտս Եռասայրի լերինն, ջրիւք
փարատնգաւ տակաւին հեռի 'ի բնակութենէ
մերմէ։ Է՛ առիս հոգեպահ կերակուր, առէք
կերէք և զօրութիւն զգեցարուք։ Ապա եդ ա-
ռաջի նոցա զպլակինդիս և զմիրգս և զմեծ դդում
մի լցեալ օշարակաւ՝ զոր մարք նոցին էին յօ-
բինեալ 'ի գինւոյ, 'ի ջրոյ, 'ի հիւթոյ լեմնի,
'ի շաքարէ և 'ի նարգիլակէ։ Յոգւոց ելանէր
Վերգինիա իբրև յուշ ածէր զողորմելի ստան-
կուին և զվիշտս՝ զոր պատճառեալ էին մարդ
իւրեանց։ "Ո՞վ երկինք," գոչէր, "ո՞վ թէ
օրպէս դժուարին է զբարիս առնել։" կրկնէր
ստէպ զայս բան Վերգինիա, կրկնէր և 'ի նոյն
կրկնակի դառնայր։

Այն ինչ դեռ կազդուրէին տաքս, հուր եհար Դոմինկոն. և ժամանեալ գտանել 'ի միջի ժեռիցն զտեսակ իմն կորչացեալ փայտի, որ դեռ այն ինչ գալարագեղ՝ վառի և բորբոքի հաճանչս արձակելով, արար նովաւ ջահ և ելոյց. արգէն ելով ժամ շլացութեանն հաւուց: Իբրև հանդերձեցան կապմեցան՝ գօտի ածին ելանել յուղի անկանիլ, և ահա այլ նոր իմն ել կրէին ընդ առաջ. Ոտք Պաւլոսի և Վերգինիայ ջարաչար այտուցեալ՝ զգնալ շզօրէին: Ո՛չ գիտէր և ո՛չ կարէր Դոմինկոն բացորոշել՝ թողուլ զնոսա առ տեղեաւն և երթալ յայլուստ վիպն ածել, եթէ անդէն առ տեղեաւն զգիշերն անցուցանել. "Ափսո՜ս, հազար ափսո՜ս՝" ասէ, "ժամանակին այն, երբ զձեզ զերկոսինդ 'ի միասին յիմ գիրկ ունելով շրջէի համարձակ: Իսկ արդ՝ զի դուք յարբունս տիոց էք ամբարձեալ և իմ ցալիս ծերութեանն համբուրեալ:" Դեռ 'ի տառամուութեան յուզիւր միտք նորա, վարանէր դեռ 'ի միտս Հայր ինչ գտանել, յորժամ քան քայլուք հեռի նշմարին ջոկք Սահրուն Հնդկաց: Պարապետ ջոկոտին յառաջ մատուցեալ խօսիլ սկսաւ ընդ Պաւլոսի և Վերգինիայ: "Խաղաղութիւն ընդ ձեզ," ասէ, "մի՛ ինչ խռովեսջիք իմով յանդիմանութեամբ: Զէ ինչ յինէն թաքուն բարեբաստութիւնն՝ զոր 'ի սեր

կեանս արարիք աւուր. այժ՝ տեսաք զձեզ յա-
ռաւօտուս անցանել զանդկաւ մով Հանդերձ
Սեաւ գետոյն։—Եւ գիտեմք զի գնացիք գուրթս
արկանել առ Նորա առաջի անօրէն տեառն Նո-
բին. և 'ի փոխարէն այսր բաղելաւութեանն
ձերոյ 'ի վերայ ուսոց մերոց բարձեալ ածցուք
զձեզ 'ի խրՀիթն ձեր։" Ցանկն արկանել
Նորա զնշան՝ ջրբք 'ի յաղթանդամանցն յառաջ
մատուցեալ կազմեցին զսարսս ինն դարգՀի յոս-
տոց ծառոց և 'ի բաղեղանց. յորում 'ի Նիստ
զՊաւլոս և զՎերգինիա ալարեալ՝ բարձին ըզ-
Նոսա 'ի վերայ ուսոց իւրեանց։ Դամինկան կարա-
պետէր Նոցա զառաջեաւ տանելով զջահ. և
ինքեանք յառաջէին 'ի միջի ցնծութեան պար-
ուակին. որք երգս առեալ օրհնութեան՝ եր-
գէին 'ի ցոյց բարեբաղութեան Նոցա։ Շարժեալ
Վերգինիայ 'ի տեսարանէ աստի՝ "Ո՞ երդայր
իմ," գոչէ ցՊաւլոս, "ոչ երբեք՝ ո՞հ. ոչ ան-
վարձատրեալ թողուցու Աստուած զբարեգոր-
ծութիւնն։"

Ապաքէն զգեցեալ էր այերաց ըզ-
մեայլ արջնաթոյր յորժամ մերձ եղեն առ ոտս
լերինն, յորոյ 'ի կատար շեղջ շեղջ արկեալ
էին խարոյկք։ Ո՛ւր ուրեմն հաւեցին երանել
'ի վեր, յորժամ լուան զբարբառս որ գոչէն.
"Ո՞վ որդեակք իմ, դուք էք։" "Այո, այո."
պատասխանեցին սոքա զանդկաքն Հանդերձ. և

անդէն առ Նմին տեսանէն զմարս իւրեանց Մարեմաւ Հանդերձ վազել առ ինքեանս՝ զլուցեալ 'ի ձեռին ունելով զշերտս։ "Ուստի՞ գայք որդեակք իմ," գոչեաց տիկինն տ'ըս Դաւրի. "բարէ՞. յորպիսի՞ տագնապս խորասուզիք զմեզ։" "Գամք մեք՝" դարձոյց Վերգինիա, "'ի Սեաւ գետոյ անտի, ուր գնացաք աղերս արկանել յերեսաց տառապեալ Մահրուն զանդկի միոջ, որում զառաւօտու նախաճաշիկն մեր ետու կերակուր. զի այնպէս լկեալ նքթեալ և ծրմրեալն էր 'ի սովու, զի արհօրք օրհասին Հախր առնուին զգլխով նորա. և Մահրուն Հնդիկքս սաքա ածին զմեզ 'ի տուն։" Գիրկս էարկ տիկինն տ'ըս Դաւրի դստերն իւրում առանց ատակելոյ ասել և ոչ ինչ. իսկ Վերգինիա զգալով զգիմաց իւրոց զթանալն յարտասուաց մօրն իւրոյ՝ գոչէ. "Այո՛ մայր իմ, հատուցանես ինձ այժմուս ընդ ամենայն խստութեանցն՝ զորոց 'ի սերկեանս միայն առի գչափ։" Մարգարիտ ևս յանիշտակեալ 'ի ցնծութենէն գիրկս ածէ Պաւլոսի։ "Եւ դու որդեակ իմ," գոչէ, "դու ևս զգոլծ մի բարի եղ վՀարեալ։" — Իբրև ժամանեալ Հասին 'ի դաստակերտս իւրեանց, արկին առաջի Հնդկացն լիաձեռն սեղան. որ դարձ արարին 'ի Հաղագս իւրեանց յետ մաղթելոյ զերկնայինն օրհնութիւն ի ջանել 'ի վերայ բարեբարոյ Հերմակ անձանցն այնոցիկ։

Ամէն օր ծագէր սոցա օր երջանկութեան և անդորրութեան։ Ցաւակնութիւն և նախանձն ոչ երբէք խռովեաց զանդորրութիւն նոցին։ 'Ի կղզի ատ՝ ուր որպէս և յայլ ամենայն Բոպէաղնեայ հատուածս ամենայն ոք անյագ ցանկութեամբ մտանէ զհետ ձամձամ և վիճ պատմութեանց՝ սոցին առաքինութիւնն՝ նա՝ և անուանն իսկ չէր ումեք ծանուցեալ։ Միայն իբրև ուղևոր ոք յանցս Սադուկ Գրովի ինդրէր 'ի տուարածականաց ոմանց զի՞ ոք լինիլն բնակիչ 'ի խրՀիթս յայսոսիկ՝ առնոյր ըզպատասխանի ևս և յայնոցիկ ոչք Հանաչէին զնոսա՝ "Անձինք բարեբարոյք։" Զայս օրինակ ամենախածն մանիշակ թաքեալ ընդ թըփովք մացառաց բուրէ զՀոտ անուշլոց՝ մինչ ինքն ճոայ անտեսանելի։

Բարեգործութիւնն առ ինկաւոր տունս այսոսիկ երևէր առաջին վաղՀան մարդկայինս կենդանութեան։ Մենաւորութեանն քոյս 'ի շքեղեցուցանելոյ զբարեսէր զնոցին զվիտս և կամ վիսացուցանելոյ զնոցին բարուց զբոյս՝ ազատական թողեալ էր զնոսա առ ամենայն գողոլիկ զգածմունս։ Խոկմունք զբնութենէն բերկրեցուցանէին զվիտս նոցա Աստուածային յափշտակութեամբք։ Երկիրպագանէին բարութեան այնմիկ Նախախնամութեանն՝ որ զօրացուցեալ էր զինքեանս շնորհել առատութիւն և

լիութիւն անալոցագոյն վայրաց և զգեղեցկութիւն դարբկաց. և ևս՝ վայելել զայն ամենամաքուր և պարզ բերկրութիւնն՝ որ միշտ հաճոյական է և նորանոր։

Առաւել կորովի էր և ուշիմ Պաւլոս յերկոտասան ամի հասակին, քան զԵբրոպայիս հնգետասնամեայս. սեթևեթեր պՀնազարդէր զմնկագործութիւնն իւրեանց՝ զոր Դոմինկոն միայն արօրէր։ Կրթէր ևս զՀետ նորա 'ի մերձակայ Հաղագս և կարՀնովին քանցէր զնորաբողբոջ տունկս լեմնի, Թուրնջի և Թըթուիկի՝ որոյ բոլորշի կատար տի՛ր գարնանագեղ, և ամբաւենուոյ՝ որոյ քաղցր պտուղ բուրէ անոյշ զՀոտ նարնջի ծաղկի։ Զտունկս չափահասս տնկէր շուրջ զփոքրիկ ցանկաւս։ Եւ ևս սերմանէր զսերմանիս այնպիսեաց տնկոց՝ որ 'ի յաջորդ ամին կամ զծաղիկ և կամ զպտուղ առբերէին։ Ակատիս պարապատեալ երկայն փնջավք ծիւնափայլ ծաղկանց 'ի կախ լուսափայլ գորշապար Հանգի պէս։ Լիլակն Պարսից ամբառնալով 'ի յօդս զվշագոյն բարունակս իւր լրթագոյն։ Փոքրատեսի[6] արմն որոյ զուրկ 'ի բարունակաց ձևակերպէ զսիւնակ ընդելուզեալ դալարագեղ սեխիւք, որոյ սաղարթ 'ի ծագս բերէ զնմանութիւն տերևաց Թզոյ։

Զսերմանիս և զթինս խիժի ծառոյ, Թարմանալու, ամբի[7], տիտեռնատունձի, գուա-

վայի՝, հացոյ և նեղատերևն Եւգինեայ սեր-
մանէր առատութեամբ. որոց շատ կէսն ա-
պաքէն ընծայաբեր լինէին մատաղաւորց մշա-
կին և՝ հովանեաց և՝ պտղոյ։ Ժրաջան ձեռք
նորա արդէն Հնպաղեալ էին զՀնխութիւնս
բնութեան և յեւ երիզուտ մասին մնկագոր-
ծութեանն։ Բայց մասիսի հալուէք, Հնդկաց
թուզ հատարակ՝ պՀնազարդեալ քրքմաթոյր
ծաղկամբք շիտ շիտ պիտակաւոր կարմրերփեան
գունով, և փշոտ հնգանկիւնի հպակքան ուռ-
Հանային 'ի մղտագոյն անդորդանս խարակաց,
գոգցես թեակոխեալ ժամանել հատանել եր-
կայնաձիգ բաղեղանց. որոց ծանրաբեռնեալ
երկնագոյն ծիրանի ծաղկամբք կային ատտ և
անդ կախեալ զանխուսայ կողաց լերինն։ Այն-
պիսի իմն կալգաւ դառակարգեալ էին ծառքս՝
մինչև 'ի մի և եթ հայեցուած զբոլորն ակա-
նել։ 'Ի կենտրոնի հովտիս անկէր զտուռնկս
փոքրիկս—'ի թիկանց ոտցս զթուփս—'ի վեր-
ջոյ զբարձրաբերձ ծառս, յորոց վերայ վառա-
ւոր ամբառնային վերհատառ մայրիք երկնա-
բերձք՝ ահման հատանելով շրջանակին։ Զայս
օրինակ լայնածաւալ այս ցանկ 'ի կենտրոնէն
երևէր առն դալարագեղ ամփիթիատրոնի՝ ուռ-
Հացեալ պՀնեալ պտղովք և ծաղկամբք, պա-
բագրելով զազգի ազգի ըռուբինս, զշարս մար-
գադեղանց և զանդս որիզոց և ցարենոյ։ 'Ի յար-

մարութիւն բուսականաց ըստ իւրաքանչիւր ինքեանց զհետ երթայր խորհրդոց բնութեան։ Թերա-գրեալ՝ ի նմանէ՝ արկանէր՝ ի բարձունս զայն-պիսի սերմանս, զորս հողմոյն գիտէր Հապա-զել՝ ի վերայ դարակաց. և զթմբովք վտակաց սփռէր զհատս լուղականս յերեսս ջրոց. ամէն տունկ՝ ի սեպհականն բուսանէր երկիր. և ա-մէն երկրի վիճակ երևէր պտղաբերդեալ բնու-թեանն ձեռամբ։ Ցարտեանաց ժեռից ահագին կարկանչմամբ ի ջեալ հեղեղաց՝ բացեալ էին՝ ի հովտին, ատ՝ զականակիտ վտակ, անդ՝ զլայն-շի և զվիթ հայելիս՝ ի յորս ցոլանային պայ-ծառ դալարութիւն, ծաղկապսակ ծառք, կը-քեալ պարեխք և կապուտակն երթերին։

Երկիրն՝ թէ և պարականն թէ և երիզուտ, և այնպէս մեծագոյն մասն արգասա-բեր ելանէին։ Այս՝ զի և մեք ատտար երկաք նմա յոյս վաղնան և՝ խորհրդով և՝ գործով։ Եհատ զհանապարհ ինն շուրջ շրջանակի զհալիւն՝ ուստի բազում առաջք հանէին՝ ի կենտրոնն։ Նա՝ և յեւ խորտաբորտ վայրաց քաղեալ էր օգուտ՝ զդարբուկս՝ ի կոկ հանապարհ և ըզ-վայրենիս յընտանի տունկս խառնելով։ Այս-քիւք անբաւ բազմութեամբ գլեալ քարանցս՝ որ զարդիս խցանեն զանցս և ցան և ցիր հապա-զին յերեսս կղզւոյս՝ կանգնէր ատտ և անդ զբրգունս. առ ստորոտովք որոց արկեալ հող

մնկէր զմացառս վարդենւոյ, զշրջափակս ծաղ-
կանց Բարբեդոնի և զայլ այնպիսիս՝ որ բե-
բեռն ելանել 'ի դարակս։ Ո՛չ յետ բաղմաց ինչ
աւուրց խաւարաբորբ և անձեւակ այն բրգունք
սքօղեալ ծածկէին գալարութեամբ, կամ Հա-
Հանչեղ գունով գեղաձիծաղ ծաղկանց։ Խնձոր
ծառոց հնացելոց՝ կքելոց յամբարտակաց վտա-
կէին վերայ՝ ընծայէին զյարկեալ այլս անթա-
փանցիկս յարևու, և զանուշակ զամանոցս առ
տօթաժամու աւուրն։ Ընդ այն Հանապարհ
ժամանէր ելանել 'ի թաւուտ ինչ մայրեաց,
յորոյ կենտրոնին ջամացեալ աՀողէին ծառք
ակաղձունք պտղովք. ատ՝ անդ ինն ծաղկեալ
հասկիւ ցորենոյ, անդ՝ դարաստան պտղածին
ծառոց. այս ինչ մուտ երևելի առնէր զի ըս-
Հնթան, այն՝ զանմատոյց արտեան լերին. 'Ի
ներքուստ անդուստ աՀունաՀիւղ սարվինոյին
խիժի ծառոց և բաղեղանց՝ և ո՛չ ինչ երևէին
և 'ի կիսաւուր. այն ինչ՝ արտեան այսորիկ պա-
բեխիս ամբարձելոյն քան զլեառն՝ մատուցանէր
զտեսարան ողջոյն ցանկին և հեռաւոր Ովկիա-
նուն. ուր էր զի նշմարէաք զգալուստ նաւաց
յԵլոպոլիս և էր զի զգառնալ նոցա 'ի նոյն։
'Ի տարաժամիլ աւուրն ամենեքին ակումբ առ-
նուին 'ի յայս ժայռ և վայելէին յանդոյր
գեղոյր զովութիւն երեկոյին, զանոյշ բուրումն
հոտաւէտ ծաղկանց, զգաշն կարկանչիւն մեղմ-

աքայլ վտակաց և զվերջին խառնակեալ ներ-
դաշնակութիւն լուսոյ և մթութեան։

Եւ չինչ թերևս գեր հանդիսացի քան զանուանս ամենց զմայլեցուցիչ առանձնանո-
ցաց լաբիրինթիս։ Դարակն՝ զորմէ արդ իսկ ա-
ստացիս, և ուստի նշմարէին զիմս զ'ի հեռաստանէ գալուստս, անուանիւր Գիւտ Բարեկա-
մութեան։ Կանգնեալ էին անդէն Պաւլոս և Վերգինիա զփոյլ իմն 'ի զբօսանաց սակի, ուր
իբրև նշմարէին զգալուստն իմ 'ի հեռաստա-
նէ, պարզէին զթաշկինակս իւրեանց 'ի նշան գալստեան իմոյ։ օրինակ անտի առեալ 'ի պար-
զելոյն զդրօշ 'ի վերայ լերինն 'ի գալստեան նաւուց։ Այս պատկեր ետ ինձ քանդակել 'ի
պկին զմակագիր իմն։ Ցիմաւմս ուղղութեան չեմ ես այնչափ հաՀեալ 'ի տեսա-
նել զանդրիանդս և ոչ այնչափ զմահարձանս երիկայից, որչափ յընթեռնուլս զմակագիրս քա-
ջադէպ գրեալս։ Թո՛ւի ինձ՝ եթէ կենդանի ձայն ելեալ 'ի վիմէն ևս և յետ հարուստ
ամանակաց անցելոց՝ աղդ առնէ մարդոյ 'ի միայնակութեան իւրում։ Եթէ չէ ինքն մենա-
ւոր։ Եթէ՝ յոգունք ևս 'ի նմին իսկ վայրի ըզ-
գածեալ խորհեալ և ըմբերեալ են իւր պէս։
Մակագիրք երիկայից որ չեն 'ի միջի, ձգեն
հանեն զոգին ընդ անհուն միջոց և խելամուտ
առնեն զմարդ անմահութեամբ նոցին՝ ցուց-

մամբ եթէ խորհուրդ իմն և միտք առաւել ձգի քան պաւերումն ինքնակալութեանց։

Դրոշմեցն ուրեմն 'ի փոքրիկ կայմի դրօշակին Պաւլոսի և Վերգինիայ գյաղբդ տողն Ովրատիսի։ —

Իոյգ Ռէ՝ ֆէր գէ՝ ըոյ՝ ՈՈՒԷՂ՝ ՔԷՐԳՊ ՀԷԼՆԷՈՅ։
ԷՈ հայքն հուղմոց՝ հովանէ էոցէն՝ յոր 'է ֆէր վէրոյ։
ԵՈ ՈՒՈՂԷ ԳՅԷՂ՝ ՂՅՈՊՅՈՊՂՈՒՂ ՈՒՈՒ՝ ՇՆՇԼ ՅՈՐԱՅ։

'Ի վերայ պատեանի խիժի ծառոյն՝ ընդ հովանեաւ որոյ մերթ ընդ մերթ հրատանգէր Պաւլոս խոկալով 'ի վերայ ալեստանջ ծովուն՝ քանդակեցի զայս բան Վերգիլիայ։ —

ԵՐԼԱՆԲԼ ՈԲԳԷՈՒ ԳԷՈՒԷ ՂՇԼՆԱՆՆ ԼՈՒ ԱՂՈՈՈՅԾՈՒԲԼՈՆ։

Եւ 'ի վերայ դրան խրՀԹին տիկնոջն տ'լա Դասվրի՝ ուր շատ անգամ խմբէին 'ի միասին երկոքին ընտանիքս՝ կացրդեցի զՀետագայ բանն։ —

ԱՈՈԷՆ ԵՐԷՏՈՂԾԷ։ Ե ԷԷՈՆ։ Մ ՊԳԷՈ ՂԼՈՈԷՏՈՒԲԼՈՆ։

Սակայն ոչ ընդ հաՀայս Երկին Վերգինիայ իմ Լատին տողքն։ զի զոր միանգամ դրոշմեալն էի՝ առաց, յոտս հողմացոյց դրօշակին իւրոյ՝ կարի իմն երկար և հանՀարեղ էին։ "յաւէտ ըղձալի լինէր ինձ," յաւել ասել, "տեսանել մակագրեալ։ Անդադար երերումն և յաւերժ կանգաղումն։"

Երանակ գերդաստանացս զգացողութիւնն ձգէր տարածէր առ ամենայն ինչ շուրջ զինքեամբք։ Ընծայէին զանուանս անուշակս ի-

բաց՝ ոչ ինչ այլազանս։ Պարունակ իմն նայնջի, ջրախոտի և հացոյ շուրջ շրջանակի ածեալ զդալարադեղ սիզով՝ ուր երբեմն պարս վերտեալ կաքաւէին Պաւլոս և Վերգինիա՝ անուանիւր Միաբանութիւն։ Հնացեալ ծառն՝ ընդ հովանեաւ որոյ տիկին տ'ալ Դավրի և Սարգարիտ յաճախ պատմէին իրերաց զաղէտից իւրեանց՝ կոչիւր Արտասուք սրբեալ։ Եւ ևս ետուն զանուանս Բրիտաննիոյ և Նորմանիոյ՝ փոքրիկ վիճակաց ինչ երկրի, ուր սերմանեալ էին զհատս ցորենոյ, զեղակս և զոլոռունս։ Կամելով Դոմինկոնի և Սարիամու զհետ երթալով օրինակին տիրուհեաց իւրեանց 'ի յուշի ունիլ և զմայրենիս իւրեանց 'ի յԱփրիկէ՝ ետուն զանուանս Անքուլլայ և Փուլլեպայնտայ այնոցիկ սահմանաց՝ ուր բուսանէին դալար դեղքն, որով հիւսէին զտառաղանս։ ուր ևս տնկեցին զդդմենի մի։ զայս օրինակ վտարանդի տունքս՝ արգասեօք առանձին կլիմայից իւրեանց գգուէին և ողջագուրէին զանոյշ և զառաջք տեսիլս՝ որ պարաւանդէն զմեզ ընդ հայրենիս։ և ամաքէին զվիշտս իւրեանց 'ի նժդեհութեան։ Աւ՞աղ։ տեսեալ եմ ես բիւրաւոր փաղաքուշ անուանակոչութեամբ անձնաւորեալ զայնոսիկ ծառս և զվտակս և ըզվէմս՝ որ զարդիս տապալեալ կործանեալ և վեր 'ի վայր շրջեալ։ որ զարդիս՝ հանգոյն

գաշտավայրացն Յունաստանի, և չինչ այլ երևելեցուցանեն քան յաւերածոց և յաղագս յիշատակարանաց։

Ո՛չ ինչ առակէր վարատել վարատել 'ի մտաց տիկնոջն տ'լա Դավրի զկաթոգին սէր նորա որ առ Հայրենիս, ո՛չ տամարտիկս յաւակնութիւն մերձաւորի նորա, և ո՛չ իսկ զուարթարար և ուրուիչ վայրն իւրոյին բնակութեան։ Այն ինչ՝ բազմառատ բերք կլիմա հաՀեցուցանէին զբիմս ընտանեաց նորա, քաղցրանայր նմա խնամ տանիլ այնպիսեաց պտղոց՝ որ ինքեան յոյժ քաղցր էին զի էին բերք իւրն դեմառի։

Այլ թերևս Հանգիստն Վերգինիայ էր յաւէտ զուարՀալի վայրն ցանկիս, 'ի յունջս քարաժայռին Գիւտի Բարեկամութեան է խոռոչ, ուստի հեզիկ կարկանջմամբ սողսկեալ հոսէ վտակ՝ գոլորելով առ ականն ըզփոքրիկ ՀաՀիՀ 'ի միջն դալարագեղ դաշտի։ Բերի ես Մարգարիտայ՝ 'ի ժամ ծննդեանն զՊաւլոս՝ զգագայթն[10] մի հնդկաց 'ի պարգև. զոր և ես յայլուստ էի ընկալեալ, և զոր տնկեաց նա 'ի սահմանի ՀախՀախուտ երկրիս. զի յաւուր միում ցուցցէ ծառն զթուական ծննդեան որդւոյն իւրոյ։ Միւս ևս սովին գիտմամբ տնկեաց տիկինն տ'լա Դավրի յընծայման անդ Վերգինիայ 'ի լոյս։ 'Ի պտղոց

աստի ելին ընծիւղեցան ծառք կրկին գոքոյի, յորս բովանդակէին ամենայն յիշատակարանք երկուց գերդաստանացս. մին 'ի ծառոցն կոչիւր Պաւլոսի, իսկ միւսն Վերգինիայ: Ահէին ամբառնային և սոքա հանգոյն մատաղատուկ մանկանցն սնզուգական բարձրութեամբ. և այնպէս 'ի վախճան երկոտասան ամաց ամբարձան բարձրացան քան զդաստակերտսն 'ի վեր: Ապաքէն կակուղ ոստք նոցին զգեցեալ էին զյարդունութիւն, և բարունակքն դալար կալեալ կորացեալ 'ի վերայ դաշտի վտակին: Քան 'ի փոքրիկ տնկոցս, ունէր քարաժայռին 'ի բնութեանն ապաստանեալ էր պէտնազարդութիւն: 'Ի լուրթ և գիշին կողաց նորա նշողէին աղջկամազք դալնային և շլագոյն ստորոգք. և փունջք երերնատերև եղջերալեզուի կախեալ հանգոյն երկայնաձիգ ծիրանագալար ժապաւենից ծածանեալ 'ի հողմոց: Զատա յաշորդէին շարիւ միով Մատակաբերեան վերիվինկլոսք՝ որոց ծաղիկք կարմրերիւեան շահոքրամի պէս. և երկայնապատիճ կապսակն՝ որոյ մեխակն արիւնեներանգ առաւել շառագոյն քան զբուստ: Պալասամ՝ որոյ տերև 'ի սրտին միջի, և ռահանն անոյշ՝ որոյ բուրումն որպէս շահոքրամի, ընուին զոդն հեշտալի բուրմամբք: Ցանդորդանաց լերինն կախէին զեղաղէշ բաղեղունք հանգոյն ծածանեալ աստուոյ՝ զշքեղ

ընծայելով ամպհովանիս առ կողաց պարեւոյց։ Յանկուցեալ Թռչնոց ծովայնոց յանդարբուեալ Թեանց առանձնանոցացս՝ զգիշերն առ տեղեաւն գայլն անցուցանել։ Տեսանէաք ընդ երեկս ըզքաղաքս և զ'ստինտ քերել առ ծովեկերբք։ կարգինալ[11] Հախր առնոյր ընդ օդս։ և լուսափայլ Թռչունն արեւադարձին՝ որ ընդ արուսեակին լքանէ զառանձնութիւնս Հնդկաց Ովկիանին։ Յանկալի էր Վերգինիայ Հանգչիլ առ երկերբք վտակիս այսորիկ պՀնազարդելոյ վայրենի այլ գեղապանծ շքեղութեամբ։ Նստէր յաւէժ ընդ հովանեաւ գօքոյենեացն և ածէր առ տեղեաւն զիւր այծս 'ի յարօտ։ Եւ մինչ կազմէր ինքն զպանիր 'ի կաթանց նոցա։ քաղցրանայր տեսանել զնոսա Հարակերզաղջկամազս բուսեալս յանփափայս քարաժայռին՝ կախեալս զմիոյ 'ի շրջանակաց իբրև զվերնախարսխէ։ Կրշռեալ Պաւլոսի զնանդաղատանս և զսէր Վերգինիայ առ տոյնպիսիս՝ երբեր փոխադրեաց ըզհոյլս բուսնոց պէտպիսեաց Թռչնոց 'ի մերձաւոր Հաղագաց։ Հինաւուրց Թռչունք յարևանալով ձագուց իւրեանց՝ յարգուսնացան 'ի նոր յոյս հատուած։ 'Ի պայմանեալ ժամու արկանէր ոտցս Վերգինիա զորիզ։ զկորեկ և զմայիզ[12]։ Այն ինչ յանդիման լինէր։ տարմն սուլիչ։ ամագավիթն՝ որոյ դայլայլիկ կարի քաղցր՝ կարգինալ և սեաւ Թռչունն Աբիդաթ՝ որոյ փետուրք բո-

ցախսայլ Թողեալ լքանէին զԹաւուտս իւրեանց։ Ի նմանէր փորակէտն կանաչ որպէս զմրուխտ 'ի մերձակայ արմաւենւոյն։ կաքաւն կաքաւելով վազվազէր 'ի վերայ դալարեաց։ ամէնն յախուռն մերձենային 'ի նա զերթ Թուխս մի վառեկայ։ որոց զուարՃուԹիւն։ արօրանալ և սէրն առ միմեանս ուրախ առնէին զնա և զՊաւլոս։

Ո՞վ զնարդ անցին աւուրք ձեր կանխահատ։ մանկունք սիրայինք։ զի՞արդ բարեգործուԹեամբք։ Քանի՛ քանի՛ անգամ 'ի սմին իսկ վայրի մարքն ձեր գիրկս արկեալ ձեզ՝ օրհնէին զԱրարիչն փոխանակ ընդ արգահատանաց։ զոր օր ըստ օրէան պարգուԹիւն ձերոյն առաքինուԹեան ցուցանէր հանդերձել առ վերջին աւուրս նոցա։ այն ինչ արդէն միսիԹարէին տեսանել զձեզ սկսանել զաւուրս ընդ ամենանեան գուշակուԹեամբք։ Քանի՛ քանի՛ցս իսկ ընդ հովանեաւ պարեխաց հաղորդ գտեալ եմ ես և ընդ նոսա գեղջկանն ձեր կերակրոց։ 'ի համար որոց և չինչ կենդանի ծախէր զիւրն կենդանուԹիւն։ Դդմենիք կաԹամբ առլի։ կիԹք հաւուց։ պլակինդիք յորիզոյ 'ի ջրախոտի տերևոց վերայ։ կողովք ամբօք։ նարնջովք։ ամբրաւօք։ նռամբք և անանասօք[13] լի և լի՝ ընծայէին ընդմիահետ զհոգեխաղաղարար խորտիկ։ զգեղեցկուԹիւն յազգի ազգի գոյնս և զամենահեշտալի աւիշս։

Զրուցատրութիւն նոցա պարկեշտ և պարզ որպէս զկերակուրն: Ստէպ խօսս 'ի մէջ առնոյր Պաւլոս զխրոց զսերկեան աւուրն արարից և պատմէր ևս զոր միանգամ առնելոյն էր 'ի վաղուն՝ ցանկ կերպաւորելով զնոցանոր ձևս յանդորրութիւն փոքրիկ հասարակութեանն խրատանց: Այս դարբուկ է՝ ասէ՝ երոյրս, և այն՝ ոչ քարուք հաստատեալ գերդաստանին շրջանակ, երբեմն դալարահաս տարփինայք ոչ հերիք ամպ էին հովանաւոր, և մարթ էր զայլ ինն վայելուչ գտանել զտեղի վասն Վերգինիայ:

'Ի թմնուտս ամենեքին առ տին ելով՝ Հապաղէին 'ի հիւսումն սիրայից 'ի դալարեաց և տառաղանաց յեղեգանց: Տրմուխք, փայտատք և կացինք՝ սմենայն դասաւորեալք ընդ երկայնութիւն որմոյն կախէին, և առ անօթովքս մշակութեան եգեալ կային երախայրիք՝ արդիւնք աշխատանաց, պարկք որիզոյ, տրցակք ցորենոյ և տառաղանք առլի պտղովք ջրախոտից[14]: Լութիւնն հասարակօրէն ունի և ըստ իւրումն չափու զիւրն հեշտութիւն, և ուսեալ էր Վերգինիա 'ի մօրէ իւրմէ և 'ի Սարգասիտայ կազմեալ զօշարակ և զդեղս զօրացուցիչս 'ի հիւթոց եղէգնաշաքարի[15], նարնջի և կիտրոնի:

Իբրև մուրճն զմրթով անկանէր՝ ա-
մենեքին համախմբեալ ընթրէին 'ի միասին
լուսով լամբատի միոջ. յետ որոյ տիկինն
տ'ալա Դավրի և կամ Մարգարիտ թեկն ածէին
'ի պատուութիւնս ուղևորաց մոլորելոց 'ի պէս-
պէս Հալագս Եւրոպիոյ յօրացեալս յեղուզա-
կաց. և ևս՝ Հապաղէին յաղէտալի և 'ի մոռացածին
պատուութիւնս նաւուց մղելոց ջարդելոց ջաղ-
խելոց 'ի փոթորկէն 'ի վերայ քարաժայռից
անմարդաբնակ կղզեաց: Ո՞վ թէ գիտիցէ սըր-
տառուչ ունկն դնէին վիպասանութեանն ման-
կունքն նոցա. որպիսի՞ ըզձանօք կարդային զեր-
կինս սրժանի առնել զինքեանս հիւրընկալու-
թեան սոյնօրինակ վտտաբաղդից: Հուսկ յետոյ
անջատեալ 'ի միմեանց՝ երթային այր իւրա-
քանչիւր 'ի խուղն իւր 'ի ենջիւն խոնարհիլ,
անընդմիջեր ակնկալեալ մերկանալոյ առաւօտուն
զգիշերն առ 'ի զմիմեանս միւսանգամ տեսանել:
Էր զի ջաղբ անձրև տեղալով 'ի վերայ խրԽթացն՝
թմբիր քնոյ արկանէր 'ի վերայ մանկանցն. և
էր զի թևք հոլմոց բերելով զ'ի հեռատանէ
ձայն ալեաց զմիմեամբք մանրելոց 'ի վերայ ծո-
վափանց՝ կափուցանէր զաչս նոցա: Օրհնէին
վասն անձին փրկութեան զԱրարիչն իւրեանց,
զորմէ զգայութիւն և միտք նոցա գամ քան
զգամ անվկանդանայր 'ի պատկերաց հեռաւոր
վտանգաց:

Տիկինն տ'լա Դավթի ընթեռնոյր երբեմն լու 'ի լու ամենեցուն զսրտառուչ պատմութիւնս ինչ հին կամ նոր կտակարանին: Ունկնդիրք նորա և չինչ տրամաբանէին 'ի վերայ սուրբ գրոցն. քան զի Աստուածաբանութիւնն հիմնական էր 'ի խորհուրդս նոցա ըստ բնութեան. և բարոյականութիւնն՝ 'ի գործս նոցա ըստ աւետարանին: Զունէին զնշանակեալ աւուրս վասն զբնութեան և զայլս վասն տրտմութեան: Ամէն օր էր առ տուս օր բարեկենդանութեան. և ամենայն ինչ շուրջ շրջակայ՝ սուրբ ինն տաճար. ուր յաւէտ երկիր պագանէին անհուն Իմացութեան՝ միայնոյ բարեկամին մարդկայինս սեռի 'ի յաւիտեան: Բարեյոյս բերուսին նոցին առ գերագոյն զօրութիւն նորա լցեալ էր զմիտս նոցա արգահատանօք վասն անցելոցն, անվկանդութեամբ վասն առաջիկայիցն և յուսով վասն հանդերձելոց: Զայս օրինակ վարեալ մնեալ 'ի թշուառութենէն կանանցս այսոցիկ դառնալ 'ի վիճակ բնութեան, պարզեցին տպաւորեցին 'ի հոգիս իւրեանց և զաւակաց իւրեանց զայնպիսի զգացողութիւնս, որ յաւէտ բնական են մտաց մարդոյ և վայելուչ ինն զօրավիգն մարդումս 'ի թշուառութեան:

Այլ ըստ օրինակի ամպոց՝ որք երբեմն յառնեն ունիլ զերեսս երկնի ընդ քողվ մթութեան, յորժամ անդոհութիւնն տի-

բապետէր սրտից մեջն 'ի փոքրիկ հատարակու-
թենէս, այլ՝ ամենեքին դալակէին վարատել
վարատել 'ի մտաց նորա զցաւագին յիշատակն,
յաւէտ զգացմամբք քան եթէ ծերունարկու-
թեամբ։ 'Ի գործ դնէր Մարգարիտ զիւրն
զուարթութիւն։ Տիկինն տ'լա Դաւրի Հապա-
ղէր յԱստուածաբանութիւնն անոյշ։ Զսիրա-
լիր գգուանաց իւրոց բուռն Հարկանէր Վեր-
գինիա։ Պաւլոս զսերտ անկեղծութիւնն իւր
ցուցանէր։ Եւ ևս Մարիամ և Դոմինկան փու-
թային ծուկային ըստ ծել զբստ կարեաց իւր-
եանց օգնն և լալ ընդ լացողս։ Այն օրի-
նակ յոգին ընդ մեռեալս անզօր տունկք առ 'ի
զգէմ ունիլ մրրկին։

'Ի Պարզ եղանակս տարւոյն յա-
մենայնում կիւրակէի չուէին գնային 'ի տուն
Աստուծոյ 'ի Սաղուկ գրով. որոյ զանգակա-
տունն ահա անդ 'ի դաշտավայրին։ Զկնի աստ-
ուածային պաշտամանն յաճախակի գային տը-
նանկք ընդունիլ 'ի նոցանէ զօգնն ինչ և զնը-
պաստ։ Էր զի վատաբաստիկ ոմն հարցանէր զլսոր-
հուրդ, և էր զի մանուկ ոմն ածէր զնոսա առ-
խօթացեալ մայրն իւր 'ի մերձակայ սահմանին։
Հանապազ կրէին ընդ ինքեանց զդեղս յատ-
կեղս խօթութեանց երկրին. զոր մատակարա-
րէին այնպունակ քաղցր եղանակաւ՝ որ պը-
տակէ զփոքրիկ շնորհս յարգիւ անկշիռ։ Գեր

քան զառենայն 'ի Խաղողէր սոցա վարատել փարատել գլխոթութիւնս մտաց անըմբերելիս 'ի միայնութեան շատ ևս կթուցեալց։ Այնուիկ աներկևանութեամբ խօսէր զԱստուծոյ տիկինն տ'ալ Դաւրի, զի խօթեցեալն 'ի ժամ ունկնդրութեանն առլնթեր իւր հաւատալ տեսանել զնա։ Դարձ առնէր Վերգինիա 'ի տուն արտասուաթուրմ աչօք. սիրտն տրտիւէր առ ցնծութեանն՝ գտանելոյ զաղագ առնելոյ զբարիս։ Յետ զայս օրինակ վՀարելոյ զբաղցր այցելութիւնս, յապաղէին զդարձ իւրեանց քերելով 'ի կողաց զառ 'ի շեղ լերինն. մինչև ժամանեալ հասանէին 'ի բնակութիւնն իմ. ուր հանդերձեալ կազմեալ էի զսեղան առ թըմբուռք փոքրիկ գետակին, որ սաղսակեալ խաղայ գնայ առաջի խրՀթին իմոյ։ Ընծայեցուցանէ յայսպիսի դէպս զդաշխուրանս ինչ հին գինւոյ, առ 'ի շուք դնել Հնաշուն մերոյ Հնդկայնոյ զուարթացուցիչ բերովքս Եւրոպիոյ։ Դէպ լինէր մեզ երբեմն պատահիլ միմանց առ ծովեզերք յակունս փոքրիկ գետակաց, որ ոչ առաւելուն մեծութեամբ քան զվտակս։ Ածէաք 'ի մենկագործութենէն զբոյսս. յորս և յաւելուաք զոր միանգամ ընծայէր մեզ ծովն առատութեամբ։ Բազմեալ 'ի վերայ քարաժայռի՝ ընդ հովանեաւ թաւամազն արևածաղկի, քաղցրանայր մեզ ունկն դնել շառաչեանն խոր-

տակմանց լեռնայեալ կոհակաց 'ի ներքոյ ոտից մերոյ և երգոյ ջրաբնակ քուլուին։

Ճաշուն մերոյ զկնի յաջորդէին երգք և պար երկուց նորահաս մանկանցն։ Նուագէր Վերգինիա զերջանկութիւն տուարածական կենայ և զթշուառութիւն այնոցիկ՝ որ մղեալ 'ի զոշաքաղութենէ և 'ի սիրոյն մամանի հուներ ընդ անհուն և ամենին Ովկիան, քան երթէ գործել զերկիր և վայելել զանդորրաւէտ արդիւնս նորա։ Էր զի յաջողէր 'ի մեջկատակութիւն ընդ Պաւլոսի ըստ տարասի հափշկաց։ Նախկին բարբառ և ոչ խօսիցն մարդկութեանս է մեջկատակութիւն, տարածեալ ծաւալ է ընդ ամենայն աշխարհ, և այնպէս բնական է և ազգու, մինչև 'ի Հահ ուսանիլ Բոպէացի մանկանց 'ի խափշկաց։ Նկարագրելով Վերգինիայ 'ի միտս իւր զոր մանգամ զառ 'ի մօրէն իւրմէ զլուեալն 'ի պատմութեանց զսրտառուչ և զազգու դէպսն ձևացուցանէր գեղեցիկ պարգսութեամբ։ Էր զի 'ի ձայն տպարկին [16] Դոմինկոնի հանդիսանայր 'ի դալարագեղ դաշտի ուներլով 'ի գլուխ զթակոյկ ջրոյ՝ մերձեալով վերհրաքայլ առ ազբիւրակն առնուլ անտի ըզջուր։ Դոմինկոն և Մարիամ կերպարանեալով զՄաղիանայի խաշնարածս՝ չետուն նմա թոյլ մերձենալոյ և հրքեցին խոժոռութեամբ։ Զոր տեսեալ Պաւլոսի յարձակեցաւ 'ի թիկունս նա-

բա՝ ցրուեաց զՀովիւն՝ ելից զսաստիկն ջրով և
եգ 'ի գլուխ Վերգինիայ. ապա բոլորեալ 'ի
Հակտոտ նորա զպատկ ծաղկանց Սատանայակա-
բեան փերիվինկլոսաց. որ յաւէտ շքեղացոյց
զգինքշութիւն մարմնոյ նորա: Ապա և իմ յա-
բերեալ 'ի զբօսանս նոցա՝ զՀոռոգուել կերպա-
բանէի՝ տալով Պաւլոսի զՍեպուհիրա դուստրն
իմ 'ի կնութիւն:

Սերթ կերպարանէր Վերգինիա ըզ-
վատաբաղդն Հռութ՝ դարձ 'ի Հայրենիս առ-
նելով աղկաղկ և սկնդուկ. ուր՝ յետ այսչափ
ընդերկար տարակացութեան եգիտ զինքն որ-
պէս երթէ յօտար աշխարհի: Դոմինկան և Սա-
բիսմ ձեւակերպէին զՆնձողն: Վերգինիա հե-
տեւելով զՀետ նոցա՝ քաղէր աստանդեալ զբուսի
հասկս ցորենոյ: Ցանձին բերեալ Պաւլոսի ըզ-
մեծարոյութիւն նահապետի միոջ՝ հարցանէ ցնա.
որում առնէ նա զպատասխանի դողդոջան ձայ-
նիւ: Առօրին շարժեալ 'ի գթութիւն՝ ընդ-
հեաց ապաւինութիւն անմեղութեան և սասն-
ջականութիւն թշուառութեան: Ելից առա-
տութեամբ զդոգ Վերգինիայ. և ածելով զնա
առաջն մեր իբրև առաջն ծերոց քաղաքին՝ ե-
ցոյց զկամս իւր առնելոյ զնա յիւրն 'ի կնու-
թիւն: Ցայս տեսիլ յուշ ածելով տիկնոջն
տ'ր Դավրի զմտաւորութիւնն յիւրոյ աղգայ-
նոց՝ զայրութիւնն իւր՝ զքաղցր ասպնջականու-

թիւնն՝ զոր եցոյց ինքեան Մարգարիտ, որպէս և զփաղաքուշ յոյն բարեբաստիկ միաւորութեան մանկանց իւրեանց՝ ոչ կարէր զուսպ ունել զարտասուս. և զգացողութիւնն՝ զոր այսգունակ յիշատակք տան յարուցանեն՝ քամէր յաչաց ունկնդրացն ողջոյն զայնպիսի յորդառատ արտասուս, որոց ծագումն է միանգամայն 'ի վիշտս և 'ի բերկրութեան.

Այնպիսի իրական շարժմամբք աղուեալ լինէին թատերական այս բանաստեղծութիւնք, մինչև գոգել տալ զմարդն փոխածեալ 'ի դաշտս Սիւրիոյ կամ Պաղեստինոյ: Զէապք մեք զուրկ ոչ 'ի շքադիր զարդուց, ոչ 'ի լուսաւորութեանց և ոչ 'ի կայարանաց պատկանաւորաց առ թատրոնական նկարագրութիւնն: Տեսարանն յաւէտ զտեղի առնոյր 'ի մուտս Հաղագին, որոյ թափանցիկ մասունքն ձևակերպէին շուրջ զմեօք զյոգնաթիւ կամարակապս սալարթեանս. որ պատսպարէին զմեզ 'ի բռնութենէ տօթոյն ընդ օրն ողջոյն. իսկ յորժամ ընդ հորիզոնն իջանէր արփիակն, ՀաՀանչք նորա խորտակեալ 'ի վերայ բունոյ մայրեաց՝ ձգէին ընդ մեջ աղջութեան անտառին զերկայն գիծս լուսոյ շքեղս և յոյժ զուարճալիս: Էր զի լայնշի սկաւառակ նորա երևէր 'ի ծագս ծառատունկոյ միոջ՝ պարզելով ցուցանելով զմի միայն շլացուցիչ գունտ պայծառութեան: Սալարթք ծառոց

'ի ներքուստ անդուստ լուսաւորեալ 'ի քրքմա-
թոյր Հառայդայթից նորա՝ փայլեալ ցոլանային
հանգոյն տպազիանի և զմրխտոյ։ Լուրթ և մա-
մուռապատ բունք նոցա գոգ 'ի վաղնջական խրնձի՝
սիւնս յեղափոխեալ տեսականէին։ և օդականքն
մեկուսացեալք անկուինչ 'ի տաղարթախիտ հո-
վանիս անդր զգիշերն անցուցանել՝ աքանչա-
ցեալ տեսանել զպայծառութիւն երկրորդ ա-
ռաւօտու, ողջունէին տունջենական աստեղն
բիւրազգի պարերգութեամբք։

Յայսպիսի գեղջկական ինչսն՝ փոյթ
'ի վերայ հասանէր մեզ գիշեր։ իսկ օդոյն մաք-
րութիւն և քաղցրութիւն կլիմային՝ և չինչ
արգել լինէին մեզ զգիշերն 'ի Հաղագին ան-
ցուցանել։ անքոյթ 'ի ջենոյ եղանակին՝ ելով
և ոչ նուազ անքոյթ 'ի վզենակաց աւազակաց։
'Ի վաղիւն 'ի դարձին մերում առ իւրաքան-
չիւր բնակութիւնս մեր գտանէաք զամենայնն
անվթար յիւրում տեղւոջ։ 'Ի կղզի ատ՝ մինչ-
չև էր տուրևառութեանն սպրդեալ 'ի ներքս
մուծեալ զծարաւ շահաստանութեան՝ աննեն-
գութիւնն և անկեղծութիւնն տիրեալ թագա-
ւորէին, մինչև յոգունց իսկ 'ի յարկաց ջնիլ և
զվակ։ և աղին լինիլ առարկայ ինն հետաքրքը-
րութեան բազմաց 'ի բնակչաց։

'Ի միջի հեշտալի զուարճութեանց
յաչս ընդունելի կլիմիս տիկինն տ'ալա Դավրի և

եթէ ափսոսայր զշոյտ յաջողութիւն տուն՝ջեանն 'ի գիշեր. որ զօրանայ 'ի մէջ արեւադարձից. և որ վրէպ զտիւսուր միտս իւր կացուցանէր 'ի վայելչութենէ այնմիկ ժամու լուսոյն երեկոյին, որոյ քաղցր նեռմութիւնն տիր հաճոյարար է և ողջունելի քնքուշ և վշտագին զգացողութեանց,

Զգոյր Պաւլոսի և Վերգինիայ և՝ ժամացոյց և՝ օրացոյց. և զերկ ևս էին 'ի ժամանակագրական, 'ի պատմական և յիմաստասիրական մատենից: Աւուրք կենաց նոցա թռուեալ լինէին զշրջանօք բնութեանն: Զափէին զժամս աւուրն ստուերօք ծառոց, զեղանակս տարւոյն բերովք ծաղկանց կամ պտղոց և զտարին թռուցեալ նուագաց հնձոց: Քաղցր և փաղաքուշ այս երևոյթք տուէին զանհատելի իմն շնորհ 'ի զբոյցս նոցին. "Ահա ժամանակ է հաշելոյ," ասաց Վերգինիա, "ստուերք ջղսխոտից առ արմատոյն անկանին." մերթ ևս "մերձեալ է պահ մռայլելոյն այերաց. թթուիկք փակեն պտերքևս իւրեանց:" Հարցին ոմանք 'ի դրակից ընկերակցաց նորա, "երբ եկեսցես առ մեզ." — "'ի ժամ եղեգան շաքարի," պատասխանեաց Վերգինիա. — "յոյժ ողջունելի ուրեմն եղիցի սոցելութիւնն քոյ," դարձուցին նորահաս ընտանակիցք նորա: Յորժամ հարցանէր ոք զտիւոցն իւրոց և զՊաւլոսին, "եղբօրն իմոյ," ասէր, "ջափեալ են ամք կենացն ըստ մեծի ծա-

ռոյն գագաթնի աղբերականն, և իմքն են ըստ Թուոյ աւուրց փոքրիկ գագաթնին. յաշխարհ ընծայելոյն իմոյ և այսր, երկոտասանից պըտղաբերեցին ամբենիք. և նարնջենիք ծաղկեցան երկիցս տասն և չորից անգամ:" Ասոնք նոցա Թուէր երթէ շաղկապեալ էին ընդ ծառոց հանգոյն այծամորդից [18] կամ յաւերժահարանց [19]: Զէին ակահ այլոյ իմն պատմական Թուականութեան՝ քան երթէ առտեաց մալց իւրեանց, այլոյ իմն ժամանակագրութեան՝ քան երթէ գարատանաց իւրեանց, և այլոյ իմն իմաստասիրութեան՝ քան երթէ գործել զբարիս, և յանձն զինքեանս առնել 'ի կամս բարձրելոյն:

Զայս օրինակ աՀեալ զարգանային մանկունքս բնութեան: Ո՛չ ինչ հոգ ամբոխեաց զկաղաղութիւն նոցա. ո՛չ ինչ որկորուստ պղծեաց զարիւն նոցա. և չինչ անտեղի կիրք թիւրեալ ապականեաց զսիրտս նոցա: Սէր, ամբծութիւն և Աստուածպաշտութիւն տիրապետէին ոգւոց նոցին. և իմանալի շնորհքս պարզեալ Ճոպաղեալ էին 'ի դէմս, 'ի վայելչականութիւնս և 'ի շարժուածս նոցին: Եւ ևս յառաւօտս կենաց ունէին զամենայն ղծաղկափրթիթ առոյգութիւնս. և անշուշտ ոչն օրինակ երևեցան նախածինքն մեր 'ի դրատին Ադենայ, յորժամ երևեալ յԱստուածականն ձեռաց զարաշինն յականեցին, մերձեցան և խօսեցան ընդ-

միմեանս որպէս եղբայր և քոյր։ Հեզ, պարկեշտ և անարկմիտ Վերգինիա իբրև զԵւա։ և Պաւլոս որպէս զԱդամ միաւորեալ ունէր ընդ արուութեան զմանկականն պարզմտութիւն։

Լուայ ես բիւրիցս ասել զՎերգինիա 'ի դարձին իւրում յաշխատանաց։ "Յորժամ նկուն լինիմ վաստակաբեկ, տեսութիւնն քո կազդուրէ զիս։ Յորժամ տեսանեմ զքեզ 'ի հովտին 'ի բարձանց անտի լերինն, երևիս դու ինձ իբրև զկոկոն շարագեղ վարդի դաբաստին մերոյ։ Յորժամ երթանաս 'ի տուն մեր մերոյ, կաքաւուն սրասլաց երագեղութիւնն 'ի գտանել զձագս իւր, և գեղաձան տեսիլն՝ առ քեզ նուաղին։ Յորժամ զրկեն զիս մայրիք 'ի տեսութենէ քոյոյ, չկարօտիմ ականել առ 'ի գտանել զքեզ վերստին։ Օդն՝ զոր դու շնչաս, և դալար դեղն՝ ուր հանգչիս դու, շորթեն պարհեն 'ի քէն զայնպիսի ինչ՝ զոր զուարդ անուանեն չակտիմ։ Այն ինչ հուպ լինիս ինձ՝ մերձաւորութիւնն քոյ արբեցուցանէ զամենայն զգայութիւնս իմ։ Կապուտակն վերին երթերին նուազ զմայլեցուցիչ՝ քան զծոփն ականողեաց քոց։ և դայլայլիկն ամադավիթ թռչնոյն նուազ դաշն, նուազ ներդաշնակաւոր՝ քան զվանկիւնն ձայնի քոյ։ Եթէ շօշափեմ զքեզ մատամբս և երթ, շինուած մարմնոյս անձին իմոյ գլխովին զդողանի հարկանի 'ի բերկ-

բուԹենէն։ Յուշ լինի՞ քեզ օրն՝ յորժամ անցաք մեք ընդ քարուտ գետն Եռատայրուոյն։ Պարտասեալ այն և յոյժ կԹուցեալ էի նախ քան զԺամանելն առ եղերս նորա, սակայն այն ինչ բարձեալն էի զքեզ 'ի գիրկս իմ, Թուէր ինձ Թեւս ունիլ զԹռչնոյ։ Խօսեաց՝ ասա՛ ինձ, որպիսի՞ հրաշալու�օք զմայլեցուցանես դու զմիտս իմ։ Արդեո՞ք իմաստութեամբ քով։ Սակայն մարքն մեր յաւէտ հանՀարեալ են քան զանձնուրն 'ի մէնջ։ Արդեո՞ք ողջագուրմամբքդ։ Եւ այնպէս փարին նոքա զինև և ևս յանՀախագոյն քան զքեզ։ Թուի ինձ՝ եԹէ միայն բարուԹեամբ քով է։ Ո՛չ զմտացուԹեամբ հարից երբէք զբոկիկ գնալ քո 'ի Սեաւ գետն, առ 'ի զնեբումն ողորմելի Թափառական ստանկին վասն հայցել։ Ահա՛ սիրելի՛գ իմ, ընկա՛լ զայս ծաղկաՒԹիԹ ասես նարնջենւոյ՝ զոր ընտրեցի 'ի Հաղագին։ դիր զայդ 'ի մտարից ընկոջնոյն քոյ։ — Հաշակեա՛ զայս խորհուրդս մեղաւ՝ զոր յարտեւանաց անտի ժեռի միոջ ածի վասն քո։ Սակայն խոնարհեաց նախ 'ի լանջս իմ և ես եղէց հաստատեալ։

Ապա դարձուցանէր Վերգինիա։ "Ո՞վ տեսնչելիգ իմ եղբայր, Հառապայթք արփիականն յելս անդ ծայրակարմիր՝ սփռեալ յանդորգանաց պարեխաց վերայ՝ նուազ բերկրեցուցանեն զիս քան զտեսութիւնն քոյ։ Սիրեմ

զմայրն իմ, սիրեմ և զքոյն, այլ յորժամ անուանեն նոքա զքեզ որդի իւրեանց, բիւրիցս առաւել սիրեմ զնոսա: Յորժամ պատկեն զքեզ ողջագուրմամբք իւրեանց, զդամ ես յանձին յաւէտ զգալաբար՝ քան յորժամ ես ինքն գգուեալ լինիմ: Հարցանեմ ցիս՝ եթէ զմի՞ սիրես զիս: Զի՞ է զի ամենայն արարածք սընեալք 'ի միասին սիրեն զմիմեանս: Հայեաց յոգկանս մնեալս 'ի միում բնի — սիրեն նոքա նման մեզ — նման մեզ և հանապազ 'ի միասին կան: Ցո՜ւշ, զիարդ կանչեն և պատասխանեն միմեանց 'ի միոյ ծառոյ 'ի միւսն: Այսպէս և՝ յորժամ բերեն արձագանգք յունկն իմ զեղանակս երգոց քոց՝ զոր նուագես սրնգաւ 'ի կատար լերին՝ կրկնեմ ես զբառսն կացեալ 'ի յատակ հովտին: Եւ 'ի վերջ քան զամենայն սիրեցի զքեզ և ես յօրէ անտի յայնմանէ, յորժամ կամեցար դու մենամարտիլ վասն իմ ընդ տեառն զանդկին: 'Ի յօրէ անտի բիւրիցս ասացեալ եմ ընդիս, "Ո՞վ, զի սիրտ երգեցն իմոյ այսչափ ազնիւ է քարի է, այլ զի մեռանիցի ես ահաբեկեալ վասն նորա:" Զօրհանապազ աղօթեմ ես առ Աստուած վասն մօրն իմոյ և քոյ, վասն քո և վասն տառապեալ պաշտակաց մերոց, իսկ յորժամ արտասեմ ես զանունն քոյ՝ սիրտ իմ յեռանդն հարկանի, ահիլ թուին աղօթք իմ: Սրտեռանդն ըզձիւ մաղթեմ 'ի Տեառնէ

և ՝ՀԻՆՉ ՀարԻք անցանԻցեն զՔև։ Էր՝ երԹատ այսՀամ Հեռագոյնս և ելանես ՝Ի բարձունս՝ ածել ԼինՁ պտուղ և ծաղկ։ Ո՞վ օրՀամ խանՁեալ ես և պարտասեալ։՝՝ — և փոքրիկ ԹաՀկինակաւն իւրով սրբէր զՔիրսն ՝Ի Հակատէ նորա։

Բայց և այնպէս յետ տակաւուց ըՀգաց Վերգինիա ծփիլ սրտին իւրոյ նորօրինակ ազդեցուԹեամբք։ Ծով ակունք նորա քաղցրաՀայեացք կորուսին զփաղփիւն իւրեանց, կորուսին և այտքն զԹարմուԹիւն իւրեանց, և մարմին նորա գլխովին կԹոտեալ Հարաւ ՝Ի ԹալկուԹիւն։ Ո՛Չ ևս Հանգչէր պարզուԹիւնն ՝Ի Հակատ նորա, և ո՛Չ ՝Ի վերայ շրԹանցն այլ խաղային ժպիտք։ Ցանկարծ զուարԹանայր առանց խնդուԹեան, և տրտմէր յանկարծ առանց վշտագնուԹեան։ Խոյս տայր յիւրոց անարատ զբօսանաց, պերդևէր ՝Ի Համբոյր գործոց իւրոց, և փախչէր ՝Ի սիրալիր ընկերակցուԹենէ իւրոցն մերձաւորաց, մեկուսանայր յածէր յևս Հոծ և յանքոյԹ առանձնոցս տնկագործուԹեանն, անգլխի պնտելով զՀետ այնորիկ Հանգստեան՝ զոր ո՛Չ ուրեք գտանել մարԹանայր։ Էր՝ զի ՝Ի տեսանել զՊաւլոս մերձենայր առնա խնդագին, և այն ինչ մատչիլ կամէր յողջոյն նորա, յանկարծահաս ինն ամբոխումն խըռովէր զնա, շառաղնուԹիւնն ծաւալեալ ՝Ի

վեր երևէր 'ի գունաթափ 'ի դէմս նորա։ և ականատեսքն ոչ ևս ատակէին յանանել զեղբօրն իւրոյ զդէմս։ Զայս տեսեալ Պաւլոսի՝ ասէ ցնա։ "Քարաժայռքս զգեցեալ են զդալարութիւն, և թռչունքն մեր երգս առնուն ընդ տեսանելն զքեզ։ ամենայն ինչ շուրջ զքեզ պայծառ են և զուարթ։ զի՞ է ապա, զի՞նչ այն որ զքեզդ տխրեցուցանէն։" Դալակէր ուրեմն համոզել զնա ողջագուրմամբք իւրովք։ այլ նա դարձուցեալ զդէմս իւրոյս տայր դողալով առ մայրն իւր։ Գգուանք եղբօրն իւրոյ յարուցանէին զտիր մեծ յուզմունս 'ի սիրտ նորա ամբոխեալ։ Հուարեալ և սխրացեալ Պաւլոսի՝ ոչ զօրէր ակահել զնորոյ նոր և օտարոտի քստմնութեան։

Եկն եհաս ահա ամուն՝ որ երբեմն ածէ զաւեր յընդ արևադարձիւք երկեալ սահմանաց վերայ։ և սիրեաց զաւեր իւր 'ի կղզւոյս վերայ։ Արեալ էր լրումն Դեկտեմբերին, այն ինչ արփայն յայծեղջեր արձակէ ձգէ զգաղաթնահայեաց հրայրեացս իւր 'ի վերայ Սովրիտիոյ յընթացս երից եօթներկաց։ Հողմն հարաւոյ, այն՝ որ բռնանայ գրեան երթէ ընդ ամն ողջոյն՝ այլ. ոչ ևս փչէր։ Սինանձև անհերթեթ մրրիկք փոշւոյ երևեալ յարահետ Հանապարհաց՝ ծառանան ծայրանան ընդ օդս։ ցերլուն հերձանին ամենայն մասունք

գեանի. կիզանին ամենայն գալար գեղք. ՇԵր-
մին շոգլիք ելանեն մականան 'ի կողաց լերանց.
և գետակք յաղթահարուստք ցամաքին ջրանան.
կիզանող գոլոշիք բռունք արտաշնչեն դաշտք՝
որ 'ի մուտս անդ արփւոյն երևէին հանգոյն
հրայրեցութեան. յաջորդէր գիշերն, այլ ջա-
ծէր զովութիւն հրատապ մթնոլորտին. և
գունտն լուսնակին արիւնեղանգ՝ համբարձեալ
'ի միգապատ հորիզոնի՝ երևէր վերնական
մեծութեամբ: Տուարք կթուցեալք կացեալք 'ի
կողաց դարևանդից՝ պարանոցաձիգք դէպ 'ի
յերկինս՝ յոգիս պարզել ապաստան եղեալ առ
շնչառութեանն, ուստուցանէին հովտաց կրկնել
արձագանգք զդառնաղէտ պոչիւնն իւրեանց.
նա՝ և տուարածն իսկ հապշիկ տապաստ յեր-
կիր անկանի և թարթափի առ ծայդ մի զովու-
թեան. այլ՝ արևամէն հրատապ թափ անցեալ էր
ընդ ամենայն մասունս երկրին. և ոգեսպառն
մթնոլորտ հնչեցուցանէր վանկէր զՀիւաղ միջ-
տաց՝ որք խծբծէին անցուցանել զպապակ իւր-
եանց յարիւն մարդոյ և կենդանեաց:

'Ի միում 'ի խորշակահար աւուրց
ատի յարեաւ Վերգինիա անհանգիստ և վրշ-
տագին, և դարձաւ վերատին 'ի ննջիւն խոնար-
հիլ. սակայն և ջինջ իւրք մարթացաւ գտա-
նել զքուն կամ զհանգիստ: Ուղղեաց ուրեմն
զգնացս իւր լուսով Տիկնոջն[20] երկնից առ աղ-

բիւրն կոյս և անքթիթ ակամբ յառեցաւ յակն նորա, որ՝ Թէպէտ և խորշակահար՝ ցընցղկանայր տակաւին 'ի լրթագոյն կողաց խարակին արծաթավայլ Թեղից պէս։ Զընկէց զինքն 'ի տաշտ աղբիւրականն, յորոյ 'ի զովութենէն ոգի առեալ վերստին՝ տեղի ետ բիւրաւոր վարդաքուշ յիշատակութեանց ախորժելեաց։ Ցուշ արար անձին զզբօսանս մօրն իւրոյ և Մարգարիտայ, 'ի լուանալ զինքն ընդ Պաւլոսի 'ի նըմին իսկ կոնքի։ Ցիշեաց եթէ զխարդ Պաւլոս պարհեալ այնուհետև զլոգարանն միայն վասն ինքեան՝ պեղեաց զայն, և արկեալ զսաւազ 'ի յատակ նորա՝ տնկեաց շուրջ զափամբքն զանուշահոտ տունկս։ Եւ տես անկեալ 'ի վերայ հոլանի բազկաց և լանջաց իւրոց զանդրադարձութիւն ծառոցն գագաթովն տնկելոցն 'ի ժամուն ծննդեան իւրոյ և եղբօրն իւրոյ, որք ամբարձ 'ի վերայ գլխոյն իւրոյ՝ պատատեալ էին զդալար բարունակս իւրեանց ընդ պտղոց։ Թուէր նմա բարեկամութիւնն Պաւլոսի և ևս քաղցրագոյն քան զհամատպրամ բուրմունս անուշից, և ևս ջինջ քան զականակիտ աղբիւրն, անվկանդ քան զմիակցեալ արմաւենիս, և ասպա հառաչեաց։ Զմտաւ ածելով ուրեմն զպահ գիշերոյն և զխորին առանձնութիւնն՝ աղմկեցաւ միտք նորա միւսանգամ։ Զահի հարեալ յանկարծ ընդոստ սարտնուս 'ի վտանգաւոր հովանեաց անտի

և 'ի ջրոց այնոցիկ՝ որ քան զՀրատապ արևուն Խառսգայթս թուէր նմա ջերմ լինիլ. Հապ-Խեպեաց առ մայրն իւր գտանել անտի զապա-ւինութիւն: Ստէպ առ անձկութիւնն զվիշտս իւր հոլանելոյ սեղմէր 'ի մէջ բռանց իւրոց զձեռս մօրն իւրոյ. Հարիւրիցս առ ձեռն լինէր նմա մնուանել զանուանն Պաւլոսի. այլ՝ տաղտա-պանք սրտին ոչ թոյլ առնէին շրթանց նորա զզօրութիւն արտասանելոյ. և խոնարհելով զգէմս իւր 'ի վերայ լանջաց մօրն իւրոյ՝ ատակէր և եթ առոգանել զնա իւրովքն արտասուօք:

Թէպէտ և հեշտեաւ 'ի վերայ հա-ամնէր տիկինն տ'ալ Դավրի սկզբանց անձկու-թեան դատերն իւրոյ. և այնպէս ոչ 'ի Խահ դատէր խօսիլ ընդ նմա առ այսր աղագաւ. "Ուղղեա զքեզ որդեակ իմ," ասէր. "գիմեա առ Աստուած՝ որ ըստ հաՀոյս տրամադրէ զողջութիւնէ և զկենաց մարդոյ. Զքէն այժմուս զփոթն առնու սա 'ի վարձատրել քեզ առ յա-պայս: Ցիշեա զի ածեալ եմք յաշխարհ միայն առ 'ի յարգել զառաքինութիւնն:"

Խորշակն ահնալին ձգէր յովկիա-նոսէն զջաղի շագլիս՝ որ մակացեալ ծառացեալ ընդ օդս 'ի վերայ կղզւոյն փարագրեալ կու-տակեցան զանդորդանօք լերանց. յորոց մառա-խլապատ սպառուածոց մերթ ընդ մերթ թօթա-փէին կայծակունք հրոյ: Առօրին լաւլի եղէն

որոտմունք, փայլատակունք Հայթմամբ զամպս պատառէն և վարժեն զՀաղագս, զդաշտավայրս և զծովս կրկնել յարձագանգս զզարհուրելի և զսարսափելի որոտմունս. անձրևք տեղատարափ սահանատարաս՝ կարկանչմամբ զլսելիս խլացուցանէին. ուղիք անհնարինք փրփրածինք թաւալագլոր գլէին 'ի կողաց լերինս. ծովացաւ յատակն հովտիս. դարձաւ եղև փոքրիկ կղզի դաշտակն գետնոյն՝ 'ի վերայ որոյ աստեալ էին խուղքն. և մուտք հովտիս 'ի սահանակսն պատուհան, ընդ որ յախուռն խաղային հեծեծալով ջուրք, կաւ, մայրիք և վէմք.

'Ի նմին վայրի ամենեքին սօսափեալ զոսկացեալ հոլանեալ ակումբ առեալ յաղօթս կային առ Տէր 'ի խրՀթի տիկնոջն տ'ալ Դավրի, որոյ յարկն հերձաւ ընդ մէջ 'ի մարտուցօղ 'ի բուռն հողմոց: Այնպէս պայծառ և ըստէպ էին փայլատակունքն, մինչ զի թէ և դըրունք քաջ աղխեալք՝ պատուհանք աղխաղխեալք, ամենայն ինչ 'ի բացավայրին պայծառ նշմարիւր 'ի բազմայօդ Հառագայթիցն: Անվկանդ արուեստամբ երթևեկս առնէր Պաւլոս ընդ Դամինկոսի 'ի միոյ խրՀթէն 'ի միւսն, առ չինչ գրելով զզայրացուցիչն փոթորկին. ասա՝ նեցկաւ ամրացուցանելով զվեՀակ ինչ. անդ՝ արկանելով զիսչակ. և դարձ միայն առ ընտանիս իւր առնելով, առ 'ի մնոցին զզարհօրանս վա-

բատել՝ յուսով անցման փոթորկին։ Եւ ահա դադարեցաւ դարեցաւ դղացաւ թուլացաւ անձրևն 'ի պահ երեկին. կանանաւոր հողմունք հարաւոյ հաւեցին զշարունակական զբնթացս իւրեանց. հալածեցան մրրկածուփ թուխպք յարևմուտս հիւսիսոյ. և արևին 'ի մուտս սփռեաց մուսանգամ զսկեթել վարս իւր ծաւալեաց 'ի յաշխարհ։

Զառաջինն ցանկացաւ Վերգինիա երթալ 'ի Հանգստեանն իւրոյ 'ի տեսութիւն։ Սերձեցաւ առ նա Պաւլոս վեհերոտն քայլիւ՝ և մատոյց զնպատակ բաղկին իւրոյ. ընդ որ ժպտելով հաւանեալ նորա՝ աջակցեալ ելին 'ի վիսին 'ի խրՀթէն։ Փայլեր պայծառութիւնն յանամպ 'ի յօդս. ելանեն ծայրանան արծաթափայլ գոլշիք 'ի գագաթանց լերանց ակօսաձև երգիծելոց 'ի փրփրածին հոսանաց։ Հեղեղք անհնարինք ամենևիմբ խրամատեալ և եղծեալ զդարաստանն՝ յոգուանց պտղածին ծառոց մերկացեալ էին արմատք. և անբաւ շեղջք աւազոյ ծածկեալ զշարս մարգագետնոց՝ խցեալ էին զլուալիս Վերգինիայ։ Սակայն և այնպէս կանդաղուն կային գագաթիքն՝ անկորուստ ուներով զիւրեանցն դասարութիւն. բայց ոչ ևս շուրջ պատէին զնոքօք մարգագետինք, տարփենայք և ոչ իսկ թռչունք՝ քան 'ի սակաւուց ամադաւելեր թռչնոց, որ արձանացեալ կացեալ

'ի կատար մերձակայ քարաժայռին՝ կականաւոր երգս առեալ ողբային զկորուստ ծագուց իւրեանց։

Յայս տեսիլ աղիողորմ և ամայացեալ գոչեաց Վերգինա. "Ածեր եղբա՛յր իմ զթռչունս աստ, և ահա՛ այսն չէ՞ ինչ անխայեալ 'ի նոսա։ Դու ինքնդ տնկեցեր զայս դրաստ, և ահա՛ քանդեալ վանդեալ յապականութիւն է եղեալ. Ամենայն ինչ ուրեմն եղծանին որ 'ի վերայ երկրի. ամենայնն չքանան չքոտին. և միայն երկինք չհպատակին այսմ փոփոխութեան։" — "Անկա՛ծ," պատասխանեաց Պաւլոս, "իցէ՞ թէ կարող լինէ՞ տալ քեզ զնմին երկնային։ Այլ զի՛նք ինձ և ո՛չ մի ինչ երկրային։" — "Է՛ առ քեզ," գարձոյց Վերգինիա շառաչնութեամբ. "ուներս դու զկենդանագիրն Սրբոյն Պաւլոսի։" Ուր ուրեմն զրաւեաց զբանս իւր, յորժամ Պաւլոս սլացաւ սրացաւ 'ի գիւտ նորա 'ի մօրն իւրոյ 'ի խրՀիթ։ Պատկերս այս էր փոքրիկ կենդանագիր ինն անապատաւորին Պաւլոսի. զոր 'ի հարուստ ամանակաց անտի իւրն մանկութեան կրէր բարեպարիշան Մարգարիտ 'ի պարանոցն իւրում, և զոր յետ ծնանելոյ զորդին իւր կախեաց զպարանոցէ նորա։ Այսն զի՞ 'ի ժամանակս յղութեանն իւրոյ դէպ եղև՝ զի յորժամ քարձի թողի մառնեալ էր յամենեցունց

'ի վերայ աշխարհի, այն ինչ յառեալ նկատէր զպատկեր բարեսէր մենակեցիս, ծնունդն իւր ձգէր յինքն, կամ գէթ այս օրինակ երևակերպեաց զնմանութիւն ինչ յարգելի շահատակիս։ Ա՛ռ այսր աղագաւ անուանեաց զորդին իւր Պաւլոս՝ տալով նմա պաշտպան զուարքն զայն, որ անցոյց զկեանս իւր հեռի 'ի մարդկանէ. որք զկնի պատրելոյ բարձի Թողի լքին զնա։ Յետ ընդունելոյ Վերգինիայ զպատկերն զայն փոքրիկ 'ի ձեռաց Պաւլոսի, սոսկ ցնա ակնկոծելով. "Տեն՛ջալի եղբայր իմ. այս խոստմնամբ չՀրաժարիլ երբէք յայսմանէ մինչ դեռ տակաւին ունիցիմ զշունչ. և ո՛չ երբէք զմոռացութեամբ Հարից՝ եթէ զոր միանգամ ուներիցն 'ի վերայ աշխարհի՝ ետուր զայն դուք ինձ։" Յայս բան բարեկամական, յայս անակնկալ փոխադարձ մտերմութեան և քաղցրութեան փորձ փորձեաց Պաւլոս գիրկս նմա արկանել, այլ անդէն և անդ խոյս տուեալ թեացաւ պարզեցաւ անտի. Թողեալ զՊաւլոս յակՀիուս և 'ի զարմանս դրաւեալ՝ ո՛չ բաւելով ակահել զմիտն նորօրինակ այս բարուց։

'Ի նմին ժամանակի առաց Արգարիտ ցտիկինն տ'ալ Դավրի. "Զի՞ է զի ո՛չ միաւորեմք զմանկունս մեր ամուսնութեամբ. սիրեն նոքա զմիմեանս կաթոգին սիրով։" "Տակաւին դեռահասակ են", պատասխանեաց տիկինն տ'ալ

Դամբի, " և ամենևիմբ անքատ: Որպիսի՞ վըշ-
ատգնութիւն մեզ տեսանել զՎերգինիա ըն-
ծայել յաշխարհ զոժբաղդ մանկունս, մինչ ոչ
թերևս ունիցի զհերիք կարշն 'ի դիւեցուցանել
զնոսա: Ծաղկեալն ալեօք հաւիշկն քոյ Դոմին-
կան ոչ բաւեսցէ թերևս ուժել յաշխատու-
թիւն, ապիկար է Մարիամ և անուսագ. իսկ
ես՝ սիրելիդ իմ՝ տեսանեմ զկ յընթացս հըն-
գեռատասան ամացս տիր քաղեցան զօրութիւնք իմ.
կեանք մարդոյ թուանին թևանան 'ի ջերմին
գաւառս, և 'ի գլուխ ամենայնի՝ որ միանգամ
անկեալն են ընդ Հնշմամբ թշուառութեան:
Մի միայն ակնկալութիւնն մեր մնայ ուրեմն Պաւ-
լոս. մնացուք մինչև կազմութիւն մարմնոյն
զգեցցէ զուրուազութիւն, մինչև զօրացի թե-
արկել խնամ ածել մեզ իւրովքն վառտակօք:
Զարդիս չէ քեզ անծանօթ, զի ընուլ և երթ
բաւեմք զաւուրն զկարօտութիւն. իսկ երթէ
ուղևորիցք զՊաւլոս առ վայր մի 'ի Հնդիկս, ա-
ջողեսցի թերևս նմա գնել զստանկ մի 'ի ձեռն
առ և տրութեան. և 'ի դարձին իւրում յայն-
ժամ միաւորեսցուք զնոսա. զի աւատամ երթէ
ոչ ոք յաշխարհի կարէ այնպէս երջանկացուցա-
նել զդուստրն իմ՝ որպէս որդին քոյ: Օ՞ն,
հալցցուք նախ և զդրակիցն մեր: "

Ըստ այնմ և հալցին յինէն զխոր-
հուրդն իմ. ընդ որ և ես համամիտ եղէ.

“Ծովք հնդկաց,” նկարագրեցի նոցա, “խաղաղ են և անվրդով. և ’ի բարեյաջող եղանակս տարուոյն հաղիւ երկարածգի Հանապարհորդութիւնն քան զեօթնեակս վեց: Թղկեացուք մեք վասն Պաւլոսի զսակաւ բաստս ’ի դրացութեան մերում, ուր սիրելին է ամենեցուն: Եթէ տատարիցեմք նմա յոմտ մի անթափ բամբակօք, որ առ չինչ պիտենանայ մեզ առ ’ի չգոյէ Հաւարակի. սուն մի ոսնիաղիւք՝ որ պիտառոցի մեզ ’ի պէտս այրեցման և եթ. և գոյշն ինչ ռէտնիւ՝ որ գտանի ’ի Հաղագի մերում. վաՀառեցին այսոքիկ՝ մեզ ում և պէտ՝ թէուութիւնքս յաջողութեամբ ’ի Հնդիկս:”

Յանձն առի ես ինդրել զՀրամանն Մոնսիուր տ’ լա Պուռտոնէսին, առ այսր ուղևորութիւն. սակայն կալայ ես զառաջինն ծանուցանել Պաւլոսի զայնմանէ. և որչափ մեծ զարմանք կալան զնս՝ յորժամ սա կատարելութեամբ իւիք գեր քան զՀատակին իւրոյ աստիՀան ասաց ցիս. “Եւ զի՞ է զի ցանկաս դու՝ զի զերդևեցայց ես յիմոց ընտանեաց, առ ’ի ինդիր մուրացածոյ և առժամանակեայ մեծութեանց: Ոչ՞ թէ առաւել արդիւնաբեր ելոցի առևտրութիւնն քան զերկրագործութիւն, որ Հատուցանէ ընդ միոյ յիսուն և Հարիւր: Եթէ քարքեմք՝ եթէ գեղծամք Հապաղել ’ի տուրեառութիւն, զի՞նչ այլ քան

զայս վայելչագոյն, տանել 'ի շէնս զաւելորդս մեր առանց ուծանալոյ իմոյ 'ի Հնդիկս: Ասեն ցիս մարքն մեր՝ զի յեցեալ է Դամինկոն յալիս ծերութեան. և թէ՝ ելով իմ դեռ դեռա-հասակ, ըեռտեմ զօր հանապազ զուրուազու-թիւն արուորութեան. Իսկ եթէ 'ի բացակայ-ութեան իմում դէպք ինչ անցանիցեն և 'ի վեր քան զամենայն ընդ Վերգինիա, որ արդէն իսկ ընկՀեալ Հնշի... Ա՛չ. ո՛չ կարեմ ես բացորո-շել բացակայել 'ի նոցանէ:"

Զմեծ իմն զգրմբաղ ծնուցին ինձ բանքս այսոքիկ. այնու զի չէր թագուցեալ յինէն տիկինն տ'ալ Դավրի զդատերն իւրոյ զվե-Հակ, և զանձուէն իւր անջատելոյ զնոսա 'ի մի-մեանց առ ժամանակ մի: Ա՛չ ելեալ 'ի վեր Հանել Պաւլոսի զբանս զայսոսիկ:

'Ի սմին ժամանակի գալուստ նաւու միոյ 'ի Գաղղիոյ՝ երբեր տիկնոջն տ'ալ Դավրի ըզ-քարտէս ինն Հօրաքեռն իւրոյ: Հրշտեալ 'ի մօտալուտ օրՀասին յաՀանիստաց, որ և եթ տիկէր 'ի թանկ անցանել 'ի սիրտ այսգոյն անաղդակ. աւաքեալ 'ի յերկեան խօթութենէ՝ որ կթուցեալ ներգեւեալ ջլատեաց զնա. ծիւ-ըեալ ՀղՀմեալ 'ի ծերութենէ՝ խնդրէր 'ի դատերէն եղբօրն իւրոյ դարձ առնել 'ի Գաղ-ղիա. այլ եթէ անաւագութիւն անձին իւրոյ ո՛չ ներէր ձեռնամուխ լինիլ յայսպիսի ընդ-

երկար ուղևորութիւն, երդմնեցուցանէր զնա գնեմայ ուղևորել զՎերգինիա. զոր խոստանայր ՀաՀել յուսմունս բարիս, աղաղել վասն նորա զամուսնութիւն շքաւոր և թողուլ զնա 'ի ժառանգութիւն հարստութեանց իւրոց ողջոյն։ Տագնապք անհնարինք կալան զամենեսին ընդ զլաւիլ վերծանութեանն։ Դամինկոն և Մարիամ հարան յարտասուս։ Պաւլոս յսիշութիւն պարտեալ և արձանացեալ՝ թուէր պայթիլ սրտին առ սրտմտութեանն։ Իսկ Վերգինիա յակՀիւս՝ յառեալ 'ի մայրն իւր, ոչ զօրէր և զբան մի արտասանել։

"Եւ թողցե՞ս զմեզ," գոչեաց Մարգարիտ ցտիկինն տ'ալ Դավրի։ "Ո՛չ. մտերիմդ իմ, ոչ. զքեզ ոչ թողից." պատասխանեաց տիկինն տ'ալ Դավրի. "և զձեզ ո՞վ որդեակք իմ, ոչ թողից երբէք — ընդերկար ձգեցան կեանք իմ 'ի միջի ձերում. պարտ է ինձ ըստ պէտս նորա առաջի ձեր վՀարել։ Քանզի երկնի մտերմութիւնն՝ որոյ իմոյ. քաղցր և երանութիւնն՝ զոր 'ի սէր ձեր զգացի — երթէ վտանգեսցի կեանքն իմ, անցեալ թշուառութեանց իմոց պիտի առագրել — սիրտ իմ յանհնարինս վերաւորեալ յանգթութենէ ազգակոնի միոջ և կորստեամբ առն իմոյ՝ առաւել արգահատեցաւ և երջանկացաւ առ ձեզ ընդ յարկաւ աղքատիկ խրՀթացս, քան զոր միանգամ ամե-

նայն մեծութիւնք ազգականին իմոյ բաւեն տալ ինձ յիմ իսկ 'ի Հայրենիս։

Յայս փաղաքուշ բանս նոցա ամենեցուն աչք յորդեալ զերդան արտասուօք ցնծութեան։ Պաւլոս գիրկս արկեալ տիկնոջն տալ Դաւրի՝ գոչէ. "Եւ ոչ ես՝ ոչ մայր իմ՝ Թողից զքեզ բնաւ.—ոչ երբէք Հանապարհորդեցից 'ի Հնդիկս.—ամենեքին մեք աշխատեսցուք վասն քո. ամենեքին մեք լցուսցուք զկարիս քոյ։ "Իսկ յամենեցունց միջն, նա՝ որ ցուցանէր ըզսուն շարժումն 'ի բանութեանց կրից, և որ Թերևս առաւել ևս զգայր քան զամենեսին՝ էր Վերգինիա. քաղցր զուարթութիւնն ընդ օրն ողջոյն՝ ծնունդ անդորրութեան սրտին՝ երկից զամենեսին բերկրաբարբարՀ ՀաՀութեամբ։

'Ի վաղիւն ընդ մերկանալ աշուղջոց, այն ինչ վերառաքէին զսովորական առաւօտու պատարագն իւրեանց փառաբանութեան, եկն Դոմինկոն զեկուցանել նոցա, եթէ աղնուական ոմն հեծեալ՝ պաշտեալ յերկուց զանգկաց՝ գայր գէպ 'ի տնկադրծութիւնն։ Որոշուր տալա Պուռտոմնէան էր սա, որ եմուտ 'ի խրՀիթն՝ ուր զամենեսին եգիտ բազմեալ շուրջ զնախաՀաշիկ սեղանով։ Վերգինիա ըստ սովորութեան երկրին Հանդերձեալ էր զսուրՀ և զոլիզ եփեալ 'ի ջուր. յոր յաւել ևս զեփեալ եաթիս և զթարմ գագաՀնայս։ Տերունք

ջաղաքի զտեղին սինդանի ունէին. և վե-
հեկք դդմենուոյ հեղեալ յերկուս՝ զթերին
սխէ ից ընուին։ Մեծ զարմանք կալան զդե-
հապետն ընդ անզարդութիւն տանն. որ և դար-
ձեալ առ տիկինն տ'ալ Դաւրի ասէ ցնա, թէ-
պէտ և իրակութիւնք հասարակաց ոչ երբէք
թոյլ առնէին ինքեան ձեռնամուխ լինիլ 'ի
գործառնութիւնս անհատից, և այնպէս բազում
իրաւունս ունէր բարեգործութեանց իւրոց։
"Ունիս դու տիկին," յաւել ասել, "զհօ-
րաքոյր մի 'ի Փարիս՝ վարաղուն և կարի փար-
թամ. որ և իսկ ակնունի զի փութացիս տե-
սանել զնա, քանզի ցանկայ թողուլ զքեզ 'ի
ժառանգութիւն ամենայն հոխութեանց իւրոց։"
Տիկինն տ'ալ Դաւրի պատասխանեաց նմա՝ ե-
թէ անաւագութիւն անձինն ոչ ներէր ին-
քեան քուռն հարկանել զայսգոյն ընդերկար
հանապարհորդութենէ։" Գոնէ," կրկնեաց
Մոնսիուր տ'ալ Պուռատոնէս, "անմարթ է
քեզ առանց անիրաւութեան վրէպ կացուցա-
նել զայս չքնաղագեղ պատանուհի՝ զդուստրն
քո յայսպիսի հարուստ ժառանգութենէ։ Ոչ
ծածկեցից 'ի քէն՝ եթէ հօրաքոյրն քոյ թա-
խանձեալ է զիս ստիպել զքեզ վերադառնալ
'ի քոյին հայրենիս. և ևս՝ զստանալն իմ զա-
ռաջնորդական թուղթս, որով կարգեալ լինիմ
վարել զիմս իշխանութիւն առ այս վախճան՝

եթէ հարկն ստիպեցէ։ Այլ զի անձուկ իմ է 'ի կիր արկանել զհեղինակութիւնն իմ առ երջանկութիւնն և եթէ բնակչաց հատուածիս, ակն ունիմ 'ի խոհականութենէդ՝ զի մտադիւր անտայցես յայս պատարագ սակաւուց ամաց, յորմէ կախի բարօրութիւն դստերն քոյ յաշխարհի և երջանկութիւն քոյոց մնացեալ աւուրց։ Առ ի՞նչ ապա եկեալ եմք յայս կղզիս։ Ո՞չ ապաքէն առ ստացումն մեծութեանց։ Եւ զի՞նչ այլ քան զայս վայելչագոյն՝ դարձ առնել և գտանել զայն 'ի հայրենիս քոյին։"

Զայս օրինակ ասացեալ՝ դնէ 'ի վերայ տրապղին զպայուսակ մի լի մարչլովք, զոր ունէր մին 'ի ստրկացն 'ի յուս։ "Զայս," յաւել ասել, "շնորհեալ է հօրաքոյրն քոյ վասն կարեւոր նախապատրաստութեանց Հանապարհորդութեան բամբշլին։" Ապա մեղմ օրինակ ի՞մն ստգտանելով զտիկինն տ'ալ Դավրի առ անփոյթ առնելոյն դիմել առ ինքն 'ի կարօտութեան իւրում՝ գովեաց և այնպէս զանվկանգ արութիւն սրտի նորա։ Առ այս բան դեհապետին պատասխանի արար Պաւլոս, "Այրն իմ դիմեաց առ քեզ տէր՝ յաւուրս նեղութեան իւրոյ, այլ զի դու ջարաչար լինկալար զնա։" "Զմիւս ևս ունի՞ս տիկին դու՝ զորդի։" եհարց Մոնսիուր տ'ալ Պուռտոնէս ցտիկինն տ'ալ Դավը։ "Ո՛չ տէր," պատաս-

խանեաց տիկինն տ'լա Դաւրի. "սա է որդի համ-
շերաքին իմոյ. այլ զի սա և Վերգինիա փօրի-
նակ սիրելի են մեզ երկոքին" : — "Պատա-
նիդ դու," յայնժամ ասէ բդեշխն ցՊաւլոս,
"յորժամ ուն մի հմտանայցես փորձոյ աշխար-
հի, տեսցես եթէ զիւրդ պատրաստութիւնն
սաղսկեալ յարամբի յիշխանութեան մարդկան՝
և տայ նմա ընծայել արուեստակեալ մոլու-
թեան զայն ամենայն՝ որ յաւէտ անկ և պատ-
շաճ է պարկեշտ արդիւնաւորութեան :"

'Ի խնդրոյ տիկնոջն տ'լա Դաւրի
բազմեցաւ Մոնսիուր տ'լա Պուռտոննէս առ ըն-
թեր նորա 'ի սեղան՝ ուտելով զնախաճաշիկ
խարշեալ սրճոյ և որթոյ: Ցաւէտ իմն զուար-
ճացաւ նա ընդ կարգաւորութիւն և մաքրութիւն
թագաւորական ընդ յարկաւ աղքատիկ խրճթացն,
ընդ համաձայնութիւն երկոցունց բարեհամբոյր
գերդաստանացն, և ընդ փոյթ երանդն հինա-
ւուրց պաշտակաց նոցին. "Ասա՛ն," ասէ յայն-
ժամ, "տեսանեմ զփայտեայ աղոտ միայն, սա-
կայն գտանեմ զզուարթերես դէմս և զսիրտս
ոսկիս:" Զմայլեալ Պաւլոսի ընդ քաղցրաբա-
նութիւն շահսպլին՝ ասէ ցնա. "Ցանկալի է
ինձ տէր՝ գրել 'ի համար քոյոյ բարեկամի. զի
այր բարի ես դու:" Հաճութեամբ ընկալաւ Մո-
նսիուր տ'լա Պուռտոննէս զայս կզգսական յարգու-
թիւն, և կալեալ զձեռանէ Պաւլոսի՝ խոստա-

ցաւ նմա զիւրն յաւերժական բարեկամութիւն։

Զկնի Հաշուն ոշոգի առեալ նորա զտիկինն տ'ալ Դավրի՝ ծանոյց նմա եթէ յետ ասկաւուց խաղայր գնայր հաւ մի վարել զՀանապարհն Գաղղիոյ։ ուստի 'ի դէպ էր հրաժեշտ ջտալ յուզևորելոյ զդուստրն իւր յայսպիսում դիպող ժամու։ եթէ՝ յանձն առնէր զնա տիկնոջ միւմ իւրումն ազգայնոյ, որ և իսկ Հանապարհորդակից էր լինելոց 'ի նմին նաւու։ և թէ՝ չէր օրէն առ չմեկնելոյ 'ի դստերէն իւրմէ առ սակաւ ամս հրաժեշտ առնուլ յայսանակ հարուստ ժառանգութենէ։ "Հօրաքոյրն քոյ," յաւել ասել, "ոչ յաւելցէ 'ի կեանս իւր քան զամս երկուս և եթ, զոր հաստատեցին ինձ բարեկամք նորա։ Քո՛ չ խորհեաց ապա։ Ո՛չ ցանկ յայց ելանէ մեզ բաղդն։ Հանց զբարեկամս քոյ։ Ամենայն ոք կորովախոհ՝ հաւանն ընդ իմս ելցէ խորհուրդ։" Այսմ պատասխանի արար տիկինն տ'ալ Դավրի, եթէ "և չինչ այնպէս ըղձալի ելով ինքեան քան զդստերն իւրոյ երջանկութիւն յաշխարհի, 'ի կամս նորա առնէր ապաստան զչուրեն 'ի Գաղղիա։"

Ուրախ էր տիկինն տ'ալ Դավրի յարգել զպատեհն անջատելոյ առ ժամանակ մի ըզՊաւլոս և զՎերգինիա առ և ևս պականելոյ զերջանկութիւն նոցա առ յապայս։ Ոշոգի ուրեմն

առեալ զդուստրն իւր՝ ասէ ցնա՝ “ Հայրենց դուստրդ իմ՝ հայրենց՝ տես զի զանդիկքն մեր յեղեալ են յալիս Ծերութեան — Պաւլոս է գեռ գեռահասակ — Համբուրէ Արգաբիտ զալիս Ծերութեան՝ և ես անաւագ՝ ապաքէն ոտն առ ոտն բերիմ առ դուրս մահուսն: Եւ՝ ո՞վ աղետիցս՝ եթէ պակասեցայց ես 'ի կենցաղոյս՝ զի՞նչ ինչ ոչ անցանիցէն ընդ քեզ ընդ մատնածդ 'ի յընչից յանապատի աստ՝ յայնժամ երկիցիս միայնակ առանց ուրուք օգնականի՝ որում մարթ լցէ տալ քեզ զվիդն՝ հարկեսցիս յանդգնակի յաշխատութիւնս առ 'ի զքոյին տառապեալ ինքութիւն տանել յաշխարհի: Այս պատկեր՝ որդեակ իմ՝ լցուցանէ վշտաք զհոգիս:” “ Ո՞վ մայր իմ՝ ” պատասխանեաց յայնժամ Վերգինիա՝ ” տահմանեալ է զմեզ Աստուածն յաշխատութիւն և 'ի վատտակ — ուստայ 'ի քէն աշխատիլ և օրհնել զնա զօրհանապազ: Ո՛չ երբէք անտես արար զմեզ Տէր՝ և ոչ անտես երբէք արասցէ: Նախախնամութիւն նորա տքնի յաւէտ 'ի վերայ թշուառացելոց: Զայս՝ տենչալի մայր իմ՝ զայս դու ինքդդ կրկնէիր ստէպ 'ի լուր իմ — Ո՛չ կարեմ բացորոշիլ՝ մայր իմ՝ ոչ կարեմ անջատիլ մեկնիլ փարատիլ վհարիլ 'ի ձէնջ:” — “ Մի փայն նպատակ իմ՝ որդեակ իմ՝ ” կրկնեաց տիկինն տ'ըս Դավրի՝ “ է զքեզ երջանիկս առնել և ա-

մուտնացուցանել յաւուր միում ընդ Պաւլոսի՝ որ ոչ է հարազատն քոյ — խորհեաց՝ երթէ ըզքէն միայն կախի բարօրութիւն և բաղդ նորա։"

Կուսան տարփաւոր գրէ, երթէ աշխարհ ամենայն տգէտ են զկրօնս իւրոց. աքօղէ զաչս իւր նովին պարտակաւ՝ զոր արկեալն է 'ի վերայ սրտին. այլ յորժամ վերացուցանէ զայն գգուող ձեռն փայփայիչ, գաղտնածածուկ սիրոյն անձկութիւնք յանկարծ վկանդեալ խորտակեն զսահմանն. տեղի տան յայնժամ փաղաքուշ մըտերմութեանն՝ այն ամենայն աչալուրջ զգուշութիւնք և գաղտնութիւնք, որով Հնշեալ սիլոն պատեալ էր զզգայութիւնս իւր։ Ցաւէտ ինն զգածեալ Վերգինիա 'ի նորոգ փորձոյ աստի խանդաղատանաց մօրն իւրոյ՝ պատմէ նմա երթէ զնարդ անհնարին էին տագնապքն՝ որոց վկայ միայն ինքն Աստուած. եցոյց երթէ սարգ տեսանէր զշնորհս Նախախնամութեանն 'ի պարգևեալն անդ ինքեան զգորովագութ մայր. որ հաւան ընդ իւրն ելով հակամտութիւն՝ առաջնորդէր ինքեան իւրովքն խորհրդովք. երթէ՝ զօրացեալ այսուիկ օժանդակութեամբ՝ ամենայն խոհականութեամբ պէտք էին ինքեան կալ մնալ առ մայրն իւր, ոչ ինչ հոգալով վասն ներկայից և առանց ինչ կասկածանաց վասն ապագայից։

Տեսեալ տիկնոջն տ'ալ Դաւիթի երթէ յընտանի խստակցութեանց ստի եալ ծագեցաւ ամենեին օտար քան որուն ակն ունէր կատարած՝ ասէ. "Տենչալի որդեակ իմ, ոչ ես բըռնաբարեցից զյաժարութիւնս քոյ. խորհեաց անաշխատ, տակայն թաքո՛ի Պաւլոսէ զզգացումն քոյ։"

Այն ինչ՝ի մուտս լինէր արիին, մտանէ՝ի սենեակն՝ ուր տիկինն տ'ալ Դաւիթի և Վերգինիա Հոլոնեալ էին՝ խոստովանահայրն նոցա։ Սա էր քարոզիչ մի կղզւոյն՝ զոր յղէր դէ Հապլետն։ Ընդ մտանելն՝ի սենեակն, "Փառք Աստուծոյ," զոչէ. "որդեակք իմ, տուք փառս Աստուծոյ. վՀարեցաւ թշուառութիւնն ձեր ամենայն. մերձեալ է բաղդն. փարթամութիւնք Հոխութիւնք Հասեալ են առ դրունս ձեր։ Ահաւասիկ ժամն ընդունելի. մարթ է ձեզ զարդիս ունկն մատուցանել քաղցր թելադրութեանց բարեսէր սրտից ձերոց և բարութիւնս առնել աղքատաց։ Գիտեմ զոր միանգամ ասացեալ է ձեզ Պոնսիուս տ'ալ Պուռտոննէսին, և զոր միանգամ դուքդ պատասխանեցիք։ Անաւագութիւն անձինդ՝ տիկին՝ պարտաւորէ զքեզ կալ ճիալ աստուծոյ. իսկ դուն՝ օրիորդ՝ և զնոտի բաղբաղայս անգամ տալ ինչ ոչ ունիս։ Պարտ է մեզ Հպատակ կալ կամաց արարչին. պարտ և Հնազանդիլ մերոց Հինաւուրց աղգայ-

նոց՝ թէ և անարդարագունից։ Պատարագ իմն ուրեմն խնդրի 'ի քէն, զոր հրամայէ Տէր։ Եւ նա զանձն իւր վասն քո, տուր ուրեմն ըստ նորայն օրինակի և զքեզ ինքնդ վասն բարոյ-ութեան քոյոց ընտանեաց։ Գիտեմ զի ուղղ-գնացութիւնն քոյ 'ի Գալղիա պատկերցի երջան-կութեամբ։ Ինչ ոչ երկուանամ ուրեմն զի հաւան ընդ այս լեցիս Հանապարհորդութիւն՝ ի մի սիրելի աղջիկն։"

Վերգինիա կորակնեալ՝ պատասխանի արար նմա զսփալով, "Ո՛չ ինչ ժպրհեցայց՝ եթէ հրաման Տեառն է՝ այդմ ընդդէմ գնել։ Եղիցի, կամք Տեառն օրհնեալ եղիցի," ասաց ողբալով։

Եւ ուրեմն խորհրդածուն տանել զաւետիս աղաղութեան առաքելութեանն իւրոյ, ծանուցանել բդեշխին, և տիկինն տ'ա-Դավրի առաքեաց զԴոմինկան կոչել զնս 'ի խոր-հուրդ ուղղգնացութեանն Վերգինիայ, հակա-ռակեցի ես այսմ խորհրդոյ ջուսոյ նորա։ Աղ-բիւր իմն երջանկութեան գոլ թուի ինձ, զի նախադասեցուք բաղդին զօդուտ բնութեան, և մի՛ երբէք 'ի խնդիր ելցուք այնմ 'ի հեռա-ւորս՝ որ գտանի 'ի ծոցի մերում։ Այլ՝ զի՞նչ մարթ էր ակնունիլ 'ի խոհական խորհրդոց իմոց ներհակելոց պատիր երևութից փաղփիւն մեծութեանց, զի՞նչ 'ի յանպաՀոյՀ ձեռնարկ-

կութեանցս ընդդիմադրելոյ 'ի նախապաշարմանց աշխարհի և 'ի հեղինակութենէ խմբէ՝ զոր տիկինն տ'ս Դավլի ունէր 'ի սուրբ համարի: Բամբիշս այս 'ի բերմանէ և եթէ յարգանաց հալցանէր յինէն զիսորհուրդ. զի արդեամբք վճարեցան խորհրդածութիւնք նորա, յետ լսելոյ զընտրութիւն խոստովանահօրն իւրոյ: Նա՝ և Մարգարիտ իսկ՝ որ քաջ հասու այն եւլով օգտել ոլգւոյն իւրոյ հարստանալով Վերգինիայ՝ մինչև ցայնժամ հակառակեալ էր ջուսյ նորա, դադարեցաւ 'ի ներհակելոյ: Իսկ Պաւլոս՝ տգէտ զընտրութենէն և խուսվեալ 'ի գաղտնածածուկ խօսակցութեանց տիկնոջն տ'ս Դավլի և Վերգինիայ, տեղի եւ անկաւ 'ի խորին թախծութիւն: "Նիւթեն նոքա զինն ընդդէմ իմոյս խաղաղութեան," գոչեաց. "այնու զի այնչափ փոյթ ունին զերան յինէն թաքուն պահելոյ:"

'Ի նմին ժամանակի հուչակ հարեալ 'ի կղզւոջն, եթէ յայց ելեալ էր բաղդն քաղաքաժայռից այսոցիկ, և ահա տեսանէաք զամենայն ազգս վաճառականաց մագլցեալ ելանել ընդ բարձրաբերձ անդորդանս նոցա, և պարզել տիռել յաղքատիկ խրճթին զամենահարուստ Հռոմիութիւնս հնդկաց աշխարհին: Ամենագեղեցիկ գիմաթիք կոնտելլայ, թաշկինք Փալիսգաթայ և Մուշլիրանդարայ, հասարակ, շերտա-

ւոր և սանկտկար շիլայք Դաքքայի պայծառ որ-
պէս զլոյս: Եւ ևս միւս վաճառականք պարզեալ
տարածեցին զվաղվաղուն մետաքսեայս Սինէացւոց
աշխարհին. սպիտակ, կանաչ և կարմրափայլ,
փայլուն և ոսկրկ գիպակք Դամասկացի. վարդա-
գոյն Թաֆտայք, աղգք աղգք տատինաց, պե-
լանջից և մնդասց Ֆռանկիւնոյ հատարակք և ծաղ-
կաշարդ փաղփաղեալք. պիկենք կակուղ որպէս
զաղուամազ. սպիտակափայլ և մանշակ նանքինք
և կալիկովք Մատակասկարեանք:

ՀաճուԹիւն տիկնոջն տ'ալ Դավթի
էր, զի որ միանգամ յաչս դատելն իւրոյ Թուէր
գեղեցիկ՝ զայն գնոյ գնեսցէ. և Վերգինիա
ընտրէր զայնպիսիս՝ զոր միանգամ հաճոյ և ըն-
դունելի յաչս մնոյն իւրոյ և Մարգարիտայ և
որդւոյ նորին լինիլ համարէր: "Այս," ասէր,
"պիտանացի առ շուք հանդերձից տանն. և այն
կարևոր Թերևս եղեցի Մարիամու և Դամինկոնի:
"'Ի սուղ ժամանակի պայուսակն մարչէլաց դար-
ձաւ մարմին անհոգի նախ քան զիւրն հո-
գալ զպիտոյս. և ինքն պարտաւորեցաւ ընդու-
նել զմանն 'ի պարգևեաց յիւրմէ անտի բաշ-
խելոց գերդաստանին պարու:

Աշտագնեալ Պաւլոսի ընդ այս պար-
գևս բաղդին՝ զոր գիտէր լինիլ գուշակու-
Թիւն մեկնելոյն Վերգինիայ՝ եկն յետ սակաւ
աւուրց 'ի բնակուԹիւնն իմ: "Քուրիկն իմ

հեռանա՞յ 'ի մէնջ։" գոչէաց սրտաքեկու-
թեամբ։ "արդէն վՀարեցա՞ն ամենայն պատ-
բաստականութիւնք Հանապարհորդութեան նորա։
Ազէ։ ելէ, երդմնեցուցանեմ զքեզ, հրապու-
բեա զմայր նորա և զեղբն, զի մի՛ թողցեն ըզ-
նա — զի արգել լեցին նմա։" Ո՛չ յակքարեցայ
հրաժեշտ առնուլ 'ի թախանձանաց պատան-
ւոյն։ թէ և քաջ գիտակ էի առ չինչ զօրա-
նալոյ յանդիմանութեանց իմոց։

Եթէ Վերգինիա գեղանի երևէր
զգեցեալ զղաղաքն Բանկալայի և պշաւ թաշ-
կինակ կապեալ զգլխովն, ո՞րչափ ևս առաւել
ուրեմն աՀողեալ էին գեղազանութիւնք նորա՝
յորժամ թլիփ ածեալն էր շքագիր զարդուք
բամբշաց երկրիս։ Շիլայ սպիտակ քան զձիւն,
դրուագեալ վարդագոյն կերպասիւ՝ երգուն էր
զշնորհաշարդ հատակ նորա։ Լանջանոցն երկկու-
ղի զվայելչութիւն փաքրիկ բայց նաղելի գիտա-
կան նորա առաւելոյր։ և խարտեաշ գէսքն թաւ-
սրծի շփոթեալ էին անփութութեամբ ընդ
անպաՀոյՀ գլխաշքին։ Լի էին լեՀք լուսոյն ար-
տայայտութեամբք թաղձութեան։ և յուզմունքն
կրից՝ որով սիրտն տոչորիւր՝ ծածկէին զդէմս
նորա շառագնութեամբ, և ձայնի նորա զՀընչ-
ելն ինն տային ամբոխեալ։ Հակադրութիւն
վշտատեսիլ դիմաց նորա և շքեղ Հանդերձիցն
և ևս նաղելի զնա երևեցուցանէր։ նա՝ և ան-

հնար էր յականել կամ լսել նմա առանց կա-
րեկցութեան։ Անդոհութիւնքն Պաւլոսի դամ
քան զդամ զօրացեալ Ճնշէին զնա։ և Սարգ-
գարիտ ոչ ևս կարելով ըմբերել տեսանել զորդ-
ւոյն իւրոյ զտուայտանս՝ ոշոգի առեալ և ասէ
ցնա։ "Ընդէ՞ր որդեակ իմ, ընդէ՞ր գգուեալ
տածես զյոյս պատիր և մնոտի, որ և ևս դառ-
նացուցէն զդերևանալն յուսոյդ։ Ժամ է արդ
զի հոլանեցից մերկացից թարգմանեցից քեզ
զգաղտնիս խորոց կենդանութեանն մերոյ։ Բամ-
բիշ դաստրն տ'ալ Դաւրի սերի 'ի մօրէն 'ի
փարթամ և յաղնուազուն տոհմականութենէ։
մինչ զի դու որդի ես միոյ աղկաղկ գիւղական
աղջկան։ և յաւէտ ջաղագոյնն՝ զի անհարազատ
որդի իմ ես դու։"

Ո՛չ կարաց Պաւլոս ակահել զյետին
բանս՝ զոր ոչ երբէք լուեալն էր։ և խնդրեաց
յայն սակս զխորհուրդ նորին։ Որում պատաս-
խանեաց մայր նորա։ "Ջունիս քեզ՝ ո՞վ որ-
դեակ իմ՝ զհայր հարազատ։ 'Ի տիս մանկու-
թեան իմոյ հրապուրեալ 'ի սիրոյն՝ յանցաւոր
գտայ տկարութեան միւմ։ որոյ դու ո՞վ վա-
տաբաղդ՝ դու ես պտուղ։ Ցանցանք իմ վրիպե-
ցին զքեզ 'ի հովանաւորութենէ հօր ընտանեաց,
և փախուստն իմ 'ի տանէ՝ ընտանեաց մօրն քոյ։
Ո՞վ անբաղդութեանդ։ Ջունիս դու յաշխարհի
զայլ ոք ազգական քոյ չինէն։" Զայս ասա-

ցեալ Եհեղ զհեղեղս արտասուաց։ Առ այս բան գիրկս էարկ նմա Պաւլոս. "ո՞վ տենչալի մայր իմ," գոչէ. "փոխանակ զի չկիր ինձ յաշխարհի այլ ևս մերձաւոր բաց 'ի քէն, սիրեցիր զքեզ առաւել քան զառաւել։ Այլ՝ զորպիսի՞ գաղտնութիւն վերուկեցեր ինձ. Այս արդարև տեսանեմ ահա զպատՀառ օտարանալոյն գստերն տ'լա Դաւթի յայս երկու ամիս. և յէ՞ր սակս կամի հեռանալ 'ի մէնջ։ Ո՞հ. քաջ Հանաչեմ զի արհամարհէ զիս։"

Ժամանեալ ապա և Հաշուն ժամու՝ բազմեցաք ամենեքին շուրջ զսեղանով. այլ յոգնադիսի զգացողութիւնքն՝ որով մեք ամենեքին ամբոխեալն էաք՝ նուազ ախորժակս թողուին մեզ ուտելոյ. և ընդ լռութեամբ անցուցաք զՀաշն։ Զառաջինն Վերգինիա եալ արտաքս և բազմեցաւ 'ի սոյն իսկ վայրի, ուր մեք 'ի ժամուս բազմեալ կամք։ Հասոյ հետևեցաւ նմա Պաւլոս և նստաւ առընթեր նորա։ Եկն երհատ գիշերն. մի 'ի զուարՀալի գիշերոց անտի յսՀախելոց ընդ արևադարձիւք՝ զորոյ զգեղեցկութիւնն և չինչ ժամանեացէ նկարել մատիսն[21]։ Տիկինն երկնից ամբարձեալ 'ի միջակէտն Ոլիմպոսի՝[22] զորոյ զարծաթափայլ դէմս աքօղէ ինն ամպք՝ վանէր հալածէր զնոսա 'ի ձեռն շառաւիղաց իւրոց։ Լոյս նորա աղօտափայլ տիրեալ էր լերանց կղզւոյս, որոց անգորդանք փաղփեալ

վայլէին արծաթափայլ դալարութեամբ. խաղաղութիւնն թագաւորէր 'ի յօդս. լսէաք 'ի միջոյ մայրեաց, հովտաց և յարտեւանաց խաբակաց զգաւազր Հաւուղլիւն և զդաշն կռինչ օդականաց՝ որ հրճուեալ զուարճանային ընդ գիշերոյն պայծառութիւն և ընդ մաքրութիւն մթնոլորտին: Ճիւաղ միջատաց լսելի լինիւր 'ի միջոց դալարեաց. ցոլացեալ փողփողէին ատեղք 'ի վերին երթերին, զորոց զթրթռուն և լուսաձաձանչ գունտս՝ պայծառ ցոլացուցանէին ովկիանոսին կուրծք: Ցառեալ յածէր Վերգինիա զաչս իւր ընդ լայնածաւալ և խաւարաքսոյ երգերտս նորա, զոր կրակք նաւակաց ձկնորսաց երևեալ առնէին 'ի ծոցոյ կղզւոյն: Ներմարեաց 'ի մուտս նաւահանգստին զլոյս ինչ և զստուեր իմն ուղղբամած. այս էր լոյս Հրագին սպահակերաց և մարմինն նաւուն՝ յորում նաւարկել ունէր 'ի Յերուսալիմ. և որ կնոջմ և սատրատ եղով պարգեալ զարմինս իւր՝ սպասէր խաբիսխ արկեալ հողմոյն փչելոյ: Զգածեալ նորա յայսմ տեսութենէ՝ դարձոյց զերեսս իւր առ 'ի Պաւլոսէ զիւրն թագուցանել արտասուս:

Սակաւ մի հեռի ատի բաղմեալք տիկինն տ'ալ Դավրի և ես 'ի ներքոյ ջղախոտից. և լուութիւն գիշերոյն ձեռն ետ մեզ որոշակի ունկն դնել խօսակցութեանց նոցա՝ զոր անվրթար ունիմ անմոռաց:

Հաւատաց Պաւլոս զառաջինն խօսիլ ընդ նմա. «Ցուիս դու՝ ասէն ցիս՝ յետ երրից աւուրց։ Ո՞չ երկնչիս ուրեմն արկանել զանձնդ 'ի վտանգ ծովու՝ որոյ 'ի ծայնէն և երթ զարհուրեալ զահանդիս։» «Պարտ է ինձ ընուլ զպարտաւորութիւնն իմ,» պատասխանեաց Վերգինիա, «հնազանդ իմացս եղիլ ծնողաց։» «Այլ թողուս զմեզ,» դարձոյց Պաւլոս, «վասն հեռաւոր ազգականի միոջ՝ զոր ո՛չ երբէք տեսեալդ ես։» «Ո՞վ աղետիցս մեծի,» գոչեաց Վերգինիա. «ո՞ տայր ինձ՝ եղբա՛յր իմ՝ վարեալ զաւուրս իմ առանձին առ տեղեաւս. այլ զի մայրն իմ ո՛չ հաճի ընդ այս։ Կամք Տեառն է՝ առաց խոստովանեցայրն զի երթայցեմ. և զի կեանք մարդոյս փորձ ինն է միայն։»

«Եւ զի՞նչ ապա,» գոչեաց Պաւլոս, «զայսչափ պատճառանս գտանես վասն չուելոյդ, և ո՞չ զմին վասն առանձին մնալոյ։ Ո՞հ. է՞ է և այլ ինն՝ զոր ո՛չ յիշատակեցեր։ Ո՞վ անհնարին ձգողութեանց մամոնիստին. Նայնհետայն գացես 'ի նոր աշխարհին՝ յոր դէմ երեալ գնաս՝ զայլ ոք որում տացես զեղբօրն անուն. զոր ո՛չ ևս ընծայեացես ինձ։ Ընտրեացես զեղբայրս զայս 'ի միջոյ այնպիսեաց, որ արժանի քեզ լիցի իւրովքն ազգատոհմաք և մեծութեամբն այնուիկ՝ զոր չունիմ ես քեզ մատու-

ցանել։ Այլ՝ ո՞ւր մարթասցիս գտանել զերջանկութիւն մի քան զայս ռատնագոյն։ Ո՞ր ցամաք հաճոյագոյն՝ տալ քեզ կարասցէ զմուտցութեամբ հարկանել զսէրն քոյ որ առ վայրն ծննդեանդ։ Ո՞ւր գտցես զընկերութիւն մի քան զայս տենչալի՝ որում այսքանակ սիրելի ես դու։ Զի՞արդ բերցես կեալ առանց սովորական ողջագուրմանց մօրն քոյ։ Զի՞նչ ինչ ոչ անցանիցէ ընդ նա արդէն յամս յառաջատեալ, յորժամ 'ի սեղանի ոչ ևս զքեզ առընթեր իւր տեսցէ 'ի տան, յորժամ 'ի գնացս՝ ոչ ևս հաստատեսցի 'ի քեզ։ Զի՞նչ ապա հասցէ մօրն իւմում՝ որ սիրէն զքեզ նոմին գորովով։ Զի՞նչ ինչ ես 'ի միթար ասասցից նոցա, յորժամ ըզքոյդ լացցեն հեռաւորութիւն։ Ո՛չ խօսիմ ինչ՝ անագորոյն՝ ոչ խօսիմ զինէն, այլ զի՞նչ եղեցի ինձ՝ յորժամ ընդ առաւօտս ոչ ևս տեսից զքեզ, յորժամ երեկոյն ոչ ևս միաւորեսցէ զմեզ, յորժամ յառեալ ակամեցից 'ի ծառան գագաթի մնկեալս 'ի ժամ ծննդեանն մերոյ՝ 'ի հարուստ ամանակաց հետէ և այսր վկայս փոխադարձ բարեկամութեան մերում։ Ո՞հ, փոխանակ զի՝ այլ ինն նոր վիճակ հրապուրէ զքեզ, փոխանակ զի՝ 'ի խնդիր երանեաց յերկիր ինչ օտար 'ի քոյոյն այնոցիկ մեծութեանց, որ ջեն խմցս աշխատանաց արդիւնք, թոյլ ա-բա ինձ ուրեմն ընկերակցիլ քեզ 'ի նաւին՝

յոր մտանէս։ Քաջալերեցից զքեզ։ զօրացուցից զարուեստիւն սրտի քո 'ի միջի այնց փոթորկաց՝ յորոց նա՝ և 'ի ցամաքի իսկ զարհուրիս 'ի կատաղութենէն։ Կոչմնեցուցից զգլուխս քոյ 'ի վերայ լանջաց իմոց։ Ջեռուցից զսիրտդ 'ի վերայ իմոյն։ Եւ 'ի Գաղղիա՝ ուր 'ի խնդիր գնաս մեծութեան և փառաց՝ քանզի եղեցի ինձ կատարել զգնուածոյին գործ 'ի պաշտել զքեզ։ Երանելի միայն 'ի քումդ երջանկութեան՝ գըտցէս զիս յապարանս անդ, ուր զքեզ զգուեալ և պաշտեալ տեսից, զէթ բաւականին առատ 'ի նուիրել քեզ զմեծագոյնն 'ի պատարագս՝ փըչելով զյետին շունչն իմ առ ոտս քո։"

Սաստկութիւն յուզմանն հեղձուցիկ արար զխօսսն 'ի բերանի նորա։ Լուաք ապա զձայն Վերգինիայ։ որ հատկեալ 'ի հեկեկանաց՝ արտասանեաց զայս բան։ "Վասն քո գնամ ես՝ եղբայր իմ՝ վասն քո՛ զոր տեսանեմ հանապազ կորանալ ընդ ծանր աշխատանօք առ 'ի զկրկին զաղկաղկ ընտանիս խընամել։—Եթէ ընդդրկեմ զայս դիպող ժամս հարստանալոյ, է առ 'ի վնարել քեզ բիւրապատիկ ընդ ամենայն բարութեանց՝ զոր մեզ ապարեր։ Ոչ՝ թերևս այլ իմն մեծութիւն արժանի քումդ բարեկամութեան։ Զի՞ է զի խօսիս ընդիս զտոհմականութենէ քումմէ։ Կարծե՞ս դու՝ եթէ հնար լինէր ինձ կրկին ստա-

նոյ զեղբայր մի հարազատ, մարթ էր ինձ գնա նախադասել քան զքեզ։ Ոչ, Պաւլոս Պաւլոս. և ես սիրելի ես դու՝ և ես տեսնելի ես ինձ քան զեղբայր։ Ակնոյ են ինձ Երկինք՝ եթէ ուրջաւոյ խիստ է ինձ հեռանալ 'ի քէն։ Օգնեսա ինձ ուրեմն. ձեռն տուր աղաչեմ թափել կորզել զիս յայնմանէ անտի՝ զոր քան զկեանս իմ յարգեմ առաւել, մինչև օրհնեացեն երկինք, մինչև երջանիկս արասցեն զմերն միաւորութիւն։ Այլ՝ եթէ մնայցեմ կամ երթիցեմ, կեցցեմ կամ մեռանիցիմ, խորհեսց զինէն զնարդ և կամս։ Ոչ թշուառութեանս. ստիպէի հանդուրժել զգուանացն քոց, սակայն սղետից քոց և վշտաց տանել չգամ բաւական։"

Յայս բան գիրկս արկանէ նմա Պաւլոս, սեղմէ 'ի վերայ լանջացն և գոչէ ասասկասկէս. "Երթայց ընդ սմա՝ երթայց. և չինչ անջատեսցէ զմեզ։" Փութացեալ հասս տուաք մեք առ նա. և տիկնին տ'ալ Դավրի ասէ ցնա. "Որդեակ իմ՝ եթէ և դու գնասցես՝ զնարդ կեցցուք մեք։"

Իսկ նա զսիրալով կրկնեաց զբառսն. "Որդեակ իմ — որդեակ իմ — դու ո՞չ մայր իմ," գոչեաց, "դու կամիս անջատել մեկնել զեղբայրն 'ի քեռէն։ 'Ի միասին մնաք երկոքինս 'ի ծոցի քում. 'ի միասին և ստացեցաք 'ի վերայ ծնգաց քոց. ուստաք 'ի քէն սի-

քեզ զմիմեանս. բիւրիցս և մեք կրկնեցաք զայս օրինակ. զիա՞րդ ապա զնա յինէն անշատել կամիս: Ցուշարկաւորեա զնա Յեւրոպիա՝ 'ի բարբարիկան աշխարհն յայն, որ քեզ զապաստանարան ինն 'ի տալ ապուսեաց. և առ ազգայինս՝ որ զքեզ բարձի Թողն անտերունչ Թողին: Ասասցես Թերևս ինձ՝ զի չունիմ ինչ իրաւունս 'ի վերայ նորա. և եԹէ՝ ոչ է նա քոյրն իմ: Այլ լաւ իս՝ իմ ամենայն ինչ սա է միայն. մեծուԹիւնն իմ, տոհմս, ընտանիքս, բարիք իմ ամենայն զսա գիտեմ միայն: Եւ չկամ այլ ոք: Մի էր յարկն մեր. մի և օրոցն. և մի եղեցի գերեզման: ԵԹէ երԹայցէ, և ես հետևեցայց նմա: Արգելցէ՞ զիս գեհապետն: ԱրԹէ՞ նմա արգելուլ զիս 'ի յամալոյ զանձն իմ 'ի ծով: Հնար է՞ նմա արգելուլ զհետևանալն իմ 'ի լոզ անցանելով առ նա: Ո՛չ այնքան մահառիԹ ինձ ովկիսն եղեցի՝ քան որպէս ցամաք: Փոխանակ զի ոչ կարեմ կեալ ընդ նմա, գէԹ անշնչացայց առաջի աչաց նորա. հեռի 'ի քէն՝ ո՞վ անագորոյն մայր, ո՞վ կին անգԹասէր: Իցէ՞ ԹէԹ ալիք Թաւալագլոր խաղացուցանելով զդիակունս մեր 'ի վերայ ապառաժից ծովեզերք՝ տացեն քեզ կոչտեամբ կրկնակի որդւոց զյաւերժական առիԹ խայԹման խղՀի մտաց:"

Յասել նորա զայս գիրկս արկի նման, քանզի վհատութիւնն բարձեալ էր զբանն 'ի նմանէ։ Բայց անհնարինք հատանէին յաչաց նորա, մեծամեծ կայլակք քրտանց կախեալ 'ի վերայ դիմացն՝ ծունկքն զդողի հարկանէին, և սիրտն՝ անհնարին տրոփիւնս արձակելով՝ բաբախէր ընդ հրատապ լանջացն 'ի Xաղ։

Երկուցեալ Վերգինիայ 'ի ցաւոց ասէր գոչէ, "Ո՞ երբայրդ իմ տեսնչալն՝ խոստանամ այո՝ վկայ կոչեմ զզբօսանս մանկական տիոց մերոց, զվիշտս քոյ և զցաւս իմ և զամենայն որ միանգամ 'ի յաւիտեան պարաւանդել զերկուս վատաբաղդ էակս կարող հանդիսացին, զի եթէ ճայցեմ՝ կեցից և եթէ վասն քո, և եթէ երթայցեմ՝ դարձայց յաւուր միում լինիլ քոյն։ Վկայ երդերուք և դուք, դուք որ խնամեցիք զմանկութիւնն իմ, որ տրամադրէք զաւուրս իմոց, որ տեսանէքդ զարտասուս։ Երդնում յերկինս որ լսէ ինձ, 'ի ծով զոր պիտի հատանեմ, և յօդս յայս զոր շնչեմ, և զոր երբէք ոչ ապականեցի ստութեամբ։"

Որպէս կակղէ արեգ և լուծանէ ըզառնասառոյց տար 'ի կատար Ապենին[23] լերանց, տապէս և բուռն կիրք պատանւոյն տեղի տուեալ վարատեցան 'ի ճայնէ այնոքիկ՝ զոր սիրէրն։ Խոնարհեցոյց զդէմս իւր կորակնեալ և տեղի ետ արտասուաց հեղեղաց։ Գիրկս ածէ

նմա մայր նորա՝ խառնելով գիւրն ընդ նո-
բայն արտասուս. այլ՝ և՛ ինքն ապաքան խօսել
անգամ ոչ զօրէ։ Ցնդեալ ցրուեալ որոշեալ
տիկնոջն տ'ալ Դաւրի՝ ասէ ցիս. "Ո՛չ ես ա-
տակեմ ըմբերել այսպիսեաց։ Արտաքեկ և վրշ-
տալից՝ մ'ըձ է ոգւոյս մեկնիլ պարզել յինէն։
Անյաջող ուղևորութեանս չէ 'ի Հայ զօրանալ։
Օ՞ն անդր. Հայհեամ տար զորդին իմ 'ի տուն
քո։ Ո՛չ երբէք կավոյց քունն զաչս մեր յայս
սուրբս ուրեն։"

"Սիրելի բարեկամ," ասացի ու-
րեմն ցՊաւլոս. "քուրիկն քոյ կացցէ մնասցէն
աստէն. խօսեսցուք 'ի վաղիւն ընդ բդեշխին։
Թո՛յլ արա ուրեմն ընտանեաց քոց Հանդարտիլ.
և Էկ զայս գիշեր առիս անցուցանել։"

Տեղի ետ լռութեամբ տանել զինքն
'ի բաց. և 'ի վաղիւն՝ այն ինչ վարդագոյն
արփիակն ծաւալէր ընդ երկիր՝ յարուցեալ
ընդոստ և դառնայ 'ի տուն, յետ անցուցանե-
լոյ զգիշերն զայն աղմկայոյզ խռովութեամբ։

Այլ՝ ընդէ՞ր երկարեցից զվէպ պատ-
մութեանս. չէք բնաւ՝ բայց եթէ մի միայն
Հայեցուածք մարդկայինս կենաց, որ բերցէ մեզ
զբերկրականն Հաճութիւն 'ի նկատելն զայն։
Ամ օրինակի գնտոյն՝ յորոյ վերայ թաւալիմք,
սրընթաց ընթացքն մեր ընու և եթ զօր մի.
և եթէ միոյ մասին աւուրս այց առնէ լոյսն,

միւսոյն լինի խաւարն իշխան։

"Ո՛ Հայր իմ," պատասխանեցի յոյժ, "յանկ արա երդմնեցուցանեմ զքեզ՝ զպատմութիւնդ՝ զորոյ սկիզբն պայծառ գուն ե-ցեր։ Եթէ երջանկութեանն պատկերք յոյժ հաճոյականք են, թշուառութեանն՝ տիր խը-րատականք եղիցին։ Ասա, զի՞նչ եղև ապա թշուառական պատանւոյն։"

Առաջին առարկայն՝ զոր ետես Պաւ-լոս 'ի դարձին իւրում՝ Մարիամն էր, որ ե-լեալ 'ի կատար քարաժայռի մոլ՝ յառեալ ականէր 'ի ծովն կոյս։ Ընդ տեռանելն զնա ձայնէ առ նա 'ի հեռաստանէ. "Ո՞ւր է Վեր-գինիա։" Դարձաւ Մարիամ 'ի թիկունս կոյս. ետես զփոքրիկ տէրն իւր և սկսաւ լալ։ Շամ-բշեալ Պաւլոսի յետս ընդ կրունկն խոտորե-ցուցանէ զգնացս իւր. վայրս առեալ հասոյ տոյ 'ի նաւահանգիստն։ Ահա անդ լուաւ եթէ ընդ մերկանալ աշալրջոց մտեալ էր Վերգինիա 'ի նաւ. և նաւն նոյնհետայն պարզեալ զար-վիոնս հողմոյն՝ ոչ ևս նշմարիւր։ Առօրին դարձ առնէ 'ի սնկագործութիւնն. առանց խօսելոյ, առանց արտասելոյ և չինչ անցանէ ընդ այն։

Թէպէտ կոյտ քարաժայռիցն որ 'ի թիկանց մերոց գոգցէս ուղղահայեաց երևին, սակայն դալարագեղ հողաբլուրքն այնոքիկ՝ որ ծարատեն զարտեանս նոցա՝ նմանին աստիճանաց,

որոց ձեռնտուութեամբն մարթ է երանել ընդ դժուարակոխ ուահս 'ի կանանն այն կուք և անմատչելի խարակաց անուանելոց Բուրթակ։ Առ ստորոտով կանանիս է երկայնեալ զառ 'ի վայր երկիր ամբարձաձիգ ծառովք հովանաւոր։ որ այնքան բարձր է և սեպացեալ, մինչև երևիլ Հաղագ ինչ 'ի յօդս սոսկալի վախիւք շրջապատեալ։ Ամպք յանկուցեալք շուրջ զարտեւանոք խարակացն՝ ուղերձեն զվտակս անհամարս։ որ յանհնարին բարձրութենէ անտի ահագին կարկանչմամբ թափի անկանին 'ի խորխորին հովիտն այն յայնկոյս լերին։ զի 'ի բարձուէ աստի ոչ կարեմք զնոցին լսել խոխոջիւն։ 'Ի բարձանց անտի հնար է նշմարել զօգուտ մանն կղզւոյս գահաւանդիւքն հանդերձ, որոց շքեղապանծ ինն պակեալք են կատարք։ և 'ի միջի սոցա զՊետրոսբաթի և զԵռասայրին՝ որոց դաշտք պրակօք ակաղձունք։ Նա՝ և մարթ է տեսանել անտի 'ի մի հայեցուածս զովկիանն լայնածաւալ։ և ևս ակամեալ զկղզեակն Պուռպոնեան քառասուն հրատախաւ ծգեալ առ արևմուտս կոյս։ Ահա՝ յարտեանէ անտի սարսռելի խարակացն պշուցեալ հայէր Պաւլոս 'ի նաւն՝ որ քարձեալ տանէր զՎէրգինիա։ և որ տանն փարանգաւ արդէն հեռացեալ 'ի ծով՝ երևէր նման արշնաթոյր գիզոյ 'ի միջի ովկիանին։ Անցոյց առ տեղեաւն զշատ կէսն աւուր՝ ակնապիշ

յառեալ 'ի սոյն առարկայ, որ երբ աներևոյթ
լինի, տակաւին երևակերպէ Պաւլոս տեսանել
զնա. և յորժամ 'ի վաղՀանի հետքս այսոքիկ
փարագրեալք զպատկերակերպութեամբ նորա՝
անհետ լինին և չքանան 'ի թանձրախիտ մը-
ռայլս հոլիզոնին՝ մնայ յամենի 'ի սար անգր
անդադար բաղխեալ 'ի հողմոց, որ ոչ երբէք
դղլանան առ 'ի զկատարս կաղամբենեաց և խի-
ժի ծառոց շարժելոյ. որոց կերկերեալ և աշ-
խարանուագ շրշիւնն նմանօրինակ հեռաւոր
ձայնից երգեհոնաց զախորժելի իմն 'ի մարդ
ազգէն տխրութիւն: 'Ի սոյն իսկ վայրի գտի
զՊաւլոս՝ կորացուցեալ հակեալ զգլուխն առ
քարաժայռն. և զհայեցուածն երկրապիշ բե-
րեալ 'ի յերկիր: Հետևեալ իմ զհետ նորա
ընդ մերկանալ աշալրջոց՝ համոզեցի զնա ու-
րեմն յետ ոչ սակաւ թախանձանաց իջանել
'ի բարձրութեանց անտի և դառնալ առ իւրն
ընտանիս: Ածի զնա 'ի տնկագործութիւնն,
ուր առաջին գրգիռ մտաց նորա 'ի տեսանելն
զտիկինն տ'ալ Դավրի՝ էր թշնամանել զնա
դառնագէս 'ի տակս զինքն պատրելոյ. — Ասաց
տիկինն տ'ալ Դավրի զի յերրորդ պահու առա-
ւօտուն յարուցեալ աղջղակ հողմոյ՝ և նաւուն
կազմ և պատրաստ ելով զիւրն պարզել թռչա-
ման՝ գայ գեհապետն ընդհանուր պաշտօնեիւք
իւրովք և քսորոշչսն հանդերձ, գայ պատգա-

ՊԱՅԼՈՍ ԵՒ ՎԷՐԳԻՆԷԱՆ



Ի սոյն իսկ վայրէ վառէ զՊաւլոս՝ էսրտցուցեալ հանէաւ զգէլուսնն առ տաքութիւն։ էջ 108։

բակաւ մեռով 'ի խնդիր Վերգինիայ. և թէ՝ և չինչ ունկն մատուցանելով ընդդիմութեանց և արտասուաց նորին և Մարգարիտայ, և կրկնելով թէ չու նորա լինէր վասն հատարակաց բարեօրութեան՝ առեալ 'ի բաց տարան զնա առ ոգեսպառ։ "Գոնէ՞," ասաց Պաւլոս, "եթէ տուեալ լինէի նմա զիմս հրաժեշտականն ողջոյն, թերևս հնար լինէր ինձ 'ի ժամուս եղանիլ խաղաղիկ և անդորրացեալ։ Ասէի նմա, "Ո՞վ Վերգինիա, եթէ՝ մինչ 'ի միասին եղաք՝ խօսք իմն և առք ելեալ է 'ի բերանոյս քեզ վշտացուցիչ, շնորհեա՛ աղաչեմ նախ քան զթողուլդ զիս 'ի յաւիտեան։" Ասէի և ևս. "փոխանակ զի վիճակեցայ ոչ ևս տեսանել զքեզ, ընկալ՝ ո՞վ Վերգինիա՝ զվերջին հրաժարական ողջոյնն իմ 'ի յաւիտեան. ողջ եր սիրելիդ իմ. կեա՛ց հեռի յինէն շատացեալ և երջանիկ։"

Իբրև ետես զմայրն իւր և զտիկինն տ'լա Դավլի կլալ հարկանիլ, "երթա՛յք," ասէ ցնոսա, "պէտք է ձեզ զարգիս զայլ ոմն գտանել առ 'ի զձերն ընդել զարտասուս." ասա հրոսելով արտաքս 'ի տանէն՝ յածեցաւ ընդ ամենայն կողմունս տնկագործութեանն։ Ցածէր յաւէտ ըղձանոք 'ի վայրս յայնոսիկ՝ որ յոյժ սիրային էին Վերգինիայ։ "Ա՞ի՞նչ խնդրէք յինէն," ասէր այծից և ուլուց նոցին՝ ոլոր մայելով զհետ նորա կրթէին. "ոչ ևս տես-

ջիք զնա՝ որ ձեռամբն իւրով զձեզ բուծանէր։ "Գնաց և ևս 'ի սարփինայն՝ 'ի Հանգիստն Վերգինիայ. ուր տեսանելով զԹռչունս Թևասպարել շուրջ զինքեամբ՝ գոչեաց. "ո՛վ, ո՛ ողորմելի Թռչունք՝ մի՛ Թռչիք 'ի զուր. 'ի զուր մի՛ խնդրէք զնա՝ որ ջամբէր ձեզ զկուտ." և տեսանելով զՊիտիլէ վազվազել յայսկոյս և յայնկոյս առ 'ի զնա գտանել, "Վա՜շ," գոչէ յանհնարինս յոգւոց ելանելով. "ոչ բնաւ, ո՜հ ոչ տեսցես զնա միւսանգամ։" Երթայ 'ի վաղչանի և քաղմի 'ի քարաժայռին՝ ուր 'ի նախընթաց գիշերին խօսակցեալ էր ընդ Նմա. և 'ի դէմս ովկիանին՝ ուր ետես զանհետ լինիլ նաւուն որ տանէր զնա՝ ելաց դառնապէս։

Պահէաք անդլակի զհետս նորա՝ երկուցեալ յաղետալի ինն արկածից 'ի սաստիկ յուզմանց մտացն։ Այլ նորա և տիկինն տ'ալ Դավրի երդմնեցուցին զնա կարի սիրասատար եղանակաւ, մի՛ յաւելուլ 'ի վեշտս իւրեանց իւրոցն յուսաբեկութեամբ։ 'Ի վաղչանի շաղմեաց զմիտս նորա տիկինն տ'ալ Դավրի՝ առատապէս տալով նմա զայնպիսի մակադրական անուանս, որ տիր 'ի Հաճ յարմարեցան արծարծանել ըզյոյս նորա։ Անուանեաց զնա իւրն որդեակ՝ իւրն սիրելի որդի, զոր ընտրեալ էր վասն դատերն իւրոյ։ Համոզեաց զնա դարձ առնել 'ի տուն և առնուլ զսուն ինչ յոյն և կարշնեղութիւն։

Բազմեցաւ ուրեմն ընդ մեզ 'ի սեղան առ ընթեր այնր տեղւոջ՝ զոր մանկութեանն իւրոյ ընկեր սովոր էր ունել. և որպէս թէ տակաւին ա-ռաջակայ՝ խօսէր ընդ նմա և առաջի արկանէր զայնպիսիս, զոր յաւէտ հաճոյական նմա հանա-ջէր. և ապա ընդոստնալով յերևակայական անբը-ջոց աստի՝ սկսաւ զլաղ հարկանիլ։ Հասարեցաւ յաւուրս ինչ 'ի մի հաւաքել զամենայն իրս Վեր-գինիայ. և ևս՝ զյիսին փունջն ծաղկանց զոր կրեաց նա. և զվիճեկն գոգոյին՝ որով սովոր էր ըմպել. և զկնի տալոյ բիւր համբոյրս այնոցիկ ճեացորդաց բարեկամին իւրոյ՝ որ ըստ ինքեան և ևս պատուականագոյն գտանձ զոր կարէր տալ աշխարհ՝ թաքոյց զայնս 'ի ծոցի իւրում։ Ո՛չ այնքան քաղցր անուշահոտ բուրուցն տաթեն-ւոյ՝[24] որքան ինչք սիրելեաց մերոց։ 'Ի Վաղճանի տեսանելով եթէ անձկութիւնքն իւր և ևս առաւելուն զվիշտս մօրն իւրոյ և տիկնոջն տ'ալ Դավրի. և թէ կարօտութիւն ընտանեաց իւրոց պէտս ունէր անդլակի աշխատութեան. հաւեաց ուրեմն ընդ Դամինկանի ձեռնամուխ լինիլ 'ի նորոգութիւն դարաստանիս։

Զկնի տակաւուց պատանիս այս՝ որ մինչև ցայժամ և չինչ տարբերիւր 'ի Արիսլաց[25] նկատմամբ որ միանգամ անցանէին յաշխարհի՝ ցանկացաւ ուսանիլ յինէն զարհեստն ընթեռ-նլոյ և զգրելոյ. զի թղթակից լինիլ կարասցէ

ընդ Վերգինիայ։ Եւ ևս ցանկացաւ վարժիլ յորուեստին երկրագրութեան, զի ունիցի ըզ-ջերդ պատկեր աշխարհին՝ յոր ելանիցէ նա։ և 'ի պատմութեան՝ զի յաջողեսցէ հասանել բարուց ընդակցաց նորին։ Ո՛վ հզօրագոյն ազգ-մանց սիրոյ։ որ առաջնորդելով հպատականաց նորին՝ ապաքէն հրահանգեալ էր զնա յարհեստին հողագործութեան և յօրէնս ստարելոյ զպարականն երկիրն յօգուտ և 'ի գեղեցկութիւն։ Նա՝ և հաւանական իսկ է զի կաթոգին անրջոց սոյն իսկ անքուն և բուռն կրիցս պարտին մարդիկ ոչ սակաւ արուեստս և մակացութիւնս։ յորոյ 'ի դերևանացն ծնանի իմաստասիրութիւն՝ որ հրահանգէ զմեզ ըմբերել չարեաց հպատակութեամբ։ Զայսօրինակ բընութեանն արարեալ զսէր հասարակաց ինն հանգոյց ողջոյն էիցս պարանոց՝ կարգեալ է զայն իբրև նախկին հաւակ ընկերութեան մարդկան և իբրև նախկին ոտնիսոխ առ գիտութիւն՝ որպէս և առ զուարթութիւն։

Ո՛չ այնքան հաՀեցաւ Պաւլոս ընդ աշխարհագրութիւնն։ որ վոխանակ ընդ նկարագրելոյն զանցնիւր աշխարհաց զպատմութիւն։ առաջի միայն առնէր զնոցին քաղաքական սահմանացն տեսութիւն։ Պատմութիւնն՝ և յաւէտ ևս արդեան պատմութիւնն առ սուն մի հաՀեցուցին զքիմս նորա։ Տեսանէր 'ի նմա

զհանրական և զպարբերական չարիս, զորոյ ո-
րիշ նշմարել զառիթն չզօրէր. մարտք ան-
նուէրք, անհիմունք և աննպատակք. ժողովուրդք
անսկզբունք և բրինձք անագորոյիք: Ընտրէր
յաւէտ ընթեռնուլ զկեղծաքանութիւնս, որ
գոլով առանձին զգացողութեամբք և օգտիւք
մարդկան լի՝ նկարագրէր զվիճակս կենաց նման-
օրինակս իւրեանն ինքեան: Ոչինչ մատեան այն-
չափ բերկրեալ հաճեցոյց զնա որպէս զՏերեմա-
քոս[26], 'ի նկարագրութեանց անտի պատկերաց
տուարածական կենաց և այնպիսեաց կրից՝ որ
բնական են մարդկայինս սրտի. Ընթեռնոյր
բարձրաձայն առաջի մօրն իւրոյ և տիկնոջն
տ՚ալա Դավրի զկտուրս առաւել ազդուականս
ինքեան. և յորժամ սիրապատար յիշատակք
հասեալ ներգործէին 'ի նա, հեղձուցանէին
յուզմունքն զնորին բարբառ և հեղեալ զեղու-
ին արտասուք զվիճն լուսոյ: Երևակայէր տե-
սանել 'ի Վերգինիա զհանճար Անտիոպեայ[27],
զթշուառութիւն և զանդաղատանս Եւխա-
րեայ[28]: Ցոյժ տարօրինակ զգացողութեամբ ըն-
թեռնոյր զնորամուտ պաճուճաքանութիւնս մեր՝
զեղեալս ապերասան առաձիւք և բարուք: Եւ
իբրև ասէին ցնա՝ եթէ մոռացանին առասպելիքս
զՀշգրիտ իմն պատկեր զեւրոպացւոցն ընկերու-
թեան առնէին առաջի, ոչ անքանաքար զդողն
հարկանէր. զի մի և Վերգինիա զեղծեալ՝

գինքն զմոռացուԹեամբ հարկանիցէ։

Ապաքէն ամ մի և կէս անցին 'ի բաց առանց ընդունելոյ տիկնոջն տ'լա Դավրի զլուր ինչ 'ի դտտերէն իւրմէ։ ՑընԹացս այսչափ հաստատ ամանակաց միայն լուեալ էր երբեմն զանքոյԹ ժամանմանէ Վերգինիայ 'ի Գաղղիա։ Հուսկ ուրեմն նաև մի 'ի վարեալն զհանապարհ Հնդկաց՝ զտեղի առեալ աստէն, եբեր տիկնոջն տ'լա Դավրի զպատատ մի և զգիր նորին ձեռագիծ։ Թէ և բամբիշս սիրուն խնամ կալեալ էր չըվիրաւորել գրուԹեամբն զզգացողուԹիւնս մօրն իւրոյ, կարի դիւրին էր և այնպէս նշմարել զԹշուառուԹիւն վիճակի նորա։ Այնգունակ բնաւորապէս նկարագրեալ էր քարտէն զվիճակ նորա և զհանգամանս, մինչ զի գոգցէս քառ առ քառ ունիմ զայն 'ի յիշատակի իմում։

"Տէնջալի Մայր իմ,

"Ընդունելով իմ 'ի քէն զրոյց զյոգունց իմոցս ձեռագիծ սիտակաց ուղղելոց առ քեզ՝ երկնչիմ մի՛ գուցէ չկցեն ժամանեալ առ քեզ, լաւագոյն յոյս ունիմ զայսմանէ 'ի միջնորդուԹեանց անտի՝ զոր կալնում յայսմ նուագի առաքեալ քեզ զլուր ինչ զինէն, և ակն ունիմ զպատասխանին ընդունիլ 'ի քէն։ Ո՞վ, որքան առատուԹեամբ հեղում զարտասուս յանջատմանէ իմմէ և այսր։ Ե՛ս՝ որ ոչ արտաս-

ուեցայ երբէք, բայց առ Թշուառութիւնս այլոց։ Մեծ զարմանք կալան զՀօրաքոյրն իմ, յոլովամ 'ի ժամանել իմում հարցանելով ցիս՝ որովք կատարելութեամբք զարգացեալն էի, առացի ցնա զի տգէտ էիս և՝ զընթեռնլոյ և՝ զգրելոյ։ Եհարց ցիս ուրեմն՝ զի՞նչ ուսեալն էի յաշխարհ եկելոյս հետէ. և իբրև պատասխանեցի նմա երեթ հրահանգեցայ 'ի խնամատարութիւն տնունի գործառնութեանց և 'ի կամաց քոց հպատակութիւն, ուրեմն մակացեալ ես՝ ասէ ինձ՝ 'ի ծառայականն հրահանգութիւն։ Յառուրն երկրորդի տեղադրեաց զիս 'ի մեծի աբբայութեան մեղ առ Փարիսիս. ուր ունիմ ես զամենայն ազգս վարժապետաց. որք ուսուցանեն ինձ 'ի միջոյ այլոց զպատմութիւն, երկրագրութիւն, քերդողութիւն, ուսումնականութիւն և զհեծելութիւն։ Այլ զի ընդունակութիւն իմ այնչափ նուազ է առ սոյնպիսի մակացութիւնս, զի կարի տակաւ յառաջանամ առ վարժապետաց իմովք։

"Զիարդ և իցէ՝ խնամք հօրաքեռն իմոյ ոչ երբէք նուազին առ ինև։ Յամէն երեքանակ տարուոյն զգեցուցանէ ինձ զնորանորս. կարգեալ է՝ ասէ՝ զկրկին նաժիշտս յիմ 'ի սպասահարկութիւն. երկաքանչիւրքն ևս զարդարեալ աջնուական տիկնաց պէս։ Ընծայեաց ինձ ըստիտլոսս կոմուհւոյ, սակայն պարտաւորէ զիս

հրաժեշտ առնուլ յանուանէս տ՛ալ Դաւիթ, որ այնքան քաղցր է ինձ՝ որչափ և քեզ ՝ի պատ-
ճառս այն ամենայն տառապանաց, որում հայրն իմ բերեաց ժուժկալել առ ՝ի ամուսնանալ ընդ քեզ։ Հաստատեաց անդրէն և զանուանն քո ՝ի քոյ ընտանիս, որ ևս քաղցր է ինձ, զի ՝ի մանկութենէ հետէ կրեսդ զայն անուն։ Տեսանելով զիս յայսպիսում շքեղապանծ վիճակի, աղաչեցի զնա թոյլ առնել ինձ առաքել քեզ զօգնան ինչ։ Այլ՝ զի՞արդ երկրորդեցից զպատասխանին նորա։ Սակայն ուսուցեր ինձ չծածկել երբէք զճշմարտութիւնն։ Ասաց ինձ ուրեմն՝ եթէ սուն առ չինչ պիտանացի քեզ, և շատն միայն արգել անկանիցի անփառունակն քոյ կենաց։

“Պէտ յանձին կալայ՝ ընդ ժամանելն իմ յղել քեզ զինէն զլուր ինչ՝ այլոցն ձեռամբ, այլ չդտանելով ատէն զոք առ ՝ի հաւատս նմա ընծայել, վարեցի զամէն տիւ և զգիշերն իմ յընթերցուածս և ՝ի գրականութիւն։ և Երկինք՝ որ քաջ տեսանէին զիմս շարժառիթ՝ անշուշտ զօրավիդ եղեն ինձ յիմ ՝ի ջանս։ այնու զի՝ զերկաքանչիւրն իսկ շահեցայ ՝ի սակաւ աւուրս։ Աւատացի ես զառաջին նամակս իմ բամբասաց ոմանց՝ որ կարի քաջ յիրաւի ցուցին զնոսա հօրաքեռն իմոյ։ Իսկ յայսմ նուագդի վստահանամ յաշակերտակիցն իմ և ՝ի բա-

բերկամ՝ զորոյ զՀասցէն ահա առաքեմ։ որոյ նպաստիւք ակն ունիմ ընթեռնուլ զձերն զպատասխանի։ Հօրաքոյրս ոչ ներէ ինձ ունիլ զՀաղորդակցութիւն ինչ՝ որ թերևս խսիւ անկանի՝ ասէ՝ մեծի նպատակին զոր ունի առ իմս օգուտ։ Զիք ոք որ կարէ մտանել առիս 'ի վանդակապատսն, քան միայն ինքն և աղնուական ոմն հինաւուրց իւրն բարեկամ։ որ թուի թէ յոյժ հաճեալ է ընդիս։ Սակայն ես չեմ յիրաւի զայսօրինակ ընդ նմա։ և ոչ իսկ լինէի, եթէ գոյր հնար հաճ լինիլ ինձ ընդ ումեք 'ի ժամուս։

" Բնակիմ ես 'ի միջի առատութեան և չունիմ զլիրայ մի 'ի տնօրէնութեան իմում։ Ասեն զի յանդէպս 'ի գործ արկիցզդրամս, ո՞վ գեղեցիկ պատճառաբանութեանցս։ Նա՝ և արկանեալքս իսկ պատկանին իմոց նաժշտաց, որք հիշեն ընդիս նախ քան զմերկանալն 'ի յանձնէս։ 'Ի գիրկս փարթամութեան և ևս անքատ եմ ես քան յորժամ ընդ ձեզն էի։ վասն զի և չինչ ունիմ ընծեռելոյ։ Իբրև գիտացի զի հոյակապ կատարելութիւնքն՝ զոր ինձ ուսուցին՝ ոչ ուժէր աջողել վասն իմ զկարողութիւն և՝ սուն բարեգործութեանց, ապաւինեցայ յասեղն իմ։ զորոյ՝ առ բարեբաստութեան իմոյ՝ 'ի ՀանՀ ուսուցեր ինձ զգործածութիւն։ Առաքեմ սովաւ զպէսպէս զոյգս գուլպայից վասն քո և

մայր Մարգարտին։ Զգլխարկ մի Դոմինկոնին և զատրագոյն Թաշկինակ մի վասն Մարիամու։ Եւ ևս յուղարկեմ այսու պատատիւ զԹինս և ըզսերմանիս ազգի ազգի պտղոց՝ զոր քաղեցի յանդաստանաց։ Ի մարգս այսր աշխարհի առաւել գեղեցիկ ծաղկունք գտանին քան ի մերն։ սակայն ոչ ոք խնամ տանի նոցա։ Ոչինչ երկուանամ զի դու և մայրիկն իմ Մարգարիտ լաւ ևս հաճեսջիք ընդ այս պարկս սերմանեաց, քան ընդ պայուսակն լի մարչլովք՝ որ էր պատճառ մերոյս անջատման և իմոցս տրտասուաց։ Ո՛չ սակաւ բերկրութիւն եղիցի ինձ, յորժամ տեսանիցէք զինձորենիս ուռճանալ առ ջրախոտիւք, և զկնձնիս խառնեալ պսակել զգագաթիս սաղարթիւք իւրեանց։ Թերևս երևակերպիցէք փոխադրեալ ի Նորմանդիա՝ ի սիրայինն ձեր վայր։

“Խնդրեցեր յինէն պատմել և՝ զուրախութիւն և՝ զտրտմութիւնն իմ։ Զի՞նչ ինձ ուրախութիւն տարակաց ի ձէնջ։ Իսկ զտրտմութիւնս դալակեմ զնստուցանել զմտաւ ածելով՝ եթէ այս է վիճակն այն, յոր կամաւ Տեառն հաստատեցիք զիս։ Այլ որ յաւէտ վըշտացուցանէն զիս այս է, զի չի՞նք ոք որ խօսիցի ինձ զձէնջ։ և ես ոչ կարեմ ինձէն խօսիլ զձէնջ ընդ ումեք։ Նաժիշտք իմ, կամ լաւ ևս ասել՝ հօրաքեռն իմոյ, վասն զի յաւէտ նմա անկանին քան թէ ինձ, ասացին ինձ յան-

ցեալում աւուր՝ յորժամ կամէի շրջել զԼիստան 'ի վերայ առարկայից ինձ և ևս սիրելեաց։ "Ցիշեա՛ տիրուհի՛ զի Գաղղիացի ես դու, և պիտի քեզ զմոռացութեամբ հարկանել զերկիրն զայն բարբարիկն։" Ա՜հ ինձ։ Շատ շատ կարացից զմոռացութեամբ հարկանել զիս ինքն՝ քան եթէ զվայրն որ ետ ինձ զարև, և ուր դուքդ բնակիք։ Է՛, է՛, այս է՛ երկիրն այն՝ որ յաւէտ ինձ խժական երևի, վասն զի կեամ առանձին, և չի՛ք ոք առտէն՝ որում հաղորդել կարացից զայն ամենայն խանդաղատական զգացողութիւնս իմ առ ձեզ՝ զոր տարայց ընդիս 'ի գերեզման։

ՎԵՐԳԻՆԻԱ ՏԻԼԱԴԱՎՐ։

" 'Ի շնորհս ձեր ապսպարեմ ըզՄարիամ և զԴոմինկոն, որ խնամ տարան մանկութեանն իմում։ Փայփայեցէք ընդ իմ զՊլոտիլէ՝ որ եգիտ զիս 'ի Ճաղագին։"

Հիացաւ յապուշ հարաւ մյլ յոյլմէ եղև Պաւլոս, այնու զի ոչ էր Վերգինիա ասացեալ և զբաւ մի զինքենէն։ Մինչ զի չէր 'ի մոռացօնս արկեալ և զտան շունն։ Այլ անգէտ էր Պաւլոս՝ զի որչափ ընդերկար և եղկելի քարտէն կանանց, կարգեն նոքա զզգացողութիւնս յաւէտ սիրելիս ինքեանց՝ ցանկ 'ի կատարած նամակին։

'Ի յաւելուած նամակին 'ի խնամն Պաւլոսին յանձն առնէր Վերգինիա զկրկին տեսակս սերմանեաց, զմանիշակի և զղկաբիսային, յաւել ևս հրահանգել զնա 'ի վերայ բնութեան տնկոցն և ցուցանել զվայրս դիպուկս առ մշակութիւն նոցա։ "Առաջինն," ասէր, "ծնանի զփոքրիկ ծաղիկ լրթապոյն, որ սիրէ զողիլ ընդ մացառաք, այլ փութով գտանեն զնա մարդիկ յանուշահոտ բուրմանց նորա։" Խնդրեաց ուրեմն զի զսերմանիս նորա արկցէ յերեսս վտակին, առ ստորոտովք գագաթանոյն իւրոյ։ "Զկաբիսան," յաւել ասել, "արտադրէ զգեղեցիկ ծաղիկ շլագոյն, երեսն սեաւ՝ սպիտակ գունով կիսուաձաղարդ։ Կարծեացեալ թերևս սգազգեաց զնա. վասն որոյ և կոչի այրի ծաղիկ։ Հայի սա 'ի ցրտագին վայրս բաղխիլ ընդ հողմոց։" Աղաչեաց սերմանել զայն 'ի քարաժայռին՝ ուր խոսեցաւ ընդ նմա 'ի վերջնում նուագի. և զի առ շնորհուկս իւր անուանեսցէ զայն ծայրհրաժարական։

Արկեալ էր զսերմանին 'ի փոքրիկ պարկ մի՝ որոյ դիպակն այն անարուեստ, սակայն տիր թանգարական եղև Պաւլոսի, յորժամ նշմարեաց զՊ. և Վ. 'ի միասին անկեալ 'ի վերայ նորա. և գիտաց եթէ գեղեցիկ հերքն որով նկարագիրքն էին հիւսեալ, էին հերք Վերգինիայ։

Գերդաստանն ողջոյն ունկնդիր եղև արտասուք վերծանութեան սիրոյին և առաքելոնազարդ բամբշիս Թղթոյն։ Այսմ պատասխանի արար մայր նորա յանուն փոքրիկ ընկերութեանն։ և իբրատ ետ՝ զի զնարդ և հաճոյ Թուղթի ինքեան, կամ մնասցէ անդէն՝ կամ զնուրն արասցէ զդարձ։ Հաւատեալ նմա՝ զի յաւուրց անտի մեկնելոյ իւրոյ խոյս տուեալ զերդևեալ էր երջանկութիւնն 'ի յարկաց իւրեանց։ իսկ ինքն անմխիթար մնայր անտիսելի։

Գրեաց և Պաւլոս զընդերկար իմն Թուղթ։ յորում հաւատեաց նմա եԹէ կարգաւորէր զդարատն ըստ հաճոյս քմաց նորա, և խառնէր 'ի միասին զտունկս Եւրոպայ ընդորս Ափրիկէինն։ Առաքեաց և զսակաւ պտուղս գագաՓնեաց աղբերականն, որք արդէն հասեալ էին 'ի ջսի հատունութեան։ ցուցանելով նմա՝ եԹէ ոչ զայլ յաւելոյր սերմանիս կղզւոյն, զի անձուկն տեսանելոյ միւսանգամ զբերս զայսոսիկ՝ հիմնեսցէ զդարձ նորա։ Երդմնեցոյց ըստնա առանց յապաղման զնչանիլ ըստ ձակաԹ տենչանաց համայն ընտանեացն, և մանաւանդ իւրումն ինքեան։ այնու զի ոչ ևս ատիկէր ժուժկալել ցաւոց անՉատութեանն իւրեանց։

Խնամ մեծ կալաւ Պաւլոս 'ի սերմանել զսերմանիսն Եւրոպայ։ և յաւէտ ևս զմանուշակն և զկաբիաս, որոց ծաղիկ գոգցես

գնմանութիւն ինչ բերէր հանգամանաց և վի-
ճակին Վերգինիայ գաւառին իւրեանց. այլ
կամ ՇՄասեալ 'ի Հանապարհին՝ և կամ ներհա-
կան եղեալ հոգ այնր մասին Ավրիկէէ զարգացման
նոցա՝ կարի տակաւք ծաղկեցան և ոչ մին զար-
գացաւ։

Սովին ժամանակաւ յաջողոտ լիւքն՝
որ միշտ հետամուտ երջանկութեան մարդկան՝
սփռեաց տարածեաց զլուրս 'ի կղզւոջն, որ մեծ
զրմքաղ ծնուցին Պաւլոսի։ Նոքա՝ որ ածին
զքարտէս Վերգինիայ՝ պնտէին եթէ ընդհուպ
ունէր նա արկանել զանձն ընդ սրդեծին ծա-
ռայութեանն լծով. անուանեցին ևս զաշնուա-
կան ոմն առ դրան՝ ընդ ում կամէր նա զու-
գակցիլ։ Նա՝ զի և ոմանք իսկ հաստատէին
զսմուտութիւնն, որում զինքեանս մատուցանէ-
ին վկայս։ Զառաջինն անգոնեաց Պաւլոս զայս
հռչակ ածեալ 'ի միոյ 'ի շահավաՇառ նա-
ւաց անտի՝ որ սփռեն յաՇխա զստերիւր լուրս
առ Հանապարհաւն իւրեանց. սակայն ջաղախ-
տավարք ոմանք դարովելի կարեկցութեամբք ի-
րեանց՝ ազդեցին նմա հաւատս ընծայել անա-
գորոյն համբաւոյս։ Եւ այս զի՝ նորաբնութերց
առասպելիքն ցուցեալ ևս էին նմա, եթէ դրը-
ժողութիւնն 'ի կիր արկանի և 'ի նիւթ զուար-
Հութեան. և զի՝ զմատեանս զայսոսիկ ջերդ
ինն պատկեր Եւրոպաշանցն դրէր բարուց, խի-

թայր մի՛ գուցէ և Վերգինիայն սիրտ ուրուա-
ցեալ՝ զմուսացութեամբ հարկանէր զնախկին
իւր խոստումն։ Զայս օրինակ գիտութիւն նորա
միայն պիտանացաւ ձեռն տալ թշուառութեան
նորուն։ և որ և ևս յաւել՝ ի կասկածանս նո-
րա՝ էր զի նաւք ոչ սակաւք ժամանեալ յեւ-
րոպայ յընթացս վեց ամսոցս՝ և ոչ մին էած
զնոր զլոյց ինչ՝ ի Վերգինիայ։

Վատաբաղդ պատանիս՝ զորոյ զսիրտն
ցելատէին յուզմունք անագորոյնք՝ յաճախ յայց
ելանէր ինձ, որպէս զի ակահութիւնքն իմ՝ ի
փորձս աշխարհի կամ զօրացուցեն և կամ վա-
րատեալ փարատեսցեն զվնշտս անձկութեանն
իւրոյ։

Ընակիմ ես՝ որպէս արդէն ասացիս՝
փարտանգաւ և կիսալ ջափ հեռի ատոի, յե-
զերս փոքրիկ գետակի մոջ՝ որ սուրեալ խա-
ղայ քերելով առ զառ՝ ի վայր լերամէն։ սն-
գանօր անցուցանեմ զաւուրս իմ անկին, ան-
զաւակ, անտանկ։

Զկնի վայելելոյ և կորուսանելոյ
զչնաշխարհիկ երանութիւնն վարելոյ զկեանս
համբաւն մնաք, նիաշ աղետալի վիճակ կենացն
մարդոյ է առանձնականն։ Կարևոր ինն է նը-
կատել՝ զի ամենայն ազգք թշուառացեալք քա-
ղաքական գիտմամբք իւրեանց, քարուք և կամ
օրինաք կառավարութեան, ունին զանհամար

դասս քաղաքացեաց գլխովին անձամատն եղե-
լոց առանձնութեան և վիճակին ամուրեաց։
Զայս օրինակ եղեն եգիպտացիք 'ի կործան-
ման և Հելլենացիք ստորին ինքնակալութեան, և
սոյն հանգուցնակ յաւուրս մեր են Հնդիկք, Սի-
նէացիք, արդեան Հելլենք, Իտալացիք և շատ
կէտն արևելական և հարաւային ազանց Եւրոպայ։
Զայս օրինակ և ես անցուցանեմ
զաւուրս իմ Հեռի 'ի մարդկանէ՝ որոց գեղձայի
ոպասահարկել, այլ զի հալածեցին զիս։ Ան-
ցեալ իմ ուղեղնացութեամբ ընդ ոչ սակաւ
երկիրս Եւրոպայ և ընդ մասն ինչ Ամերիկայ
և Ափրիկայ՝ հարի 'ի վաղճանի զնորանն իմ
յայս ամայաբնակ կղզի, յանկուցեալ ձգեալ 'ի
քաղցր բարեխառնութենէ և յառանձնութենէ
նորա։ Խրճիթ մի 'ի Հաղագին կերտեալ
յունջս ծառոյ մրոջ, փոքրիկ պարտէզ մի՝ զոր
հերկեմ ձեռօք իմովք, և գետակ մի՝ որ սողոս-
կի առ դրան իմում, հերիք են կարեաց և զուար-
Թութեան իմոյ։ խառնեմ ընդ սուսա և զզուար-
Թութիւնս ոմանց ընտրելական մատենից, որ
ուսուցանեն ինձ 'ի լաւ անդր յառաջել։ Ան-
ծայեն ինձ զաշխարհն՝ զոր բարձի Թողի լքի'
տակաւին սատար իմում բերկրութեան։ Ցան-
դիման առնեն ինձ զպատկերս կրից այնոցիկ, որ
զբնակիչս նորա առնեն չաւառական։ և կշռու-
Թիւնն՝ զոր առնեմ ընդ մեջ վիճակի նոցա

և ընդ իմ՝ տայ ինձ զգալ զապուտական ինձ բերկրութիւն։ Նման նմա՝ զոր նաւաբեկութիւնն ձգեալ հանէ 'ի վերայ քարաժայռի միոջ՝ նկատեմ յառանձնութեան իմում զմրրիկն, որ վանգեալ փոթորկէն զաշխարհ ամենայն։ և հանգիստն իմ և ևս անդորրանայ 'ի հեռաւոր դանդիւն փոթորկին։ Ներեմ ես յանդորրու հանել զկս ընդ հոտանս ամանակին 'ի համատարած ծովն ապադայութեան։ և մինչ ականեմ յարգեան հանճարնութիւնն բնութեան, համբառնայ ոգիս առ ծայրագոյն Արարիչն իւր և յուսացուցանէ զկս առ երջանիկ վիճակն հանդերձեալ 'ի միւսում կենդանութեան։

Թէպէտ և չգայ յերևան խրճիթն առանձնութեան իմոյ կառուցեալ 'ի Հաղագին 'ի միջի այլոց յոգնապիսի առարկայից՝ զոր տարս այս ցուցանէ՝ սակայն բնակութեան իմոյ վայրն յատուկ դեղեցիկ ընծայի թերևս նման, որ ինձ նման առաւել քաղցրանայ ընդ շրջանակ մի առանին տեղեան՝ քան ընդ Հոխ և լայնածաւալ տեսարան։ Հեղեղատն՝ որ սրեալ քերէ առ դրամբ իմով՝ անցանէ անխոտոր ընդ մայրիս և երևի հանգոյն երկայն նեղուցի բիւրազգի մանկովք հովանաւոր։ Սևատես ամբարաւենիք, շլորենիք՝ զոր մեք նեղատերև դոդոնիա անուանեմք, ձիթենիք, կռէժենիք և կինամոնիք ա-

Հողեալ ուռՀանան։ Մինչ զի յայլ կողմունս արմաւենիք Համբարձեալ զՀոլանի սիւնս իւրեանց առաւել քան զՀարիւր ոտնաչափ 'ի վեր՝ պՀնազարդեալ վնջացեալ տերևավք 'ի կատար՝ մակ անցեալ 'ի վերայ մայրեաց որպէս Հաղագ մի բարդեալ 'ի վերայ միւսոյն։ Ամրիչք բազմերփեան տաղարթագեղք՝ կլուռեալ խառնելով ընդ մայրեաց կազմակերպեն գծաղկազգետտ կամարակապս և զգարնանագեղ ամպհովանիս։ Շատ կէսն տնկոցս բուրեն զՀոտ անուշից այնքան զօրաւոր, Մինչև արկանելեաց անտառաւոնաց ուղևորին պարՀել ցՀալուստ ժամս զքաղցր անուշահոտութիւնն։ 'Ի ժամանակս շուայլաբարոյ ծննդեան ծաղկանց տունկքս այսոքիկ ձիւնացեալ երևին։

Առ 'ի յելս ամառան բիւրազգի թռչունք տարաշխարհիկք մղեալք յանթարգմանելի իմն ազդեցութենէ՝ փութան առՀապարեն յանծանօթ կլեմաց։ և անցանեն ընդ անհունն ովկիանոս առ 'ի հաւաքել զառատ հատս կղզւոյս։ պայծառութիւն թևատարած վիտրոց նոցա դիմադրի ծառոց թխացելոց 'ի զօրութենէ արփւոյն։

Տնունի բնակիչք անտառաց մերոց ապուշնեալք զբօսնուն 'ի վերայ մթար ոստոց ծառոց։ գորշ և կանաչանման մորթ նոցա և արշնաթոյր տեսիլն զնոսա ցուցանեն։ Ե՛ն՝ որ

ձեռակախ լինին կշռելով զինքեանս 'ի յօդս։ և այլ՝ ոտանին յոստոց յոստս՝ զիւրեանցն ողնաբարձ ունելով զկորիւնս։ Սպանակ ատրաՀանին ոչ շրտոյց զայսոսիկ խաղաղ զորդիս բնութեան։ Դայլայլիկք անհամար թռչնոց հարաւոյ անծանօթ՝ գան երբեմն 'ի հեռաստանէ, լսելի եղեալ յարձագանգաց անտառին։ Գետն՝ որ սրընթաց փրփրածին դդչմամբ ընթանայ 'ի վերայ ապառաժից՝ ուրուացուցանէ 'ի վերայ մակերևութի ակնակիտ ջրոյն զբիւրազգի ծառոց զյաղթյաղթ պատկերս և զզբօսանս երջանիկ բնակչաց նորա։ Անդուստ հազար ոտնաչափ 'ի խոր զինքն գահավէժ առնէ գետն ընդ շիղջս ապառաժից։ և 'ի գահավիժութեան անդ խրում ձևացուցանէ զժողով ինչ ջուրց՝ պայծառ որպէս զվանակն։ որ և այնպէս փրփրալից մկանամբք խորտակի առ ստորոտովք։ Բիւրաւոր խառնափնդոր ձայնք երանեն յաղխատրոյշ ջրոց անտի։ որք ամփոփեալ փաղեալ 'ի հողմոց անտառին՝ է՛ զի տուգանին և է՛ զի ուռուցեալ արձակեն զլսելին իմն ձայն նման զանդակագանչութեանց եպիսկոպոսարանի։ Օգն՝ յար նորացեալ շրջանառութեամբ ջրոյն՝ հովահարէ զթուրմս գետոյն 'ի զով անուշակ։ և թողու զհետս ինչ դալարութեան և 'ի տապ ամառան՝ հաշիւ երևեալ 'ի կղզի ատտ և 'ի կատար խոկ լերանց։

'Ի տեղւոջէ ատի յայսմանէ սակաւ

մի հեռի կանգնի քարաժայռ մի՝ հերիք տա-
ղակաց 'ի տահանացն առ 'ի արգելանել զխլա-
նալ լարանաց 'ի շառաչմանէ ջուրցն, և հե-
րիք մերձակաց նմին առ 'ի վայելել զտեսու-
թիւն նորա և զովութիւն և զեռոսնջանս նորին։
Ընդ ուրեմն ակմբէաք 'ի տօթաժամու ամա-
ռան սիկինն տ'ալ Դաւրի, Մարգարիտ, Վեր-
գինիա, Պաւլոս և ես, և ընդ հովանեաւ ժայ-
ռին երախանս կոչմէաք։ Վերգինիա՝ որոյ գործն
ընտելացեալ յաւէրժ առ այլոցն քարուքիւն՝
ոչ երբէք Հաշակէր զպտուղ ինչ առանց տնկե-
լոյ զսերմ կամ զթինս նոցա յերկիր։ "Ծնցին," "
ասէր, " Ծառք 'ի պտղոց ատի՝ որ ընծայա-
բեր եղիցին արգասեաք ուղևորի ուրեմն կամ
գէթ հաւուց։ " Յաւուր միում ուտելով փոք-
բասեխ՝ 'ի ստորոտս խարակին տնկեաց զսերմա-
նիս նորա։ Զկնի սակաւուց էլին ծագեցան ա-
տի փոքրասեխենիք յոլովք, որոց մինն արտա-
դրեաց և զպտուղ։ Ծառս այս՝ որ 'ի ժամ ջուրց
Վերգինիայ ծայթ մի և եթ ամբարձեալ էր
'ի գետնոյն՝ զշոյտ և զարագահատ ունելով զա-
Հուն, շահեցաւ յերկուս ամս զքսան ոտնա-
չափ բարձրութիւն, պսակեալ շրջապատեալ
առ քնիւ խաւ 'ի խաւ վականակ պտղոց։ Քաղց-
րանայր Պաւլոսի 'ի շուրջ յածիլն առ վայ-
րքս տեսանել զվերամբարձ ծառս ծնեալս
'ի չինչ սերմանէն՝ զոր տնկեաց բարեկամն իւր

սիրուն։ բայց 'ի նոյն և տեղի տայր շարժումն խորին թախծութեանց՝ ընդ այս հաւատուութիւն ընդերկար բացակայութեան նորա։ Առարկայք այնոքիկ՝ զոր սովորաբար նկատեմք միշտ՝ ոչ աղդեն 'ի մեզ զսրընթացութիւն կենաց մերոց։ ընդ մեզ պակասին և այնք անդգալաբար։ սակայն նոքա՝ յորոց 'ի տեսութենէն զրկիմք առ ամն ինչ՝ ուժգին տպաւորեն 'ի մեզ 'ի կրկին տեսութեան անդր զսրընթացութիւնն՝ որով խոյս տուեալ թռչին ընթացք կենացն մերոց։ Ո՛չ նուազ շմորիկ զգածէր Պաւլոս ընդ տեսիլ վերըմբերձիկ ծառայս փոքրասեխի ակաղձելոյն պտղովք, քան թէ ուղեգնաց ոք յետ երկարամնակեայ բացակայութեան շուարի 'ի դարձին իւրում գտանել ոչ զժամանակակիցս իւր՝ այլ զզածածս նոցա։ զորս թողեալ էր ստնդիացիս, և որք ահա՝ եղեալ են հարք ալեակաց։ Կամէր երբեմն Պաւլոս վմտաւ ածէր ընդ երկիր տաղտապաբեալ զծառն՝ որ այնքան ուժգնակի յիշեցուցանէր զխօլական պատկեր այնչափ ընդերկար ամանակին տահելոյ 'ի մեկնելոյ հետէ Վերգինիայ։ Եւ այնպէս խորհելով զնա որպէս զյիշատակաւոր ինն բարեգործութեանց նորին՝ մատուցանէր արմին նորա զբիւրաւոր զհամբոյրս։ և դարձուցեալ զբանս իւր առ նա՝ խօսէր ընդ նմա տիր գորովագութ վշտանօք։ նա՝ ասանիկ՝ ես

ինքնս առաւել զգացմամբ և առաւել յարգու-
նօք ակնեալ եմ 'ի նա՝ քան 'ի յաղթանակա-
կան կամարս Հռովմուլեան քաղաքին։

Աներկեան էի միշտ ընդ փոքրասե-
խենեւուս գտանել զՊաւլոս 'ի գալ նորա առ
մեզ։ Յաւուր միում իբրև տեսի զնա ընկղմեալ 'ի
խորին թախծութիւն, Հապաղեցայ ընդ նմա 'ի
զրուցատրութիւն իմն։ զոր պատմեցից քեզ՝ ե-
թէ ոչ 'ի տաղտուկս վարեմ երկայն զարտու-
ղութեամբ իմով։ Թերևս ներելի ծաղկեալ ա-
լեաց իմոց՝ Թերևս և վերջին բարեկամու-
թեանցս։

ՊԱՒԼՈՍ։ Վհատիմ ես։ սրտաբեկու-
թիւնն տիրէ ինձ։ Դուստրն տ'ալ Դավրի այս
երեք և կէս ամք են զի հեռացեալ մեկնեալ
վերջացեալ է 'ի մէնջ։ և այս զի՝ անցին ա-
պաքէն ամ մի և -կէս զի չեմք ընկալեալ և
չգիտէ լուր 'ի նմանէ։ Ինքն վարթամ և ես եմ
անքատ։ անշուշտ զմոռացութեամբ հարկանիցէ
զիս։ Սիրտ իմ վկայէ ինձ բերել անցանել
'ի Գաղղիա։ ստացայց անդրէն զմեծութիւնն
զայն բաղձալի իմումս սրտի։ և մեծ հօրաքոյր
դստերն տ'ալ Դավրի տացէ զդուստր երբօրն
իւրոյ ինձ 'ի կնութիւն։ յորժամ եղէց ես մեծ
ոմն իշխան։

ԾԵՐՈՒՆԻ։ Ո՞չ ապաքէն պատմեցեր ինձ՝
բարեկամ՝ զանձնշան տոհմականութենէ քումմէ։

Պ։ — Եւ կարի՛ քաշ յիրաւի։ զայս օրի-նակ խոստացաւ և ինձ մայրն իմ։ իսկ որչափ առնիս՝ չատիկեմ ես երբէք 'ի գիտութիւն բա-ռիս տոհմ։ Եւ ոչ իսկ հասանեմ թերութեանն իմում 'ի նմին քան զայլս, կամ առաւելութեան ուրուք 'ի նմին քան զիս։

Ծ։ — Նիւաղութիւնն 'ի տոհմականու-թեան՝ արդեամբք մերժեսցէ զքեզ 'ի Գաղ-զիա 'ի հոյակապ գործունէութեանց։ և ևս՝ զի ինչ նշանաւոր ձանձիր թողցէ քեզ զմուտ։

Պ։ — Եթէ ո՞չ ասացեր ինձ յաճախակի, զի և մին 'ի յեւս սանձագոյն հաւակաց արդենի մեծութեանն Գաղղիոյ, է զի սինքլոր հլուլք ամբառնան 'ի բարձրագոյնն աշտիճան իշխանու-թեան։ և զի ո՞չ ածեր ինձ զհանդէս յոգունց սիրալուր անձանց, որ 'ի ջնարդն համբարձեալ աստիճանէն՝ և ևս պատկեալ են զվառս հայրե-նեաց իւրեանց։ Արդե՞ք կնատել կամիս զար-ուութիւնն իմ։

Ծ։ — Քա՛ւ որդեա՛կ իմ։ ոչինչ հեռի են 'ի խորհրդոց իմոց։ զանշուշտն ասացի քեզ, այլ զի անցելոցն էին այնք պատմութիւն։ Զար-դիս դէմք իրակութեանց 'ի Գաղղիա խծբը-ծեալ են յոյժ։ ամենայն ինչ զարդիս երիկայ-ին են անդէն։ ամենայն ժառանգութեամբ ըս-տացուածք են տակաւաւոր գերդաստանաց կամ պաշտեալ 'ի մէջ բաղակցեալ զահոմութեանց։

Թագաւորն է լուսաւոր իմն շուրջ պատեալ 'ի սինկլիտիկոսաց և յայլոց յոգնախումբ որեանց հանգոյն այնքանից ամպոց. և գոգցէս անհնարին եղեցի զի մին 'ի Հաւաղայթից նորա անկցի 'ի վերայ քո։ 'Ի բարեբաստուութեան ամս յառաջին՝ 'ի ղեկավարութեան իմիք ոչ այսչափ խոնեալ, զայս օրինակ երևոյթք տեսակաւորէին։ Յայնժամ բնական ձիրք և արժանաւորութիւնք յամէն կողմանց պարզեալ երևութանային ըստ օրինակի նորամաքուր դալար երկրի, որ արգասաւոր լինի համայն բարգաւաչ ւիւթովք իւրովք։ Այլ զի յոյժ նուազ են բարգաւաչանուն քաղեան արք՝ որ Հանաչեն ըզմարդիկ և գիտեն զընտրութիւն առնել 'ի մէջն նոցա։ Թագակալք առ Հասարակ մատնեն զանձինս 'ի թիւրութիւն սինկլիտոսաց և միաբանութեանն՝ շուրջ պատեալ զգահիւք նոցա։

Պ։ — Սակայն յորդորիմ գտանել զմին 'ի յորերոյ անտի, որ թիկուանս տայցէ ինձ։

Ծ։ — Զհովանաւորութիւն քաղաքանց գնեացես թերևս ոսպս հարկանելով փառամոլութեան նոցա և կամ հաչուութեանն։ Ա՛չ քեզ այս աղողեցի բնաւ յապատոհմականութենէ քումմէ, և զի սուրբ է ամբծութիւնն քոյ։

Պ։ — Այլ ես այնպէս քաղ իրողեցիր զգործս իմ. այնպէս անխախուտ կացիր յուխտին իմում, այնպէս զգուշեաւ լեր զհարկ

պաշտօնին իմոյ։ այնպէս փուրթաղան և անվը-
կանգ 'ի բարեկամութեանս։ զի արժանի որ-
դեգրութեան զանձնս ընծայեցուցանել գէթ ու-
մեմն 'ի նոցանէ։ այնու զի զսայս գտի պայման
'ի պատմութեան անդ նախնեաց՝ զոր ետուր
ինձ ընթեռնուլ։

Ծ։ — Վա՜շ, սիրելի իմ։ 'ի մէջ Ցու-
նաց և Հռովմայեցւոց և ևս 'ի վերջին դարու,
այո՝ յարգէին պատրիկք զառաքինութիւնն միշտ։
անշուշտ երկին Ծագեցան և յոգունք աշխարհա-
նազ արք ամենազանք տուկ 'ի ռամկականաց։
տակայն չգտանեմ և ոչ զմին որդեգրեալ ընկ-
կալեալ 'ի տուն ազնուականութեան։ Եթէ
ոչ գոյին մեզ պատկաւորք, առաքինութիւնն
դատապարտիւր 'ի Գաղղիա 'ի յաւերժական
ռամկականութիւն։ Որպէս բազմիցս ցուցի, յար-
գեն նոքա երբեմն զառաքինութիւնն՝ յորժամ
նշմարեն զնոսա։ այլ՝ արդ յաւուրս մեր առա-
ւելութիւն գերազանցութեանն՝ որ 'ի ձեռն
արդարութեան պիտի ընդգոգել՝ գնոյ միայն
գնանի։

Պ։ — Դիցուք եթէ ոչ գտից զշնորհս
առաջի ուրեմն աղաղին, զամենայն զփոյթ իմ 'ի
մէջ առից օգտածու լինիլ գէթ խմբից ոմանց։
Տիրեցից ոգւոյ և մտաց նոցին բոլորովին։ ընդ-
ծայեցից զկս ինքնս սիրելի ամենեցուն։

Ծ։ — Այլ գործեացես ըստ օրինակի այ-

ըց արանց։ այլ զոհեացես զուղղութիւնն քոյ 'ի տակս մեծութեան։

Պ։ — Քա՛ւ։ բաւէ՞։ քա՛ւ։ ինդիր Հրշմարտութեանն մինչեւ եղեցի նպատակն իմ։

Ծ։ — Փոխանակ ընդ սիրելի ընծայելոյ զքեզ, նա աւանիկ՝ տացես զանձնդ յաւէտ ատելութեան նոցին։ Եւ այս զի զահմեալ միաբանութիւնք և չինչ օգտեցուցանեն զանձինս 'ի գիտութիւն Հշմարտութեան։ Փառամոլն անխտիր ակամբ հայի ընդ ամենայն խորհուրդս՝ միայն թէ բռնանայցէ։

Պ։ — Ա՞վ վատաբաղդութեանս։ յամենայնի անկանի սիրտ իմ, ամենայնիւ քաջալերեալ վհատիմ։ Դատապարտեալ եմ 'ի յաւերժական աշխատութիւն և յառանձնութիւն հեռի 'ի Վերգինիայ։ (Ասաց և յանհնարինս հառաչեաց։)

Ծ։ — Կա՛լ քեզ զամենակալն միայն պաշտպան՝ որդեակ իմ։ և զմարդիկ համարեա՛ քեզ 'ի գունդ։ անվկանդ հաստատեա՛ 'ի մինն՝ և պինդ կաց 'ի զահմութեան միասոյն։ Գերդաստանք, զովութիւնք, ժողովուրդք և թագակալք ունին ամենեքին և զիւրեանց նախապաշարումն և զկիրս։ և սէտք են մոլութեանն յոր 'ի գործս նոցա առ 'ի սպասս տանիլ ցանկութեանց նոցին։ Իսկ պաշտեալ զԱստուած և զմարդկայինն ազգ՝ 'ի Հա՛հ աջոլէ մեզ հպատականս առնել առաքինութեանն։

Այլ զի՞ է զի քաւքեաս որոշիլ յայլոց 'ի մարդկանէ։ Զգայութիւն իմն է այդ ամենևին ընդդէմ բնութեան. վասն զի երթէ լինէր ընդհանրական՝ մղէր ամենայն ոք զմարտ պատերազմի ընդդէմ իւրումն դրացւոյ։ Շատ լեցի քեզ կատարօնութիւն պարտաւորութեան քոյին վիճակին՝ հաստատեալ քեզ 'ի տեսչութենէն Աստուծոյ. խնդա ընդ Հակատագիրդ՝ որ շնորհէ քեզ անարատ ունիլ զքոյն ուղղութիւն. ոչ բանաւոր է քեզ ըստ օրինակի փարազանց դնել զքոյդ երանութիւն 'ի կարծիս բամբասանաց. և ոչ ըստ օրինակի բամբաց քծնիլ զփարաշնոտաք՝ առ 'ի վնեռամբ ածել զպէտս գոյութեան քոյ։ Բնակիս դու յերկրի միում և 'ի վիճակի՝ ուր հնար է քեզ աշխել անցուցանել զկեանդ առանց պատրելոյ, հրապուրելոյ և նուաստացուցանելոյ զքեզ. ըստ օրինակի բազմութեան մարդոց՝ որ սնոտեն զհետ մեծութեանց 'ի յԵրուսալիա։ 'Ի վիճակի՝ ուր հանդամանք անձինդ չունեն քեզ արգել պարսպիլ 'ի հպատակաց առաքինութեան, ուր անպատժութեամբ հնար եղեալ քեզ լինիլ բարեսէր, ուխտապահ, անխարդախ, հրահանդ, համբերատար, ժուժկալ, ողջախոհ, ներողամիտ և բարեպաշտ. և ուր ոչինչ չարաշուք յայպանաս ժամանեացէ զնոսաքաղքոնն քո խամրել գիտութիւն։ Տուեալ են քեզ երկինք զաշա-

տութիւն, զառաջնութիւն, զխիղճ բարի մտաց և զբարեկամս։ Թագակապք՝ զորոց այդչասի փառամլիս 'ի շահել զշնորհս՝ յետնեալ են քան զքեզ 'ի յերանութեան մասին։

Պ։ — Աւա՜ղ։ կարի փարելի է ինձ Վերգինիա տակաւին։ առանց նորա ջնոյ ինձ և ոչ ջինչ։ նոքաւ հանդերձ հնար է ինձ գտանել և զամենայն ինչ։ Է՛ նա միայն իմ տոհմ, փառք և իմ համբաւն մեծութիւնն։ այլ հօրաքոյր նորին տուեալ է զնա առանց երկուանաց փարազին ուրեմն 'ի կնութիւն։ Բայց զի նպաստեն մատեանք և ուսումն եղանիլ մարդկան գիտական և հանճարեղ, ականաւոր և աշխարհանաղ, աշողեցից 'ի գիտութիւն բռնութեամբ անդուլ հպատականաց։ տատարեցից հայրենեաց իմոց կարևոր ծառայութեամբք վեհ վսեմ լուսաւորութեան իմոյ։ և ոչ դառնացուցից զոք կամ եղէց կախեալ զնմանէ։ համբաւն իմ արեգակնափայլ և փառքն՝ զոր շահեցայց՝ իմ եղլոցի ամենայնն։

Ծ։ — Ո՞վ որդեակ իմ։ և ես ջնաշխարհիկ, և ես հաղուագիւտ են քանքարք քան զտոհմ և մեծութիւն։ և ե՛ն անշուշտ թանգարական, փոխանակ զի և ջինչ ժամանէ կապտել զմեզ 'ի նոցանէ անտի։ և այս զի յանկուցանեն յինքեանս զհանրական յարգ։ Սակայն յոյժ թանկագին եղլոցին մարդկան։ Է

հնար և եթէ արդիւնաւորիլ 'ի նոսա՝ պակասութեամբ յայլոց ամենեցուն։ զգացողութեամբ աղնիւ՝ որ զմեզ առնէ ապերջանիկ 'ի տան միանգամայն և արտաքոյ 'ի հալածանաց անտի հասակակցաց մերոց։ 'Ի Գաղղիա՝ ոչ նախանձի օրինականն ընդ փառս զօրականին, և ոչ զօրականն՝ նաւատուոյն։ այլ ամենեքին ընդդէմ դառնայցեն քեզ անդ, այնու զի ամենայն ոք սանքացեալ վիքանայ ընդ իւրն գիտութիւն։ Խոստանաս ծառայել մարդկան։ Սակայն նա որ ընծայաբերը լինի միով միայն որայիւ ցորենոյ 'ի յերկրէ, առնէ նոցա և ևս առաւել օգտաւոր ծառայութիւն քան եթէ որ միանգամ օղերձեն նոցա զմատենագիր մի։

Պ։ — Ի՞շ։ Նա որ տնկեաց զայս փոքրասեխ, նուիրեաց բնակաւորաց անտառիս և ևս արգոյ և զուարճալի ընծայ, քան եթէ տուեալ էր զմատենադարան մի։ (Զայս ասացեալ՝ գիրկս ած ծառոյն և համբուրեաց զայն բուռն յուզմամբ կրից։)

Ծ։ — Ամենագուհար մատեանն՝ քան զոր երբէք գրեցաւ յաշխարհի, որ ստէպ յիշեցուցանէ միայն զվարդապետութիւնս բարեկամութեան, հաւատարութեան, մարդասիրութեան և փաքանութեան, այս է աւետարանն։ պիտառոցի 'ի հարուստ ամանակաց հետէ իբրև զբաղբաղայ ինն յաւիշտակութեանց և աւերածոց Ռո-

պէտացուցն անգթութեան։ Ո՞վ թէ։ քանի՛ քա-
նի՛ բացերևակ և զանխուլ բռնաւորութիւնք
զօրհանապազ 'ի գործ դնին յաշխարհի 'ի նո-
բին անուն։ Այսորիկ զկնի՝ ո՞վ կարէ համակել
զինքն 'ի յոյս՝ օգտածուլինիլ մարդկան մա-
տենագրութեամբ։ Ցուշ լեցին քեզ վիճակք
տափիտայիցն այնոցիկ՝ որ զիմաստութիւն քա-
ղոզեցին մարդկան։ Հովմերոն՝ որ թլլիսի ած-
նմա այնպէս գեղեցիկ տաղաչափութեամբ՝ հար-
կեցաւ մուրանալ զհաց իւր զամենայն աւուրս
կենաց իւրոց։ Սոկրատէս՝ որ անտի այնպէս սի-
րուն խրատ ետ Աթենացւոց միանգամայն և՛ բա-
նիւ և՛ գործով իւրով՝ դատապարտեցաւ կլանել
զթոյն վշռով արդարութեանն դատաստանի։
Պիրալուր աշակերտ նորին Պղատոն վշռեցաւ
'ի տանկութիւն 'ի նոյն իսկ 'ի բրնձոյն՝ որ
պաշտպանեաց նմա։ և նախ քան զտուա Պիթա-
գորաս՝ որ տարածեաց զգաղցրութիւնն իւր և
առ անբան կենդանիս՝ հրով դատեցաւ կենդա-
ւոյն 'ի Կրիտոնեանց։ Զի՞նչ ասեմ։ Շատ շատ
կէան աշխարհանազ անուանցս այսոցիկ իջեալ
են առ մեզ տգեղծեալ 'ի ձեռն գծման ինչ
երգիծաբանութեան՝ որ հրատարակէ զնոսա։
վասն զի մարդկայինս ապերախտիք ինծղան ու-
նիլ զայսպիսիս։ բայց և այնպէս՝ եթէ գտցուք
առ երաստս զփառք ուրեմն մաքուր և անարատ։
Է՞ զի կեցեալ է նա հեռի յամանուկցացն իւրոց

ընկերութենէն։ Հանգոյն անդրիանդաց այնոցիկ՝ որ անարատ ելուզանին 'ի դաշտաց Յունաստանի և Իտալիոյ։ որ Թաղեալ ելով 'ի ծոց երկրին՝ զերծեալ են 'ի կատաղութենէ բարբարոսաց։

Տեսանե՞ս։ եթէ առ 'ի ձեռս բերել զմրրկածին փառս գրաւորական հռչակի։ բազում առաքինութեանց պէտք են աղօղիլ։ և զանձն իսկ՝ պատրաստ և կազմ լինիլ՝ առ 'ի պատարագել։ Թող զայս։ կարծե՞ս դու եթէ վարազունք Գաղղիոյ փոյթ ունին զփառացս զայսցանէ։ Գիւրեն զգիտնաւորս այսմ մեծագէս։ որոց գիտութիւնն չհամբառնայ զնոսա 'ի գերակայութիւն ինչ յիւրեանց հայրենիս։ և ոչ 'ի պաշտօնս ինչ ընդ իշխանութեամբ։ և ոչ իսկ 'ի յարքունիս զմուտ կարէն աղաղել։ Հալածանք տակաւ 'ի գործ դնին առ դարս մեր։ այնու զի ամենայն ինչ անխտիր խնդրին քան 'ի մեծութենէ և 'ի բերկրանաց։ իսկ գիտութիւնն և առաքինութիւն ուր ուրեմն ամբառնան անգանօր զմարդ 'ի գերագոյն աստիճան։ վասն զի ամենայն ինչ փոզով աղօղի։ 'Ի հնումն գերազանցութիւնքս այսոքիկ արժանանային պատկաց աստիճանաւ իւիք կամ յեկեղեցւոջ։ կամ յատենակալութեան և կամ 'ի գործս տէրութեան։ բայց զարդիս քանզ են և եթ 'ի մատենագրութիւն։ Եւ այնպէս՝ պտուղս այս

այսչափ նուազ յարգեալ առ մարդիկ աշխարհի՝ է և ևս արժանաւորագոյնն, այնու զի է 'ի ջնաշխարհիկ սկզբանց։ Է՝ մատեանից այսոցիկ պարհեալ շուքն ընծայելոյ զլոյս անյոյտ առաքինութեանց, արգահատելոյ զվատաբաղդս, լուսաւորելոյ զաղքս և քարոզելոյ զՀշմարտութիւնն առ պսակաւորս անգամ։ Անշուշտ է սա և ևս սրբազան պաշտօնն՝ զոր շնորհեն Երկինք մահկանացուի միում 'ի վերայ երկրի։ Իցէ՞ թերևս ոք անատակ խօսիլ 'ի սիրտ իւր 'ի համար անիրաւանաց կամ դարուվութեանց այնոցիկ՝ որ պանծան տրամադրութեամբն բաղդին։ յորժամ հակատիցէ՝ եթէ գործն իւր անցեալ աւանդեացի դարուց 'ի դարս, յազգաց յազգս։ և պիտանացի իբրև զպատուար իմն ընդդէմ վրիպականութեան և բռնաւորութեան։ և եթէ՝ 'ի ծոցոյ անշքութեանն, որով վարեաց զկեանս իւր՝ ծագեսցի փառք իմն որ զյաւգունց նսեմացուցէ զպակաւորաց զփառս։ որոց յիշատակքն սուզանին 'ի մոռացութիւն 'ի նոցունց իսկ 'ի շաղմարարացն ատելութենէ, զոր ամբարձեալ բարձրացուցին նոքին իսկ։

Պ։ — Ա՞խ։ անձկացեալ պնտեցից զհետ փառացս այսոցիկ, միայն զի տիւեալ Հապաղեցից զփաղփիւն նոցա 'ի վերայ Վերգինիայ։ ընծայեցից և ևս զնա յարգոյ և ցանկալի ամենայն աշխարհի։ Այլ՝ սա՛ մնա, դու որ այսպէս մեծ

փորձ ունիս զաշխարհի, ասա մի թէ ժամանեսցէ՞ մեզ երբէք ընդ միմեանս միանալ։ Քանզի եղկի ինձ լինիլ գրոց աշակերտ առ 'ի Հանաչել գոնէ զհանդերձեալ ակնկալիս իմ։

Ծ։ — Ո՞ ցանկացի կեալ՝ որդեակ իմ՝ եթէ գիտիցէ զկրն ապալինիս։ Մի միայն նախագէտ ազէտ զբիւրս ծնանի զուսայն անձկութիւնս։ Հաւատի երևոյթն ծանրակշիռ թախծութեանց դառնացուցէ զամենայն զյառաջընթաց օրերս։ Եւ ոչ իսկ անկ արդարև խուզել խորագոյնս զշրջակայ առարկայս։ Ցաւեալ են մեզ երկինք զմտածութիւն առ 'ի կանխագէտ լինիլ սիրոյից մերոց։ տուեալ են և այնպէս զսիրոյս կենաց առ 'ի ջոկ գնել մտածութեանց մերոց։

Պ։ — Ասացեր առաքութիւնք և պատիւ փողով աշխարհն Յերուսաղէմ։ Զուեցից գնացից անցից 'ի Հնդիկս ստանալ զհարստութիւն։ ուղղեցից ապա զգնացս իմ առ Փարիս և ածից զՎերգինիա ինձ 'ի կնութիւն։ Գնամ ջուեմ առժամայն։

Ծ։ — Զիա՞րդ։ թողցես ուրեմն դու ըզմայր նորա և զքոյն։

Պ։ — Եթէ ո՞չ դու ինքնդ խորհրդատրէիր ինձ ուղևորիլ 'ի Հնդիկս։

Ծ։ — Այո՝ որդեակ իմ՝ բայց Վերգինիա ասէն էր յայնժամ, յորժամ զայդ խրա-

բատ Եւոու քեզ։ ԱՅԼ զարգիս դու միայն կաս վիգն մարց ձերոց։

Պ։ — Առաքեացէ Վերգինիա զպէտս կենաց նոցա 'ի բարուքեանց անտի իւրոցն փարթամ ազգայնոց։

Ծ։ — Թէկն ածեն փարթամք և եթ այնոցիկ՝ որ շուք դնեն նոցա յաշխարհի։ կան նոցա և այլ ազգայինք՝ և ևս կարեկցութեան արժանիք քան զՏիկինն տ'լա Դավրի։ որք կարօտ և զերկ յօՀանից նոցա՝ զոՀեն զաղատութիւնն իւրեանց 'ի սակս Հացի և անցուցանեն զաւուրս իւրեանց փակեալ 'ի մենատանի։

Պ։ — Ո՞վ Հրէշն այնմիկ Բոպէի։ ո՞վ Հուաղական երկրիս։ Անշուշտ փութացուցէ Վերգինիա զդարձ իւր առ մեզ վերստին։ Աւ ի՞նչ պէտք են նմա և փարթամ ազգայնոց։ Ափսոս։ զիւրդ երջանիկ էր երբեմն ընդ ցածուն յարկօքս այսոքիւք։ Զիւրդ չքնաղագեղ՝ երբ գլուխն զարդուն երգուն եալ ատրագոյն թաշկինակաւ կամ պսակօք ծաղկանց։ Դարձ՝ ո՞վ Վերգինիա, դարձ։ Թող զասպարանս քոյ և զմեծութիւնս։ դարձ առ պարեխս այսոսիկ, առ Հովանիս մայրեաց և առ գագաթելիս մեր։ Ո՞վ ցաւոց։ գուցէ 'ի սմին իսկ վայրկենի 'ի թշուառութեան մնաս կաս։ (Զայս ասացեալ՝ տեղի ետ արտասուաց։) Ո՞ Հայր իմ՝ գոչեաց՝ մի՛ ինչ թագուցանէր յինէն։ եթէ չատիկեա ասել

գուցէ երբէք ամուսնացայց ընդ Վերգինիայ։ ՆաւթՀեան ինձ գտնեա՛ եթէ սիրէն զիս տա-կաւին։ Թէպէտ և շուրջ պատեալ յաղա-ղանց, որ խօսին ընդ արանց քաջաց և այց առ-նեն նմա։

Ծ։ — Այո՛ սիրելիդ իմ, և բազում ա-ղագք բռնադատեն զիս զի սիրէ քեզ։ և քան զամենայն սոյ՝ զի է առաքինազարդ։ (Ցայս բան անկանի զլանջք իմովք յափշտակեալ 'ի ցնծութենէն։)

Պ։ — Այլ աւատա՞ս դու՝ եթէ կանայք Եւրոպացանց այնքան անկայուն են, որքան նկա-րագրեալ 'ի տեսարանի և 'ի մատեանս յայ-նոսիկ՝ զորս ետուր ինձ 'ի փոխ։

Ծ։ — 'Ի կլեմա՝ ուր բռնակալեն արք՝ գտերքն Եւային են յար յեղեղուկ։ Բռնու-թիւնք յաւէտ ծնանին զդրժողութիւնս։

Պ։ — Հնար է առն բռնակալել զկնոջ։

Ծ։ — Հինինեալով բռնանալով ատիպելով զկանայս յամուսնութիւն առանց նկատելոյ ըղ-յակքարութիւն նոցին։ զկուսանն ընդ սպիտակա-լիք առն, զզգայուն կինն ընդ առն անզգայնոյ։

Պ։ — Եւ ընդէ՞ր ոչ յաւէտ միաւորեն 'ի միասին զնոսա։ որ և ևս փերշաւոր են միմեանց։ զառոյգն ընդ առուգին և զտարփաւորս ընդ այնոցիկ՝ յորոց վերայ սէր նոցա սևեռեալ հաստատի։

Ծ։ — Է՛ զի հանրականութիւնն երիտասարդաց 'ի Գաղղիա ջունին զՀերիք մեծութիւն առ 'ի աղուել զամուսնութիւն։ և՛ զի հապիւ երբէք ոտանան զբաւականութիւնն՝ մինչև յառաջ խաղացեալ յառաջատուին 'ի յամս։ 'Ի յառուգութեան զառաձեալ զարտուղին գնացուցանեն զամուսինս գրացեաց իւրեանց։ և յորժամ համբուրեն զալիս ծերութեան՝ չժամանեն և ինքեանք յապահովել զսէր կանանց իւրեանց։ Ցառայգութեան դոգեալ խարդախեն զայլս։ և 'ի ծերութեան նովին կարգաւ և ինքեանք խարդաւանին։ Է՛ այս մին 'ի փոխարինական գործոց այնր տիեզերական արդարութեանն՝ որ ղեկավարէ զաշխարհս։ առաւելութիւն մոյն ցանկ կշռէ զմիւսն։ Զայս օրինակ անցուցանեն Եւրոպացիք զաւուրս իւրեանց երկպառիկ անկարգութեամբք։ և անկարգութիւնս այս առնի զօրանայ 'ի զովողութեան միում ըստ չափու կուտակութեան հարստութեանց առ ասկաւաթիւ անհատականս։ Նմանի տէրութիւնն դարաստանի մոլ, յորում տունկք անզօրք ոչ ժամանեն հասանել 'ի կատարելութիւն, եթէ այլք հաստահարուստք ստուերս արկանեն զնոքօք։ այլ այս բացերևակ խոիր 'ի մէջ նոցա գոյ, զի գեղեցկութիւնն դարաստանի ծագեացի 'ի փոքրաթիւ ծառոց ստուարագունից։ բայց բարեբաստութիւնն տէրութեան՝

յառէրժ զրստկաց և զհաւատարութենէ հպատակացն կախեալ հատատի, քան եթէ տակաւորացն այնոցիկ՝ որ միայնակ վաճառեն զհարստութիւնս նորա։

Պ։ — Բայց զի՞ է զի կարօտութիւն մամոնային կրՀիմն անկանի ամուսնութեան։

Ծ։ — Վասն զի յարժամ արկանէ ոք զանձն ընդ լծով որդեծին ծառայութեան, անձկայ ցանկանայ անցուցանել զաւուրս իւր 'ի լուութեան առանց աշխատանացս հարկաւորութեան։

Պ։ — Եւ ընդէ՞ր ոչ աշխատիլ։ Եւ ինքնս կարակի վաստակ լինիմ։

Ծ։ — Է՛ զի ձեռական աշխատանքն արհամարհ խոտան նախատական են 'ի Յերուսաղիա։ Ընդ անուանեն զնոսա մեքենական աշխատանք։ տինա՝ անարգագոյնն քան զամենայնն դատի երկրագործութիւն։ Եւ ևս՝ առաւել յարգի արհեստաւորն առ նոսա, քան եթէ գեղջուկն։

Պ։ — Զի՞արդ։ արուեստն նպաստաւորն մարդկան սննդեամբ՝ անարգի անգամի ըմպահկի Յերուսաղիա։ Ո՛չ զօրեմ ակահել մտաց քոց բանից։

Ծ։ — Է՜հ։ կարի դժուարին եղեցի մարդոյն հրահանգելոյ 'ի բնութեանն վիճակի, մտառել զթիւրութիւնն վիճակին ընկերութեան։

Ատիկեսցէ այն նկարել 'ի միտս իւր զչիրդ պատկեր կարգաւորութեան, բայց ոչ կարող եսցէ նկարագրել զանկարգութեանն։ Գեղեցկութիւնն, առաքինութիւնն և երջանկութիւն ունին զհամեմատութիւն։ տգեղութիւն, մոլութիւն և թշուառութիւնն ունին և չինչ։

Պ։ — Ապա երջանիկ են փարթամք։ և չինչ ոտնատուու առ Հանապարհաւ նոցա։ ընծայեսցեն առարկայից սիրոյ իւրեանց զհաՀութիւնս անվախՀան։

Ծ։ — Ո՛չ։ որդեակ իմ, այլ զի շատք 'ի նոցանէ չզգան իսկ զբերկրութիւն։ այնու զի՝ կամագիւտ լինիլն ոչինչ աշխատ պատՀառէ նոցա։ Ո՞չ փորձն ցուցանէ քեզ, թէ զվայելչութիւն հանգստեան գնեն աշխատութիւնք։ ուտելոյն՝ քաղցն։ ըմպելոյն՝ ծարաւ։ Ըստ այսմ սարասի և սիրելոյ և սիրեցեալ լինելոյն՝ միայն աշողեն յաՀախութիւնք պակասութեանց և պատարագաց։ Ճոխութիւնք նոցա զրկեն զՀարուստս յայս ամենայն բերկրութեանց՝ զանցանելով ըստ չափ պիտոյից նոցա։ Փարագրեա և ես 'ի յափրանս՝ որ գայ զՀետ յապեցութեան՝ զյաւակնութիւնն, զոր ծնուցանեն Հոխութիւնք նոցին, և զոր յոլտ մի պակասութիւնն վիրաւորէ։ նա՝ և յորժամ ամենամեծ վայելք կասին Հրաժարին 'ի շողմելոյ գնա։ Բուրումն բիւրաւոր վարդից միայն ՀաՀեցուցանէ առ վայր-

կեան մի. իսկ ցաւն 'ի վերայ ածեալ 'ի մոյ 'ի փշոցն՝ մեայ ընդերկար զկնի վերաւորելոյն. Թշուառութիւն մի 'ի միջի յոգունց վայելից՝ է փարթամին փուշ շրջապատեալ 'ի ծաղկանց. այլ՝ ընդհակառակն աղքատին զուարճութիւն մի 'ի միջի յոգունց աղետից՝ է ծաղիկ ինն շրջապատեալ 'ի փշոց յամենայն կուսէ. Գոտանեն նոքա զկծու ինն հաշակ 'ի վայելս իւրեանց. Անցնիւր գործ ամքառնոյ աչի դիմակայութեամբն իւրով. բնութիւնն հառատարակշիռ արար և զամենայն ինչ. Աղէ, քաջ խելամբտեալ ամենայն իրաց՝ խորհեաց 'ի մտի քում, որ վիճակ թուի քեզ նախագահ. այն՝ որ գոգցես սէ ակնունի խմիք և յամենայնէ երկնչի, եթէ այն՝ որ չերկնչի յիմեքէ և ակնունի ամենայնի. Առաջինն 'ի վիճակացս՝ է փարթամին. երկրորդն՝ աղքատին. Եւ ևս՝ սահմանքս այսոքիկ խիստ և դխխին երկոցին առն՝ որոյ երջանկութիւնն 'ի միջակայութեան արկեալ է գՀինն.

Պ. — Զի՞նչ կամիս ասել անուամբս առաքինութիւն.

Ծ. — Ո՞վ. ո՛ որդեակ իմ՝ դու որ թեարկեալ թիկունս տաս ծնողացն քոց վաստակօք ձեռաց քոց, չունիս իսկ զպէտս սահմանի նորին. Առաքինութիւնն է Հիգն ինն վասն այլոցն բարութեան. Նպատակ ունելով հաճե-

ցուցանել զԱստուած միայն։

Պ։ — Ո՞վ առաքինութեանցն Վերգինիայ։ Առաքինութիւնն էր վաղչան նորին՝ յոլովամ անձկացաւ փարթամանալ, զի զօրացի 'ի հպատականս բարեգործութեան։ Առաքինութիւնն ստիպեաց զնա անդրանալ 'ի կղզւոյս, և առաքինութիւնն դարձուցէ զնա առ մեզ վերստին։ Պատկերք մօտալուստ դարձի նորա վառեցին բորբոքեցին զերևակայութիւն նորա, և յանկարծակի վարատեցաւ վարատեցաւ անհանգստութիւն նորա։ Համբեցաւ ուրեմն՝ եթէ Վերգինիա 'ի տակս մօտալուտ գալստեանն իւրում ՝ի յղէր զթուղթս ողջունի։ Կարի տակաւ աւուրք պիտէին հասանել յԵրուսղիոյ 'ի հողմ բարեյաջող։ Հաւեաց ապա թուել զնաւս՝ որ անցեալ գնացեալ խաղացեալ վաղչանէին զհանապարհ չորիցս հազար և հնգիցս հարիւրաց փարանգաց յլնիմացս նուազ քան երից ամաց։ և թերևս նաև՝ 'ի յոր մտեալ էր Վերգինիա՝ ՝ի յերկարեսցի քան զերկուս։ Ո՞վ կորովամտութեան հարտարապետաց նաւուցս։ Ո՞վ յաջողակութեան նաւաստեացս։ Ապա պատմեաց ինձ զհանդերձանաց վասն ընդունելութեան նորա, զնորակերտ խրհթէն կառուցելոյ վասն բնակութեան նորա, զբերկրութեանց և զզարմանաց՝ զոր իւրաքանչիւր օրեալ ածէին յոլովամ եղիցի նա ամուսնին իւր — ամուսնին իւր։ — յոյսս

այս յափշտակութիւն իմն էր մտաց։ Գէթ յայնժամ ով հայր իմ, ասաց, գէթ յայնժամ և չինչ արասցես բայց զՀաճուութիւնս քո։ Վերգինիա հարսնամ՝ ունիմք ունիլ յայնժամ ըզհոյլս զանդկաց որ վաստակեսցին 'ի համար քո։ Բնակեսցիս յայնժամ առ մեզ։ և ոչ այլ երկեցի հոգն քոյ՝ քան եթէ բախճանութիւն սրբոտիդ և զուարճութիւն ոգւոյդ — և տրոփելով սրտին 'ի ցնծութենէն՝ հապ տուեալ Հեպեռայ բաժանորդս և զընտանիս իւր առնել ազնիւ զգացողութեանցս այսոցիկ։

Եւ այնպէս՝ յետ սակաւուց անհնարին զըմբաղք անագորոյնք յաշորդեալ զՀետ երկին զմայլեցուցիչ յուսոյս։ Սաստիկ կիրք բռնունք յաւէտ ձգեն զոգին 'ի ներհականն 'ի ծայրս։ Դարձ արար Պաւլոս 'ի բնակութիւնն իմ ընկղմեալ 'ի խոր թախծութիւն, և ասէցիս։ և չինչ լեամ ես 'ի Վերգինիայ։ եթէ չուեալ մեկնեալ էր 'ի յԵրուսալիմ՝ ծանուցանէր արդեօք զգալստեանէն իւրմէ։ Ով աղետիցս։ կարի քաջ հիմնեալ են հուչակքն՝ զոր լուայ զնմանէ։ Անշուշտ ամուսնացուցեալ է զնա հօրաքոյրն ընդ ուրեմն փարաշնի։ Վհարեցաւ և տա ըստ օրինակի այլոց 'ի սիլոյն մամանցայի։ 'Ի մատեանս անդ՝ որ քաջ նկարագրեն զկանայս՝ առաքինութիւնն առարկայ իմն է ստուգեանց։ եթէ էր Վերգինիա առաքինասէր,

ոչ բարձի թողլ լքանէր զմայրն իւր և զիս։ և մինչ ես անցուցանեմ զաւուրս իմ խորհելով զնմանէ, զմոռացութեամբ հարկանէր զիս։ Մինչ ես եմ ողբմելի վշտագին, է ինքն երջանիկ։ Ո՞վ թշուառութեանս։ խոկմունքս այսոքիկ տագնապեն մեզ գնեն բառնան զուշն իմ։ երկք եղանին ինձ դառնաշխատ և ընկերութիւնն տաղտկալի։ Ո՞վ երկինք։ ո՞ տայր ինձ եթէ աւադափողք գոռացեալ գոչէին զմարտ 'ի գաշտս Հնդկաց, շահատակեալ մեռանէի և ես 'ի պատերազմին։

Որդեակ իմ, պատասխանեցի, արութիւնն այն՝ որ մղեն տայ մեզ պնտիլ զհետ մահուան, է վայն արութիւն վայրկենական։ և յոլով անգամ զգրգռի տս 'ի մնոտի յուսոյ զկնի մահուանն համբաւոյ։ Է՛ և տեսակ իմն արութեան և ևս հարկաւոր, և ևս հաղուագիւտ, որ առնէ զմեզ տանել հանդուրժել առանց վկայից և առանց դրուատեաց՝ բազմապիսի անձկութեանց կենաց։ այն է համբերութիւնն։ Հաստատելով ոչ 'ի կարծիս օտարաց, այլ 'ի կամս Աստուծոյ։ Համբերութիւնն է արութիւն առաքինութեան։

Ո՞վ թշուառութեանս, գոչեաց։ առանց առաքինութեան եմ ես ուրեմն։ ամենայն ինչ պաշարեն և բառնան զուշ իմ։ — Հաւասար, անվկանդ և անայլայլելի առաքինու-

թիւնն, դարձուցի, ոչ հայի առ մարդ։ Շուրջ պատեալ յայրքանեաց կրից՝ որ խռովեն զմեզ՝ բանականութիւնն մեր շփոթի և շլանայ։ բայց գոյ անշլիանելի լամբատ իմն, որով ատակերացուք վառեալ բորբոքեալ վերսային լուցանել զբաց նորա։ այս է դպրութիւն։

Դպրութիւնն՝ ազնիւ որդեակ իմ, է պարգև Երկնից։ Նշոյլ մի այնր իմաստութեան՝ որ զերկավարսն զտիեզերս, և զոր մարդն ազդեալ երկնային հառողութեամբ՝ ձգեալ ի՛ջոց յերկիր, հանգոյն արփիականն լուսաւորէ բերկրեցուցանէ ջերուցանէ սա առտուածային իմն բոցով։ և ըստ իրաց ինչ երևի որպէս զտարրն հրոյ՝ ձկտեալ լարելով զբնութիւնն ողջոյն ՝ի պէտս մեր։ Աշակրութեամբ դպրութեանն շուրջ ածեալ բերեմք զմեօք զամենայն իրս, զամենայն վայրս, զմարդիկ և զամանակս։ Աշակրութեամբ նորա հրահանգեալ խաղաղեմք ըզկիրս, սանձեալ ՝ի բաց առնեմք զմոլութիւն, և շարժեմք զսէր առաքինութեան։ Դիպրութիւնն է դուստր երկնից ի՛ջեալ ՝ի յերկիր անուշել ամքեալ յափշտակել զմայլեցուցանել զամենայն զմարդկայինս ազէտ։ Սիրալուր և բարգաւաճանուն գրիչք՝ որոց միանգամ շնչեալ ազգեաց նա, զի երևեցան ՝ի դարս կաբի իմն դիխին և անհնարին մարդկան ՝ի քաղաքավարել զկեանս ՝ի դարս բարբարոսութեան

և սրտականութեան։ Դպրութիւնն՝ սիրելի՛դ իմ, սատարեալ արգահատեալ և միխիթար մատուցեալ է անթիւ բազմութեանց մարդկան՝ և ևս թշուառագունից քան զքեզ։ Քեռնոփոն տարագիր տարալած տարատահման եղև յիւրոցն Հայրենեաց զկնի դարձուցանելոյ 'ի նա զբիւր մի Յունաց։ Ակեպիոն Ավիրիկեցին սպառեալ թափեալ անհամբոյր բարբութեամբ Հռովմայեանն ժողովրդեան։ Լուկուլլոս 'ի տաղտուկս վարեցաւ 'ի դաւաճանութեանց նոցին։ և Կատենատ կծեալ յսպասիսաւորութենէ Գաղղիականն արքունեաց։ Հանճարալի Յոյնք սահմանեցին զանցնիւրն յիմացական կարողութեանց մերոց 'ի կառավարութեանց ընդ առանձին Մուսայիւք՝[29] վերակացուօք գիտութեան։ Պէտք են մեզ ուստի թուլացուցանել նոցա զկառավարութիւն ախտից մերոց։ որպէս զի առաջնորդեսցեն և հրահանգեսցեն զնոսա։ Պարտին նոքա նկատմամբ զօրութեանց հոգւոյն ընուլ զնոյն հանդէս ընդ Ժամուց՝ որ լծեն և ուղղեն զերիվարս Փեպսվին[30]։

Զեռն տուր ուրեմն՝ որդեակ իմ, տեղի՛ տուր մատենից քոց։ Սոփիստայքն այնք՝ որ գրեցին 'ի հին դարս՝ են ուղաւորք կանխեալք քան զմեզ 'ի ռահս թշուառութեան։ որ տարածեալ ձգեալ զբարեկամականն իւրեանց ձեռս՝ և հրաւէր տան մեզ յարևանալ ընդ

զոմոզութեան իւրեանց՝ յորժամ այլ ամենայն բարձի թողի ընդ ահկեն զմեզ։ Եւս բարեգոյն մատեանն է ևս բարեգոյն բարեկամ։

Ահա։ գոչեաց Պաւլոս։ և չինչ կարօտէի մատենից յորժամ էրն Վէրգինիա։ որ և իսկ իմ պէս յոյժ սակաւ պարապեցաւ 'ի նոսա։ այլ զի ակնարկով և կոչելովն զնս իւրեան բարեկամ՝ անմարթ անհնար էր ինձ լինիլ վշտագին։

Եւ կարի քաջ յիրաւի։ պատասխանեցի ես։ չիք ոք բարեկամ այնպէս ողջունելի՝ որպէս զսիրուհին սիրեցեալ անտի։ Է՛ 'ի բարեմոյն 'ի շնորհս կնոջ հրապոյր իմն՝ որ վարատէ վասատէ ցրիւ արկանէ զնաւարաքօղ ցնորս մտածութեան։ 'Ի դէմս նորա բազմի համբոյր ձգողութիւնն և քնքուշ հաւատարմութիւն։ Ո՞ր ուրախութիւն ոչ առաւելցի յորում և նայն կըցորդ լիցի։ ո՞ր յունք ոչ թուլացեալ զինչանի 'ի ժպիտ նորա։ Ո՞ր սրտնութիւն ուժեացէ զդէմ ունիլ ալտասուաց նորա։ — Դարձցի Վէրգինիա ելով քան զգեզ իմատենագոյն։ և զարմանք կալցին զնա տեսանել զդրատն անկատար։ զնա՝ որ խորհէր զյօրինուածոյն 'ի միջի հալածանաց հօրաքեռն իւրոյ՝ հեռի յիւր մարէն և հեռի 'ի քէն։

Պատկեր մտալուտ դարձին Վէրգինիայ նորոգեաց զսիրայնոյ նորին զարութիւն սրտին։ Բաւեն եհար կրկին զտուարածական

գործոց իւրոց՝ երջանիկ զինքն համարեալ յաշխատանս իւր խորհելով, եթէ պակեսցին այնք 'ի վաղճանն այնքան ցանկալի սրտին իւրոյ։

'Ի քսան և չորսն Դեկտեմբերի 1744 ամին՝ այն ինչ կամ էր առաւօտուն 'ի գիշերոյն մերկանալ՝ նշմարէ Պաւլոս յարուցեալ 'ի քնոյ զարգահատիչ աչաց գունոցն [31] դըրօշակ 'ի թեւս հողմոյ թռանիլ 'ի վերայ լերինն Յայտնութեան, որ էր նշան նշմարելոյ նաւի 'ի ծովու։ Առօրին 'ի շտապ տագնապի վազս աւեալ պարզեցաւ 'ի քաղաքն առ 'ի իմանալ անդ զլուր ինչ զՎերգինիայ։ և մնաց անդրէն ցդառնալ նաւուղին, որ ըստ սովորութեան սոյց եղեալ էր նաւուն։ Ծանոյց նաւուղիսն բդեշխին, եթէ Սան Ճիուռան անուանէր նաւն՝ եօթնհարիւր ծանրաչափ խորանարդ։ և Աւսլին անուն էր նաւապետին։ եթէ նաւն չորիւք փարսանգաւ հեռի 'ի ծովին, և գուցէ 'ի վաղուն առ օթ՝ խարխիս արկցէ 'ի նաւահագիստն Լուդովիկոսի, թէ աջողեսցէ հողմն։ այնու զի ընդորրէր առ ժամն։ Ընձեռեաց ապա նաւուղին զյոլով թուղթս շահապին 'ի Գաղղիոյ։ յորոց մինն էր յանուն տիկնոջն տ'ալ Գավրի ձեռագիծ Վերգինիայ։ Կալաւ Պաւլոս ըզթուղթն։ համբոյր մատոյց նմա յափշտակեալ մտօք։ եդ 'ի ծոցն իւր և վուրթայ հատանել 'ի տնկագործութիւնն։ Անդէն 'ի հեռաստանէ

ընդ նշմարեալն զընտանիս իւր 'ի վերայ Հրաժեշտական ժեռին, նշանակ ամբարձ զթուղթս 'ի յօդս առանց մարթանալոյ 'ի խօսել. և իսկոյն առժամայն ընտանիքն ողջոյն շուրջ պատեցին զարկնաւն տ'ալ Դավթի առ 'ի ունկն դնել ընթերցման թղթոյն։ Ծանուցանէր Վերգինիա մոր իւրում, եթէ հօրաքոյրն իւր կարի ինն ջարաջար վարեալ էր ընդ ինքեան. որ յետ վայրապար բռնաւորելոյ զինքն ամուսնանալ ընդդէմ յակքարութեանն իւրոյ, ժառանգատեաց զինքն և յետս արձակեաց 'ի վաղչանի յայնպիսում եղանակի տարւոյն, զի հաւանականաբար ժամանէին 'ի Մովրիտիա 'ի նմին իսկ 'ի ժամանակի փոթորկին։ Յառաւիր աշխատեցաւ, յաւել ասել, զինչուցանել զիստութիւն հօրաքեռն իւրոյ՝ նկարագրելով նմա զոր միանգամ պարտէր մորն իւրում և առուգութեանն իւրում ունակութեանց. վարէին ընդ ինքեան իբրև ընդ այլանդակի սուրեանն, որոյ զառանցեալ աղանդեալ է գլուխն մտացածին կեղծաբանութեամբք։ 'Ի ժամուս, ասէր, և չինչ այլ զմտաւ ածէր, բայց եթէ զյաւիշտակութիւնն մտաց տեսանելոյ վերստին և ընդգրկելոյ զիւրն տեղեալն ընտանիս. և թէ՝ զայս ապաքէն 'ի նմին իսկ շատացուցեալ էր աւուր զսրտին իւրոյ զցանկալին փափագ, եթէ շնորհէր ինքեան նաւապետն մտանել 'ի նաւուղղին

կուբ։ այլ զի դիմադրեաց նա մեկնելոյն իւրոյ 'ի պատՀաս հեռաձգութեան Հանապարհին 'ի ցամաքէն և լեռնացեալ ալեացս, թէ և անգ՝որ էր հոլին։

Հաղիւ ուրեմն վաղՀանեցաւ ընթերցանութիւնն, յորժամ գերդաստանն ողջոյն յարիշտակեալ 'ի ցնծութենէն կրկնեցին ամենեքին՝ երՀաս Վերգինիա։ և՛ տիրուհիք և՛ զանգիկք գիրկ ընդ խառն եղեն ընդ միմեանս։ Եւ՛ թէ որդեակ իմ, ասաց յայնժամ տիկինն տ՛ալա Դաւվրի ցՊաւլոս, երթ և սոդ արա գրացուոյն մերում զգալստեանէն Վերգինիայ։ Առօրին ելոյց Դամինկոն զլսհ։ և ուղղեցին զգնացս իւրեանց ինքն և Պաւլոս առ տնկագործութիւնն իմ։

Ապաքէն հասեալ էաք 'ի ժամն կամաւօտ և կամէի անցուցանել զլամբատն իմ առ 'ի խոնարհիլ 'ի ննջիւն, յոյժամ նշմարեցի ընդ պատնէշս խրՀթին իմոյ զլոյս 'ի մնցառին։ Ցարեայ վաղվաղակի և արկի զանձամբս զձորձս իմ, յորժամ Պաւլոս հևս առեալ շամբուշ անկաւ զսպարանցաւ իմով։ Եկ՝ գոչեաց՝ Եկ, երՀաս Վերգինիա։ Օ՞ն։ Եկ երթիցուք 'ի Նաւահանգիստն։ եկեցէ և նաւն 'ի մերկանալ գիշերոյն։

Իսկոյն ելաք 'ի Հանապարհ։ Այն ինչ հատանէաք ընդ մայրիս անվախայ լերինն և

հասեալ էաք առ դուրս երոյրին՝ որ հանէ 'ի Սադուկ գրովէն 'ի նաւահանգիստն՝ լուայ զոտ-նատրակ ուրեմն 'ի թիկանց կուսէ։ Եկն տա և ասա՝ էր հաւշիկ ոմն՝ որ 'ի շտապ տագնապի վարեալ թեւս տայր ընթացից իւրոց։ Հարցի ե-թէ ուստի՞ գայր և յո՞ այդչափ ստիպով եր-թայր։ Գամ ես, պատասխանեաց, Յոսկի Աւա-զոյն։ և առաքեցայ 'ի նաւահանգիստն ազդ առնել դեհապետին, եթէ նաւ մի 'ի Գաղղիոյ արկեալ է խարխս 'ի յԱմբեր կղզի և ար-ձակէ զթնդանօթս տագնապի վասն անհնարին խռովութեան ծովու։ Զայս առացեալ եթող զմեզ և վարեաց զհետ Հանապարհին իւրոյ։

Օ՞ն անդր, ասացի ցՊաւլոս, բէր երթիցուք յայն կողմն կղզւոյն ընդ առաջ ելա-նել Վերգինիայ։ Հեռի է առտէն երիւք հրա-սխաւ միայն։ Այնպէս և ուղեցաք անդր զգնացս մեր։ Ոգեսպառ հեղձամղձուկ առնէր տապն։ Լուսինն համբարձեալ հիւ շրջանակեալ էր երիւք մեծաձիգ արջնաթոյր բակիւք։ Պա-տեալ էր երթեր յանհնարին քօղն խաւարի։ բայց ստէպ ստէպ փայլատակունքն փայլական յերևան ածէին զընդարձակ շղթայատող թաւխտս սևաթոյրս ընդվայրահակս և փարագրեալս 'ի միասին 'ի վերայ կենտրոնի կղզւոյն, զորս մէջ որաւարս ովկիանոսն լայնածաւալ, թէ և չինչ հողմոյ շունչ զգայաք 'ի ցամաքի։ Այն

ինչ զգնայաք՝ Թուէր մեզ լսել զբոմբիւն ո-
ւրոտման։ այլ զկնի ուշի ուշով մտադիր լինե-
լոյն։ գիտացաք լինիլ գանչիւն հեռաւոր թրն-
դանօթից կրկնելոց յարձագանգաց։ Բոմբիւնքս
այսոքիկ միապոյգ ընդ եթերին մրրկածուփ տե-
սութեանն քստմնեալ սօսափեցուցին զիս։ Ո՛չ
երկուանայի զնոսա լինիլ գուշակ 'ի վտանգ ան-
կեալ նաւու։ Զկիսով ժամաւ զկնի դղացաւ
ձայնն թնդանօթից։ զգացի ես զլուութիւնն և
ես ահռելի՝ քան զնոյն ինքն զսոսկալի ձայնն յա-
ռաջեալ։

Թէև տուեալ Հեպէաք 'ի գնացս մեր
առանց արտասանելոյ և զբառ մի։ և ոչ իսկ
հոլանել իշխէաք զերկիւղ մեր և զկարծիս։
Ժամանեցաք ուրեմն զմեջ գիշերաւն 'ի դիտեալն
մեր նպատակ առ ծովեզերքն։ Անհնարին կո-
հակք մանրեալ խորտակէին յեզերս ծովուն ա-
հագին շառաչմամբ՝ ծածկելով զժայռս և
զափն փրփրովք իւրեանց։ շիլացուցիչ ծիւնա-
վայլ և հրային խառնեալ կայծակամբք։ Լու-
սացնուլ վայլմամբք նոցին նշմարեցաք՝ թէ և
խաւարաքօղ՝ զկանովայս ձկնորսաց։ զորս անդ-
բացուցեալ էին 'ի վերայ աւազին։

Հուպ առ ծովափնն 'ի մուտս ան-
տառի մեջ տեսաք զկրակ։ զորով ակամբ ա-
ռեալ էին 'ի քնակչացն յոգունք։ Անդր ու-
րեմն սուղեցաք զգնացս մեր առ 'ի հանգստանալ

մինչև ցառաւօտ։ Պատմեաց մի ոմն 'ի պարուցն, եթէ ետես ընդ երեկս մնաւ մի վարեալ 'ի յորձանաց ծովուն առ կղզին կոյս. եթէ ծածկեաց զնա գիշերն 'ի տեսութենէն իւրմէ. և թէ՝ զերկու ժամաւ զկնի արևմտից լուաւ զբոմբիւն տագնապագոյժ թնդանօթից. այլ զի ծովն այնպէս մրրկածուփ ալէտանչ խռովեալն էր, զի և չինչ կարր դիմագրաւ լինիլ իշխէր արտաքս. եթէ՝ ոչ բազմաց զկնի թուէր ինքեան տեսանել զաղօտ ինն լոյս Հրագի պահակերաց նաւուն. որ այսքան մերձենալով յանն կոյս՝ խիթայր թէ անցեալ էր ընդ մեջ ցամաքին և վոքրիկ կղզւոյն Ամբերայ, շփոթմամբ առեալ զայն փոխանակ ընդ Սարին Հգանց, զորով քերեն նաւք 'ի շահիլն զնաւահանգիստն Լուդովիկոսի. և եթէ այս այսպէս լինէր՝ թէ և չկարէր զայն հաւատել՝ երկնչէր զի էր նաւն 'ի մեծի վտանգի։ Արիւս ոմն կղզեցի ծանոյց ապա, եթէ ինքն յոլովեցս անցեալ էր ընդ նեղուցն՝ որ որոշէ զԱմբերն 'ի ցամաքէն, և զորոյ կշռեալ իսկ էր զիսորութիւնն. եթէ անքոյթ էր ծովածոցն, և թէ անդ այնքան ամուր և յապահովի եղեցի նաւն, որպէս եթէ 'ի նաւահանգստի։ Երրորդ ոմն ապա յառաջ մատեաւ. եցոյց սա 'ի յայն անկարելի լինիլ նաւու անցանել նեղուց, հազիւ նաւարկելի նա՝ իսկ վարքայից. պնտեաց տեսեալ զնաւն յայն-

կոյս խարիսխ արկեալ կղզւոյն Ամբերայ։ և այս գի՝ երթէ շնչէր հողմ ընդ առաւօտն, մնրթ էր նմա վերադառնալ 'ի ծովն և կամ զհան-գիստն աջողել։ Կարծիք բաղմապիսիք հատուա-տեցան 'ի վերայ այսր առարկայիս։ զոր մինչ Կրիսոլքս անհոգք հանդարտ քննէին, Պաւլոս և ես զնորինն պահէաք լռութիւն։ Կացուք մնա-ցաք առ տեղեաւն ցմերկանալ գիշերոյն, յոր-ժամ օդն մառախլապատ ոչ շնորհէր մեզ 'ի շամանդաղապատն նշմարել ինչ 'ի ծովու։ Զոր միանգամ ատակէաք նշմարել՝ էր թուխպ ինն ուղղամած, զոր մեզ գոլ ասացին կղզին Ամ-բերայ կիսով խրատախաւ հեռի 'ի ցամաքէն։ Մի միայն գծովերգն՝ ուր կանգնեալն էաք, և զարտեանս ոմանց 'ի ներքսակողմն կղզւոյն ե-ղելոց լերանց՝ որք յամպոց անտի վարատեալ գային երբեմն յերևան՝ կարէաք նշմարել 'ի մթաղգած և 'ի նսեմ յայս աւուր։

Յեօթներորդ պահու առաւօտուն լուաք 'ի միջոյ մայրեացն գծայն արապանաց, և նոյնհետայն երևեցաւ բդեաշխն Մոնսիուր տ'լա Պուռտոնիէս՝ աշտանակեալ 'ի ձի, զորոյ զհետ երթային վաշտկանք հրացանաւորք, հա-բիւրաւոր կղզականք և հաւիշիկք։ Դատակալ-գեաց զզօրս իւր առ ծովեզերբք և հրամանն ետ սմենեցուն հրացանս արձակել։ որոյ ընդ լսու-թիւնն տեսաք 'ի վերայ ջրոյն զլոյս ինչ աղօտ,

զՀետ որոյ առօրին եկն ձայն Թնդանօթի։ Վըշ-
ուեցաք ամենեքին ոչ կարի հեռի լինիլ նաւուն։
և փութացաք անդր՝ ուր տեսաք զլոյս։ Ահա
'ի միջոյ շամանդաղին նշմարեցաք զյատակ և զա-
ռագաստակալս յաղթ նաւու մոջ։ և թէ և ձայն
ըլոյն մեծ աղաղակ հարկանէր, հերիք մերձ է-
ալ լսել զսպասաւորին զշչիւնն 'ի ղեակին
և զաղաղակս նաւաստեաց։ Իբրև ետես Սան
Ճիուռան զհերիք մերձաւորութիւնն մեր ընծայ-
ել նմա զօՀան, հաւեաց արձակել զթնդա-
նօթս երից վայրկենից միջոցիւք։ Արար Սո-
սիուր տ'ալ Պուռտենէս արկանել խարոյկս առ
ծովեզերօքն։ և արձակեաց առ մերձակայս 'ի
խնդիր նպարից, տախտակաց, մալեաց և թա-
փուր տակառաց։ Առօրին երևին բազմութիւնք
ժողովրդեան՝ զորոց զկնի գային հափշիկք բար-
ձեալք նպարակօք և կազմածովք նաւուց։ Առա-
ւել հինաւուրցն 'ի տնկագործաց անտի մատու-
ցեալ առ բդեաշխն ասէ. "Զգիշերն ողջոյն
լսելի եղեն մեզ կերկերեալ ձայնք 'ի լերանց
և յանտառաց. զիրարին տերևք ծառոց, բայց
ոչ գոյ հողմ. օդականք ծովայինք ապաստան
անկանին 'ի ցամաքն մեր. անշուշտ ցուցակքս
այսոքիկ զթևեալեայ գուժեն մեզ։" — "Եւ
կարի քաջ յիրաւի բարեկամք իմ," պատաս-
խանեաց դեհապետն. "կազմեցաք պատրաստե-
ցաք մեք կանխաւ առ վաղհանդ այդ։ և առանց

երկուանաց նաւն ևս խակ։”

Ամենայն ինչ պմոտալուտ Թևերլեայ քարոզէր։ Կենտրոնն Թիպոցն 'ի գագաթնակիսի անհնարին լերդագոյն՝ 'ի վերջաւորս զարգարեալ պղնձերանգ։ կրկնէր հնչեցուցանէր օդն զհունչս վրիգաթի։ ջրշան և այլոց բիւրաւոր թռչնոց ծովայնոց։ որք՝ Թէ և խաւարաքօղ էր մթնոլորտն՝ փուլթալ փուլթային յամենայն կուսէ հորիզոնին անկանիլ 'ի կղզի աստ։

Ցիններորդ պահուն լսելի եղեն 'ի կողմանց ովկիանուն անհնարին ձայնք ահռելիք։ որպէս եթէ հեղեղք ջուրց խառնեալ ընդ ոլոտման հոսեցին յանփափայից լերանց։ Աղաղակ իմն օդահերձ լսելի եղև։ “Թևերլե՜այ — Թևերլե՜այ։” և 'ի քթիթ ական ահաւոր իմն փոթորիկ վանեալ ցրուեաց զմէգն՝ որ ստուեր ածէր կղզւոյն Ամբերայ և նեղուցի նորին։ Պարզեցաւ ուրեմն Սան Ճիուռան տեսուլթեան մերում։ դահլիճ նորա խառնեալ բազմութեամբ մարդկան։ առագաստակալք և գագաթնակայմք անկեալք 'ի վերայ դոտիկունին։ դրօշակն խարտակեալ։ կառանք ջրք արկեալ յառաջոյ և մի ևս պինտ կալեալ 'ի խելից։ Արկեալ էր զկարիսխ 'ի մէջ Ամբերայ և ցամաքին։ 'ի մէջ խաղխաղացն[32] այնոցիկ՝ որ շրջապատեն զկղզին։ և ընդ այս աւազակոյտ անցեալ էր նա յայնպիսում տեղւոջ։ ընդ որ և ոչինչ նաւք անցեալ էին

երբէք։ Դէմ եղեալ էր զգլուխ իւր անհնարին բաղխման կոհակաց՝ Թաւալ գլէլոց յընդարձակ ծովէն։ և ընդ 'ի յանձուկն յարձակիլ անցնիւր կոհակաց, ամբառնայր նաւն մինչև պարզիլ իսկ յատակին 'ի յօդս։ և խելքն նոյնհետայն սուզանելով 'ի խորս՝ ամենևին անհրևոյթ լինէր։ որպէս եթէ կլեալ 'ի կոհակաց։ 'Ի դրուԹեանս յայսմիկ վարեալ մղեալ 'ի հողմոց և 'ի կոհակաց ցանկ առ ամն կոյս՝ հաւասարապէս անհնար էր նմա դառնալ 'ի նոյն ընդ որ եկեալն էր Հանապարհ, և կամ խզելով զՀօպանս խարսխաց իւրոց անկանիլ 'ի ծովեղեն, յորմէ խաղխաղք և վէմք տարանջատէին զնա։ Անցնիւր կոհակ՝ որ մանրեալ խորտակէր 'ի վերայ ծովեղեր՝ գոչելով անցանէր ցրտորին մասն պարոյրին, հնգիցս տասն ոտնաչափ 'ի բարձր 'ի ցամաքն կոյս վանեալ մղելով ըզտսխտակս։ ապա ընդ կրունկն դարձեալ՝ մերկս Թողլով զխՀալից յատակն, գլեալ հոլովէր անտի զՀարուստ վէմս կերկերեալ ծայնիւ ահաւոր։ Ծովն զայրացեալ 'ի սաստկուԹենէ հողմոյն՝ դարիւ և դարիւ սՀեալ բարձրանայր։ և նեղուցն որ 'ի մէջ կղզւոյս և կղզեկին Ամբերայ՝ էր լայնածաւալ իմն տաշտ արծաԹափայլ փրփրոյ՝ պատառեալ ակօսիւք 'ի սևաԹոյր կոհակաց։ Փրփուրն եռացեալ 'ի գոգն ծովուն՝ ունէր առաւել քան զվեց ոտնաչափ

բարձրութիւն, և հողմոյն աւել ածեալ մա-
կերևութի նորա՝ գերիեալ տանէր զնա ընդ ա-
փափայ եզերսն քան զկիսով խրատախաւ 'ի
վերայ ցամաքին։ Ամբաւ տարավքս սպիտակք
վարեալք մղեալք առ եզերսս մինչև ցունչ լե-
ռինն՝ երևէին որպէս ձիւնք ծնեալք յովկիա-
նոսէն, որ ապաքէն խառնեալ էր ընդ հաս-
տատութեանն երկնից։ Թուխպք թլպայորդք
թանձրամածք սիգաքայլք խաղային 'ի գա-
գաթնակիտի՝ վարեալք սրընթացութեամբ
թռչնոյ, մինչ զի այլքն երևէին իբրև վէմ
անշարժք։ Ոչինչ մասն կապուտակին նշմարիւր
յերթերին, միայն տժգոյն ինչ շող երևոյթէր զա-
ռարկայս ցամաքին և ծովուն և երկնից։

Յանհնարին հարուածոց նաւուն
պատահեցան սղետալի վտանգք՝ որ զմեզ սար-
սեցուցին։ Ճոպանքն՝ որ 'ի գլխոյ կուսէն՝ խը-
զեալ խորտակեցան ամենայնն, միայն մէն ու-
բեմն մնաց 'ի խելաց, և առժամայն զարկեալ
ջաղջախեցաւ նաւն 'ի վերայ ժայռոյ, կիսով
մալեոյ չափ հեռի 'ի ցամաքէն։ Զայնք աղաղա-
կի արհաւրաց հնչէին 'ի գնենակմաց անտի։ Հրա-
սէ Պաւլոս առ Ծովն կոյս, և իմ կալեալ
զաղոյ նորա՝ "կամիս," գոչեցի, "կոյն-
չէլ։" "Թող ինձ," աղաղակեաց, "զերբ-
ծուցից զնա, կամ թէ ես մեռանիցեմ։" Տի-
բեալ ելով վհատութեանն ուշոյ յիշատակի

նորուն՝ Դոմինկոն և ես առ 'ի ապրեցուցանել զնա, պնտեցաք զմիջոցն պարան՝ կալեալ յերկոցունց 'ի ծայրիցն։ Գահավիժեաց ապա Պաւլոս զկնքն 'ի ծով՝ հապ Xեպ տուեալ առ նաւն կոյս, երբեմն 'ի լեզ գնալով և քայլելով երբեմն 'ի վերայ վիմաց։ Ցուսացաւ և ես հասանել նաւին՝ զոր պարակման շարժմամբք իւրովք թողեալ էր ծով առն 'ի ցամաքի, մինչ զի հնար իսկ զշրջանս նորա առնել հետիոտս։ այլ զի յանկարծաթափ ալիք յարուցեալ նորոգ կատաղութեամբ ծածկեցին զնա ընդ ջրոց լերամբք, որք ամբարձին զնա ապա ուղղակի 'ի վերայ յատակին։ Նոյնհետայն կոհակք զընկեցին զվատաբաղդն Պաւլոս հեռի 'ի վերայ ծովեզերք՝ սրունք նորա թաթաւեալ յարիւն, լանջքն վերաւորեալ և ինքն իսկ յոգիս ապաստանեալ կիսամեռ։ Իսկոյն իբրև սթափեցաւ՝ յարուցեալ դարձաւ միւսանգամ նորոգ եռանդեամբ առ նաւն կոյս։ որոյ կողմունքն ապաքէն բացեալ էին ուրոյն 'ի բուռն հարուածոց կոհակաց։ Ցուսակտուր եղեալ նաւաղանց յաղատուութենէն իւրեանց՝ զընկեցին զկնքեանս խըմբովին 'ի ծով, կալեալ զառագաստակալս, ըզտախտակս, զվանդակս, զտրապիզս և զտակառակս։ Առօրին երևեցաւ առարկայ ինն վայելչապէս յարմարեալ 'ի շարժել զհամակրութիւն անվաղճան։ մատաղատունկ բամբիշ մի կացեալ 'ի

պատշգամբին 'ի խելս Սան Ճիուռանին՝ տարա-
ծեալ զբաղուկս իւր առ նա, որ այնչափ գուն
դնէր միանալ ընդ ինքեան։ Էր սա Վերգինիա։
Ծանեաւ սա զսիրունն իւր յանքաւսքնելի արու-
թեանց անտի նորուն։ Տեսութիւն այսր սիրա-
լիր օրիորդիս անկելոյ 'ի վտանգ այս գոյն
սոսկալի՝ ելից զամենեսին զմեզ աննկարագը-
րելի վհատութեամբ։ Իսկ Վերգինիա անվը-
կանգ և արժանապատիւ տեսլեամբ ՀՕՀԷր ըզ-
քաղուկս իւր որպէս ԵԹԷ տալով մեզ զյաւեր-
ժական հրաժարականն ողջոյն։ Նաւաստիք ամ-
նեքին գահավիժեցան 'ի ծով քա՛ւ 'ի մոյ մի-
այնոյ՝ որ տակաւին 'ի գտիկնին նաւուն մեր-
կանգամ և անարի որպէս զԱՀՍԱԳՆ[33]։ Մատեաւ
սա պատկառանօք առ Վերգինիա։ 'ի գուՀս ի-
ջեալ առ ոտս նորուն՝ ջանահնար լինէր ոտի-
սել զնա մերկանալ զհանդերձս։ այլ նա հեր-
քեաց զնա պարկեշտութեամբ։ և թիկունս դար-
ձուցեալ նմա՝ շրջեաց զդէմս իւր։ Արկնակի ա-
ղաղակք լսելի եղեն ապա։ "Ապրեցո՛, ապրե-
ցո՛։ մի՛ թողուր մի՛ լքաներ զդա։" այլ 'ի նը-
մին ժամու լեռնացեալ կոհակ անհեթեթ մե-
ծութեամբ միլՀեցաւ ընդ մէջ Ամբերայ կղզւոյն
և ցամաքին և սպառնացաւ նաւուն խարխալե-
լոյ՝ գոռալով սարելով առ նա։ սեաւ ունելով
զկողս իւր և զգլուխն փրփրածին։ Յայս տեսիլ
սոսկալի զլինկեց զլինքն նաւաստին վիժանեաց 'ի

ՊԱՒԼՈՍ ԵՒ ՎԷՐԳԻՆԻԱ

Էջ՝ սա Աէրէնէա։ Ծառէաւ սա գնէրու�էր յանդասէնէլի աշխարհէն առաքեալն։ Էջ 166։

ծով. և Վերգինիա զանհրաժեշտն մահ առ ա-
ջաց տեսանելով՝ պարուրեաց միով ձեռամբ զհան-
դերձս իւր և զմիւսն եդ 'ի վերայ սրտին. համ-
բարձեալ զգաղցրահայեաց զաչս իւր 'ի յեր-
կինս 'ի վեր՝ թուէր հրեշտակ ինն գօտի ա-
ծել թևանալ 'ի յերկինս։ Ո՞վ օր արհաւրաց։
Աւա՜ղ, ամենայն ինչ կլեալ եղեն յանդիղոյ կո-
հակաց։ Ակամունք ջուրց ընկեցին զոմանս 'ի
զնկանացս անտի՝ զորս մղ՝նք գթութեան սա-
գրեցին յառաջել առ Վերգինիա՝ հեռի 'ի
վերայ ծովեզեր. և ևս զնաւաստին՝ որ դալա-
կեալ էր զերծուցանել զարև նորա։ Այրս այս՝
որ զերծաւ գոգ յանխուսափելի մահուանէ՝ 'ի
ծունր իջեալ 'ի վերայ աւազոյն այսպէս աղա-
ղակեաց. "Ո՞վ Աստուած իմ. ապրեցուցեր ըզ-
կեանս իմ. փոքք քեզ. բայց մտագիւր անսայի
տալ զայն փոխանակ ընդ ողորմելի աղջկանն։"

Դոմինկան և ես ձգեցաք զՊաւլոս
զգայազիրկ 'ի ցամաք. արիւնն ոուրեալ հոսէր
ընդ բերան նորա և բարբառնկալ գործա-
ւրանն. յանձն արար զնա բգեաշլան 'ի խնամս
վերաքուժի միոջ այն ինչ մեք ձիգ զհետ մը-
տեալ խնդրէաք զմարմնն Վերգինիայ զծովե-
զերաւն. այլ յանկարծակի այլայլեալ հողմոյն՝
որ ստէպ պատահի առ թևեալեայ՝ յընդունայն
վաղճանեցան խնդիրքն մեր. և ողբացաք զի ոչ
և ևս ժամանեցաք հատուցանել դժբաղդ օրի-

որդիս զվերջին դամբանականն տխուր պարտիս։

Դարձ արարաք անտի ընկղմեալ 'ի խորս ահաբեկութեանց։ և միտք մեր ողջոյն գըբաւեալ 'ի միոյ միայնոյ անագորոյն կորստենէ, թէ և յոգունք էին 'ի կորուստ նաւակոծութեանն։ Երևեցան իսկ ոմանք 'ի զինականացն՝ գրգեալ յօրհասաբեր կատարածէ առաքինազարդ բամբշիս՝ բարժամտիլ զնախախնամութեան էութենէն։ Աւա՜ղ։ այնպիսի՛ ահագին և այնպիսի՛ անարժան չարիք գո՞ն 'ի կեանս, մինչև իմատանոց † անգամ երբեմն տայթաքիլ յուսոյն։

'Ի նմին ժամանակի Պաւլոս՝ որ հաւէր ուշաբերիլ 'ի միտս՝ տարեալ եղև 'ի մերձակայ տուն մի, մինչև զօրասցի փոխադրիլ 'ի բնակութիւնն իւր։ Անգր ուրեմն ուղղեցաք ես և Դոմինկոն զգնացս մեր։ և անձին կալայ զտխուր հարկն պատրաստելոյ զմայր Վերգի-

† Այդպէս ի բերանս կղերականաց։

Տեսեալ 'ի ոտորինն՝ խոռնակ զմենոյն,
զվիճակ մարդկայնոյն՝ յաւերժ 'ի մընան.
ըզվերոյ հոյոսել՝ ի զլուսոյ կենան,
ելբոնոյ 'ի ոբրոէս՝ անկանին հոբժան։
Եւ յեր գոյ խորհուրդ՝ ի ողխորհ հոմոյն,
զբիպոկու վրբ՝ ոնհանձրուկան.
Ի ի զբ զբոնոմ՝ ուսուուծպէուկան.
կամ ի զուանի գոյն՝ ոռ ու մբ խրնոմ։

Թեուուրս։ գերբ ծե։ գլ. ՀԵ։

նիայ և զմտերիմ նորին 'ի վշտագին գոյժն բսթալիր։ Իբրև մերձեցաք առ մուտս հովտին Պամպանոս գետոյն, ազդեցին մեզ հաւիշիկք ոմանք՝ եթէ զյոլով բեկտորս նաւակոծութեանն ընկեցեալ էր ծով 'ի պարոյրն Հանդիպակաց։ Իշաք մեք 'ի նոյն։ և առաջին առարկայն՝ որ ետար զաչս իմ՝ էր գիակն Վերգինիայ։ Մարմինն կիսով ջուր ծածկեալ ընդ աւազով՝ էր 'ի նմին իսկ վայելչութեան՝ որպէս տեսաք զնա ընկղմիլ։ Պատկեր կերպարանաց նորա և ջինջ այլայլեալ։ ականողիքն՝ խուսք։ և տեսիլն գիմաց տակաւին զքաղցրութիւն շնչէր։ այլ դալկահար մանիշակք մահուան խառնեալ էին ընդ կուսականն ամբխածութեան ժպիտ 'ի վերայ այտից նորա։ Մի 'ի ձեռացն երիւրեալ 'ի վերայ զգեստուցն։ և միւսն՝ որ 'ի վերայ սրտին՝ այնպէս պինտ սեղմեալ էր և կարկամ, մինչ զի յոյժ դժուարութեամբ աջողեցաւ ինձ առնուլ 'ի բռանէն պիոքրիկ տիբեակ մի։ ոմ, ուրջամ անհնարին եղև խռովութիւնն իմ, յորժամ 'ի նմա զՊաւլոսին գտի զպատկեր։ զոր խոստացեալ էր նմա ջտալ 'ի ձեռաց երբէք, մինչև ցետին կէտ կենդանութեանն իւրոյ։ Ցայս տեսիլ վերջին փորձոյ հաւատարմութեան և խանդաղատանաց վաստաբաղդիկ սրիոբդիս լացի դառնապէս։ Որչափ առ Դոմինկոն՝ բաղխէր նա ըզկուրծս իւր և հերձանէր զոդն կականմամբ իւ-

բով։ Տեղաղերծեալ ուրեմն զմարմինն Վերգի-
նիայ՝ առեալ տարաք զնա 'ի խուղ ձկնորսի
ուրեմն։ և աւանդեցաք 'ի ձեռս Պալատայ կա-
նանց ոմանց անքատաց՝ որք խնամով իմն 'ի նո-
ին լուացին զաւազն 'ի յանձնէն։

Այն ինչ Հապաղեալ էին նոքա յայս
գործ վշտագին, ինքաք մեք դանդաչուն քայլուք
առ տնկագործութիւնն։ Տիկինն տ'ա Դավրի և
Պարգարիտ յաղօթս իջեալ՝ դէտ ակն կալեալ
ճոպին լոյ ինչ 'ի նաւէն։ Իբրև ետես տիկինն
տ'ա Դավրի զգալուստն իմ, աղաղակեաց սաստ-
կութեամբ։ "Որ է որդեակն իմ, իմ սիրե-
լի որդին։" Լռութիւն և արտասուքն իմ գու-
ժեցին նմա զթշուառութիւնս իւր։ Յանիշտա-
կեցաւ առժամայն 'ի ցնցողական մղձկանաց յօր-
հատական 'ի ցաւոց։ և ձայնն միայն լսելի լի-
նէր 'ի թառանչիւնս։ "Որ և իմ որդին," գոչեաց Պարգարիտ, "ոչ տեսանեմ զնա։" և անզօր թալկացաւ։ Փութացաք ամենեքին 'ի թիկունս նորա, որ ընդ հուպ սթափեցաւ։ և հաւատեալ զորդւոյն իւրոյ զփրկութիւնն ընդ խնամովք դեհապետին՝ սկէտ յանձին կա-
լաւ միայն յօգն ժամանել համշիրաքին իւրոյ։ որ կալաւ զընդերկար և զհետեւակ թալկաց-
մունս։ Յայնպիսի անհնարին և սաստիկ 'ի վիշտս անցոյց զգիշերն տիկինն տ'ա Դավրի, զի բռնա-
դատեցայ գրել եթէ չէք որպէս զմայրականն

այլ ցաւ յաշխարհի։ Իբրև ամիսներեաց զմիտս իւր, արձակեաց ամբարձ զնուազեալ և զանշարժ զաչս իւր 'ի յերկինս 'ի վեր։ Ընդվայր բարեկամ նորին և ես սեղմեաք զձեռս նորա 'ի ձեռին մերում, ընդվայր ձգնեցաք նմա զսիրապատար անուանս, զի ամենևին զգայաղերկ երևէր։ և Հնչեալ կուրծք նորա արձակէին զևսրին քուքս անհնարին։

Ածաւ Պաւլոս ընդ մերկանալ աշալրջոց պատգարակաւ 'ի տուն։ Ուշ 'ի կուրծս անկեալ այն, բայց չատակէր արտասանել զբառ և ոչ մի։ Տեսութիւն նորա՝ յորմէ զանգիտէի՝ ծնոյց 'ի մայրն իւր և 'ի տիկինն տ'ալ Դավրի զևս բարեգոյն ներգործութիւնս քան զամենայն զիսյթս իմ։ Շող լինի մխիթարութեան ցոլացաւ 'ի դէմս վատաբաղդիկ մարցս։ Վազս առեալ փութացան ընդ առաջ նորա, գիրկս արկին նմա և թացին արտասուօք, զոր առաւելութիւն անձկութեանն արգելեալ էր ցարդ 'ի հասելոյ։ Խառնեաց և Պաւլոս և զևրն ընդ նոցայն արտասուս։ և բնութիւնն զայս օրինակ գտեալ զթեթևութիւն՝ ընդերկար լինի թմբրութիւն հետևեցաւ կսկծեցուցիչ ցաւոցն՝ զոր կրեցին, և ետ նոցա թմբացական քուն ինչ ոչկէս զմահու։

Սոնսիւր տ'ալ Պուռտոնէս առաքեաց գաղտ ղեկուցանել ինձ, եթէ հրամա-

նաւն իւրով ածաւ 'ի քաղաքն մարմին Վերգինիայ, ուստի պէտք էին փոխադրել զնա յեկեղեցին Սադուկ գրովն։ Փութացայ առժամայն 'ի նաւահանգիստն Լուդովիկոսի ծովացեալն բազմութեամբ մարդոց եկեղեց ընդառաջել յուղարկաւորութեանն հանդիսին։ Իբրու այն թէ կորուսեալ էր կղզին զվայելչագոյնն 'ի շուքս իւր։ Նաւք որ 'ի նաւահանգստին՝ հատին ընդ մէջ զառագաստակալս իւրեանց։ պարզեցին զդրօշս և որոտ ընդ որոտ արձակէին զռումբս։ Զինուորք ոմբաձիգք առաջնորդէին յուղարկաւորութեան թաքօրին՝ շրջեալ զհրացանին իւրեանց զգլուխն 'ի վայր։ արապանք ծածկեալք բարբառէին զնայ ձայնս տխրականս։ Բամբիշք ութ թուով յեւ ակնաւոր գերդաստանաց կղզւոյն 'ի զգեստս սպիտակս ունելով 'ի ձեռին զոստս արմաւենեաց՝ կրէին զսիրուն ընկերակցին իւրեանց զգեստակին զբորբն զպսակեալն ծաղկամբք։ Զհետ սոցա գնային խումբ մանկանց յերգանակելով զշարական։ դեհապետն զօրապետաօք իւրովք։ ամենայն ականաւորք քաղաքին և անթիւ ճանձիւ մարդկութեան յաջորդէին զմիմեանս։

Զայս հանդէս յուղարկաւորութեան պատուիրեցին կազմել նորին իսկ տէրութեան աւագանին՝ շուք դնել անձկալով առաքինութեանցն Վերգինիայ։ Այլ յորժամ մերձեցաւ

թափօրն առ ոտս լերին 'ի տեսութիւն խրա-
թացն այնոցիկ՝ որոց այսքան ընդերկար լեալ էր
զարդ և ուրախութիւն, և զոր օրհնան իւր
զարդիս լցեալ էր վհատութեամբ՝ ընդմիջե-
ցաւ շուքն յուզարկաւորութեան. լռեցին շա-
բականք և կցուլգք դադարեցան. կրկնէր դաշ-
տավայրն և ձայնատու լինէր հառաչմամբ և ողբ-
ովք. խումբք օրիորդաց վաղս առեալ 'ի մեր-
ձակայ անկագործութեանց՝ գային զնաշ Վեր-
գինեայ պատկեալ երիզիւք[34], պատկոք և բոլ-
բիւք ծաղկանց՝ կարդալով զնա որպէս զսուրբ
մի. Մաղթէին մարք 'ի յերկնից զորդի մի որ-
պէս զՎերգինիա, տարփաւորք՝ զսիրտ այսքան
հաւատարիմ, անքատք՝ սմին նման սխրալի բա-
րեկամ. և ատանկք՝ ասպէս տիկին պատուական.

Իրբև ժամանեաց հանդէպ 'ի տե-
ղին Թաղման, հափշտուհիք Մատակասարայ և
Մուսամբիկեան քարիւք եգին շուրջ զդիա-
կամբն տառաղանս պտղոց. կախեցին և կա-
պերտս կտաւոյ 'ի մերձակայ 'ի ծառոց ըստ
սովորութեան իւրեանց. Հնդիկք Բանկալցի և
ծովեզերացն Մալապարայ ածին զվանդակս թռչ-
նոց, զոր 'ի վերայ դեսպակի նորուն թողացու-
ցանէին ազատս. Զայս օրինակ դառն օրհաս սի-
ոնն առարկայիս շարժեաց զբնակիչս այլազգեն
քաղաքաց. և զայս օրինակ ծիսարանք այլազգեն
կրօնից բուրեցան 'ի վերայ տապանին վատա-

բաղդն առաքինութեան։

Թաղեցաւ ուրեմն առերբ եկեղեցւոյն Սադուկ գրովն 'ի յարևմտեան կողման, առ ոտս Թփուտին շամբոյ՝ ուր 'ի դարձին 'ի պատարագէն ընդ մօր իւրում և Մարգարիտայ քաղցրանայր Հանգչիլ, բազմեալ առ նոսաւ զոր եղբայր իւր անուանէր։

Մոնսիսուր տ'ալ Պուռտոննէս 'ի դարձին իւրում 'ի Հանդիսէն Թաղման ուղղեաց զգնացս իւր առ այսր, որում հետևէին մասամբ ինն իւրն բազմաթիւ ուղեկիցք։ Ընծայեաց տիկնոջն տ'ալ Դավրի և բարեկամի նորուն զամենայն օՀանս, որչափ կայր յիւրում կարի 'ի մատուցանել։ Յետ ցուցանելոյ զորտմուԹիւն իւր 'ի վերայ անագորոյն բարուց անգԹական նորին Հօրաքեռ, մատեաւ առ Պաւլոս և ասաց ցնա զոր միանգամ 'ի դէպ Համարէր փաղաքշել և մխիԹարել զնա։ "Վկայ են ինձ Երկինք," ասաց, "զի ցանկայի սպառՀովել զերջանկութիւնս քոյ և քոյոցն ընտանեաց։ Օ՜ն անդր։ բարեկամդ իմ, եկ գնա դու 'ի Գաղղիա։ խոստանամ տալ քեզ անդ զպաշտօն ինչ։ և 'ի բացակայութեան քում՝ զայն ինամ կալայց առ մայրն քոյ, զոր միանգամ պարտիմ մօր իմում։" Մատոյց ապա նմա զձեռն իւր, այլ Պաւլոս Թիկունս դարձուցեալ շրջեաց զդէմս իւր՝ տխուրժելով իսկ ակամել 'ի դէմս նորա։

Մնացի ես 'ի անկապուծութեան վատաբաղդիկ բարեկամաց լմաց, զի մատուցից նոցա և Պաւլոսին զայն ամենայն պարտիս բարեկամութեան՝ որ մեզկեն զվիշտս, թէ և ոչ աւաքեսցեն։ Երկոց եօթներորդաց զկնի զօրացաւ Պաւլոս զգնալ, բայց կիթատէր միտքն ըստ էապուս զօրանալոյ կաղմուածոյ նորին։ Երևէր անզգալի առ ամենայն ինչ. հայեցուածն՝ թմբրեալ. և յորժամ հարցեալ՝ և չինչ առնէր զպատասխանի։ Տիկինն տ'ալա Դաւլի՝ որ զախտ մահացու համբուրէր՝ ասէր ցնա ասէր. "Որդեակ իմ, իբրև տեսանեմ զքեզ, կարծեմ տեսանել զՎերգինիա։" — Յանուն Վերգինիայ զդողի հարկանէր նա. և զերդևեալ երանէր 'ի նմանէ՝ չինչ ունկն մատուցանելով թախանձանաց մօրն իւրոյ՝ դարձ առնել առ բարեկամն իւր։ Հանապազորդէր ստէպ յածիլ 'ի դրատին և հանգչէր առ ոտս գաղատիոյն Վերգինիայ, ակնապիշ յառեալ պշրեալ 'ի վտակն։ Վերաբոյժ բդեշխին՝ որ կարի լմն հաշտ եցոյց մտադրութիւն առ Պաւլոս և առ ողջոյն գերդաստանն՝ ասաց ինձ. զի առ 'ի վարատեալ զանհնարին թախծութիւնն 'ի մտաց նորա, պէտք էին անդիմակաց թոյլ տալ նմա առնել զոր միանգամ կամիցի, որպէս զմի միայն եղանակ ստանալոյ անմեղկելի լռութեան նորին։

Որոշեցի վճռեցի հաստատեցի ուրեմն գնալ զՀետ խորհրդոյս։ Առաջին պէտք վերանորոգեալ զօրութեանն Պաւլոսի եղէն հեռանալ մեկնիլ բացակայել 'ի մեկագործութենէն։ 'Ի մտի եդեալ չկորուսանիլ զտեսութիւն նորա՝ առօրին ելի և ես զՀետ նորա, պատուիրելով Դոմինկոնի առնուլ նպարակ և հետևիլ մեզ։ Պաւլոսի կինք և ոգիք երևեցան նորոգիլ յինչանեն անդ 'ի լեռնէն։ Պալաւ զՀանապարհ Սաղուկ գրովի։ և իբրև մերձեցաւ յեկեղեցին 'ի նրբափողոցն եղեգանց, ուղղեաց առժամայն ըզգնացս իւր առ վայրն՝ ուր զնորարկեալ նշմարեաց զՀող։ և անդ 'ի ծունկս անկեալ՝ ամբարձ զաչս իւր 'ի յերկինս, զընդերկար աղօթս վերառաքելով։ երևեցաւ ինձ այս գուշակ բանականութեանն դարձի։ այնու զի նշանս այս ապաւինութեան 'ի գերագոյն էին ցուցանէր՝ եթէ հաւեալ էր միտք նորա ստանալ վերստին զբնական գործառնութիւնս իւր։ Հետևելով օրինակի նորուն՝ 'ի ծունր ինչք և մեք՝ Դոմինկոն և ես։ և խառնեցաք զմերն ընդ նորայն պաղատանս։ Ցարուցեալ ապա վարեաց զգնացս իւր դէպ 'ի Հիւսիս՝ և չինչ փոյթ ունելով զմենք։ Փոխանակ զի գիտէաք եթէ ոչ միայն տգէտ էր զտեղւոջէն՝ ուր թաղեցաւ Վերգինիա, այլ և՝ եթէ ապշոտեցաւ արդեօք մարմնոն 'ի յալեաց։ Հարցի ցնա, ընդէ՞ր աղօթեաց առ ոտս այնց եղեգանց։

Պատասխանի արար։ “ բազմից 'ի միասին եղաք մեք անդէն։ ” Յաճախեաց հետևանալ 'ի գնացս իւր՝ մինչև ժամանեալ հասաք 'ի սահմանս անտառաց, յորժամ յարեաւ խաւարն ունիլ զերկիր ընդ քօղով։ Փաղաքշեցի զնա առնուլ զխիւս ինչ։ և ննջեցաք 'ի վերայ սիզոյ յունջս ծառոյ միոջ։ Յերկրորդում աւուր Թուեցաւ ինձ եթէ հանդերձէր կազմէր դառնալ ընդ կրունկն։ զի պըշրեալ ընդ երկար 'ի վերայ եկեղեցւոյն Սադուկ գրովի և ծառատնկոցն եղեգանց՝ ձիդ ձգեալ ընդ դաշտավայրն, եցոյց զշարժուած իմն որպէս եթէ դառնալ ընդ կրունկն։ այլ յանկարծակի միլՀելով 'ի Հաղագն՝ վարեցաւ 'ի հիւսիսակողմն։ Կշռեցի զմիտս նպատակի նորա։ ընդվայր դալսկեցի շրջել զնա 'ի խորհրդոց։ Ժամանեցաք զմիջաւուրք յայն կողմն կղզւոյն՝ Ոսկի Աւազ առձայնեալ։ Սրացաւ յարձակեցաւ առ ծովեզրն հանդէպ այնորիկ՝ ուր զԱան ճիւռան ետես կորնչիլ։ Ընդ տեսիլ կղզեկին Ամբերայ և նորայն նեղուցի՝ առ ժամն մաքուր որպէս զՀայելի՝ գոչեաց, “ Վերգինիա, ո՞վ իմ սիրելի Վերգինիա։ ” — և անկաւ նուաղեալ։ Դոմիկն և ես բարձեալ տարաք զնա 'ի յանտառն, ուր ոչ սակաւ ծանր եղև մեզ թափել զնորին թմրութիւն։ Զկտեցաւ միւսանգամ դառնալ վերստին 'ի ծովեզրն։ բայց երդմնեցուցանեն մեր զնա չնորեալ զիւր և զմերն թաղ-

ծութիւն այսմանակ անհնարին յիշատակաց՝ կա-
սեցոյց զընթացս նորա և շրջեաց յայլ շա-
ւիղ։ Զաւուրս ութն անընդհատ շրջեցաւ ընդ
ամենայն կողմանս՝ ուր գամ մի զգնացեալ էր
ընդ ընկերին մանկութեան իւրում։ Դարձաւ և
ընդ Հանապարհն՝ ուր գնացեալ էր աղերս ար-
կանել յերեսաց զանգկին Սեաւ գետոյ։ Պշե-
ցաւ և ևս ընդ թումբս Եռատայրւոյն՝ ուր ան-
զօր 'ի քայլել հանգեաւ Վերգինիա, և ընդ
կողմն անտառին՝ ուր կորուսին զուահն իւրեանց։
Այս ամենայն դեգերանք՝ որ յիշեցուցանէին զան-
հանգստութիւն, զզբօսանս, զհաշկերոյթս և
զբարեգործութիւնս նորին՝ զոր սիրէր։ գետն
զառ 'ի վայր լերին, բնակութիւնն իմ։ մօտաւոր
կարկաջատհանն, փոքրաստեղենին՝ զոր տնկեաց
նա, մամռապատ ընդարձակավայրն՝ ուր քաղցրա-
նայր արշաւել, մուտն անտառին՝ ուր սովոր
էր յեղանակել՝ թոռեցուցանէին ստէպ յաչաց
նորա զանյոյս սիրոյ զարտասուս։ և նոյն իսկ
արձագանգք՝ որ յաճախակի հնչեցուցանէին զը-
փոփոխ ցնծութեան ձայն նոցա՝ զարգիս վան-
կէին միայն զվհատական բարբառս։ " Վերգի-
նիա, ո՞վ իմ սիրելի Վերգինիա։"

Զայսպիսի վայրենական և թափա-
ռական կեանս վարելով՝ լինէր լուսոյ նորա սու-
զան և խորացան։ այլագունեցաւ մարմին։ և
ողջութիւն անձին վաղ վաղ նուազէր։ Աներ-

կեան՝ երթէ և ևս ստստկացուցանէն զարդեան
վիշտս՝ անցեալց զուարճութեանցն դառնագին յի-
շատակք, և զի և ևս հզօրանան կիրք յառանձ-
նութեան վիճակի, որոշեցի հաստատեցի խլել
զվատաբաղդ բարեկամն իմ 'ի տեսարանաց՝ որ
յուշ առնէին զկորուստ նորա, և ածել զնա 'ի
բազմազբաղ մասն կղզւոյն։ Դիտմամբս այսուիկ
ածի զնա 'ի հարգունացեալ դարս Գուլիէլմո-
սեանց՝ զոր ոչ երբէք տեսեալ էր նորա։ ուր
երկրագործութիւն և տուրևառութիւնն միշտ
պատհառէին շռինդն և պէսպիսութիւն։ Պա-
ղունակ մի ատաղձագործաց հապաղեալ 'ի տա-
պալեալ ցծառս, մինչ զի այլք խիզարէին ըզ-
տախտակս։ Կառք անցանէին և դառնային միշտ
ընդ նոյն հանապարհ։ Ամենամբ պահարք ար-
ջառաց և ոստպատանք երիվարաց արօտանային 'ի
վերայ հարուստ մարգագետնոցն այնոցիկ, ընդ
երեսս որոց հասպաղ սփռեալ կային բազմու-
թիւնք ընակութեանց։ Բազում մասունք գետ-
նոյն տիր ընդունակ էին Բոպէական ծառոցն
մշակութեան։ Հոհէր հասուն ցորեանն զգեղեցն
փունջս իւր 'ի դաշտավայրին։ Եալկք փրթ-
թեալ պերճանային 'ի մուտս հաղագաց։ և
ցանկք վարդենեաց առ հանապարհօք։ Պարզու-
թիւն օդոյն ձկտուն ընձեռեալով ջղաց՝ նպաս-
տաւոր էր Եւրոպացանց։ 'Ի բարձանց անտի 'ի
կենտրոնի կղզւոյն շրջապատելոյ լայնարձակ հա-

զագօք՝ անմարթ էր տեսանել զնաւահանգիստն Լուդովիկոսի, զեկեղեցին Սադուկ գրոլի և կամ զառարկայ ինն, որ զՎերգինիայ մարթանայր յուշ առնել Պաւլոսի զյիշատակ։ Նա՝ և լերինք, որ այլ և այլ պատկերաւ երևին առաջի Նաւահանգստին Լուդովիկոսի՝ և չինչ տան աջաց յանդիման 'ի դաշտավայրէ անտի, քայց զերկայնաձիգ սարաւանդ մի տարածեալ ուղղահայեաց գծիւք։ ուստի ելանեն վերամբարձ բրգունք պարեխաց՝ յորոց արտևանս հանգուցեալ դադարին ամպք։

Ածի զՊաւլոս ընդ տեսարանս յայսոսիկ՝ անդադար ունելով զնա 'ի շարժման, ընթանալով ընդ նմա յանձրևի և 'ի յարևու, 'ի գիշերի և 'ի տունջեան։ և ևս՝ դալակելով զի կորուցէ զինքն 'ի խորս անտառաց, բերելով զնա ընդ դաշտս անհերկս և ջրդելով 'ի ձեռն անհնարին աշխատանաց քեցել զմիտս նորա 'ի թաղձագին մտածութեանցն և շրջել զընթացս նոցին անգիտութեամբ զուզոյն՝ ուր զգնայր։ այլ հոգին տարփաւորի ամենայն ուրեք գտանէ զհետս սիրեցելոյն իւրոյ։ Գիշերն և ցերեկ, անդորրութիւն, առանձնութիւն և գերձիկքն խուժանին, ամենակն իսկ՝ որ զստուերս մառացութեան արկանէ 'ի վերայ ամենայն յիշատակութեանց՝ 'ի նանիր կարէին թափել զսիրասպատար և զսրբազան յիշատակն 'ի սրտէն։ որ

Հանգոյն սլաքին հարեալ 'ի մագնիսի՝ ձգեա՛ շարժեա՛ զնա յոր կողմն և կամիս՝ զի հաղիւ Հոգսպրեսցի դարձցի առժամայն առ բևեռն, որ ձգէն զնա։ Յորժամ 'ի դաշտս յածէաք Գուլիէլմսեանց, հարցի ցՊաւլոս. "Յո՞ երթամք մեք արդ։" Առ որ նշանացի ցուցանելով զՀիւսիսի պատասխանեաց. "Ահա՛ լերինք մեր. ո՞ն դարձցուք 'ի յայնս։"

Հուսկ ամենայնի տեսեալ երթէ զոր միանգամ հակադրէի քեզուլ փարատել ըզթաղձուութիւն նորա՝ ապարդիւն ելանէին, և զի չմնային այլ փորձք քաւ 'ի միոյ միայնոյ 'ի դիմի հարկանիլ կրից նորա ցուցմամբք՝ զոր բանն ասադրէր։ Պատասխանեցի նմա. "Այո՛ այսքիկ են լերինք, ուր երբեմն բնակէր սիրելին քոյ Վերգինիա. և այս է պատկերն՝ զոր ետուր նմա, և զոր 'ի ժամ իսկ հրաժեշտին 'ի կենդանութենէն պնտեալ սեղմեալ էր 'ի վերայ սրտին. սրտին այնմիկ սաեմ՝ որ և 'ի վերջին վայրկենին բաղխէր 'ի քո միայն տակս։" Ապա ետու Պաւլոսին զփոքրիկ պատկերն՝ զոր առ եղերս գագառվնի վտակին տուեալ էր ցՎերգինիա։ Թաղծագին խմի ուրախութիւն սփռեցաւ 'ի դէմս նորա ընդ տեսիլս այս։ Յաւիշտակեաց փափագանօք զպատկերն անզօր ձեռամբ իւրով. և կալաւ 'ի վերայ շրթանցն. Հնշեալ սիրտ նորա մերձ էր պայթիլ 'ի յուզմանց. և լինէք

լուսոյն լցեալ արտասուօք՝ ոչ զօրէին 'ի հոսել։

"Որդեակ իմ," ասացի յոյնժամ, "ունկն դիր նմա, որ բարեկամն է քոյ։ որ բարեկամն էր Վերգինիայ։ որ 'ի պտկիլ անդ յուսոյ ձերոյ դալակեաց կանգաղել զմիտս ձեր ընդգէմ անակնուելի պատահարաց կենաց։ Զի՞նչ արդեօք աշխարեսն այսչափ գառնութեամբ։ Զքոյի՞ն թշուառութիւնս՝ եթէ զՎերգինիայ։ Այո՛ արդարև թշուառութիւնքն քոյ են անհնարին։ կորուսեր զամենագուհար սիրուհին 'ի կանայս։ զնա՝ որ 'ի զոհ մատոյց զկիրն առ քոյ օգուտ։ որ գերագրեաց զքեզ քան զոր միանգամ հնար էր բաղդին ընծայել։ և համարել զքեզ մին միայն արիտուր արժանի իւրումն առաքինութեան։ Այլ ո՞չ ապաքէն սա՝ ընդ ուսմանն ունէիր վայելել զամենամաքուր երջանկութիւն՝ լինէր սա քեզ աղբիւր անհնարին տառապանաց։ Դարձ առնէր անքատ և ժառանգատեալ։ և զոր միանգամ մնրթ էր քեզ յայնմհետէ վայելել ընդ նմա՝ էր վաստակն քոյ։ և այս զի քնքշացեալ հրահանգութեամբն իւրով և անվեհեր իւրովքն թշուառութեամբք տեսանէիր զնա զօրհանապազ ծիւրիլ ընդ Հգամբ, առ 'ի կցորդիլ և միմեանցանել անուշացուցանել զաշխատանս քոյ։ Եթէ ծնանէր քեզ զաւակ, այս առաւելեալ յաւէտ զանհանգստութեան

թիւնս նորա և գթոյն, առ դժուարութիւնն խնամ ածելոյ սպիտակավարս ծնողաց քոց և մատաղատունկ գերդաստանիդ։ — Ասացեալ թերևս՝ եթէ մայր քեզ երջանկութիւն իմն անկախ զբաղդէն, խնամակալել սիրելի առարկայի վուամ, որ ըստ չափու տկարութեանն յարէ զինքն 'ի մեզ. եթէ՝ աշխատութիւն և վիշտքն ձեր ձեռն տային և ևս սիրելոյ զմիտանս. և եթէ՝ սէրն ձեր զօրութիւն զգեղոյր 'ի փոփոխ թշուառութեանց ձերոց։

"Անշուշտ։ Սէրն առաքինազարդ սփոեսցէ զմայլումն իմն 'ի վերայ բերկրութեանց զայս օրինակ խառնելոց ընդ թոյն դառնութեան։ Այլ Վերգինիա ոչ ևս է. են նոքա՝ որ քո զինի փարելիք նմա՝ մայր նորա և քոյն, զորս անարգահատելի վիշտն քոյ խոնարհէ տրտմութեամբ 'ի գերեզման։ Դիր զերբանկութիւնն քոյ՝ զոր օրինակ և նա զիւրն՝ 'ի տալ նոցա զթիկունս։ և ընդէ՞ր ողբաս զօրհաս Վերգինիայ։ Վերգինիա կենդանի է տակաւին։ Է՝ առատն ինձ՝ տեղի իմն, ուր առաքինութիւնն ընդունի զիւրն զվարձ։ Երջանիկ է զարդիս Վերգինիա։ Ո՞վ, եթէ գոյր հնոր՝ ասել քեզ 'ի հրեշտակական բնակութենէ անտի, զոր օրինակ 'ի ժամ հրաժեշտական ողջունին իւրոյ։" Ո՞վ Պաւլէ. փորձ իմն է կեանքս։ Հպատակեցի ես օրինաց բնաւ-

թեան և՝ սիրոյ և՝ առաքինութեան։ Տես երկինք զի լցուցի զպարտիս իմ։ և խլեաց զիս 'ի սպառ յամենայն տառապանաց՝ զոր կրել ունէի և զոր միանգամ զգայի վասն այլոցն թշուառութեանց։ Եմ ես արդ անդր քան զժամանումն ամենայն չարեաց մարդկան, և դու ողբաս զիս։ ՎՀիտ և անշրջելի որպէս զմանիկ լուսոյ, և կոչեացեսցես զիս 'ի խաւար մարդկային կենաց։ Ո՞վ Պաւլոս, իմ սիրելի՛ բարեկամ։ Յիշեա՛ զաւուրս երջանկութեան մերոյ՝ յորժամ յառաւօտն զգայաք զզուարթացուցիչ զգայութիւնս ծնեալս 'ի ձիգ գեղեցկութեանց բնութեան։ Յորժամ յառեալ նկատէաք զարփիակն ոսկեզօծել զարտեւանս սպարեխաց, և ուրեմն սփռել զՀառագայթս իւր 'ի լանջս անտառաց։ Զիմարդ ազնիւ և ընտրական շարժմունքն մեր, յորժամ վայելէաք զվարդակարմիր գեղեցկութիւնն ծագման արեւու, զանոյշ բուրմունս թփոց մերոց և զնեղդաշնակութիւն թռչնոց մերոց։ Զարդիս 'ի ծագ գեղեցկութեանն ելով աղբեր՝ ուստի հոսեալ բղխին ամենայն որ միանգամ բերկրական են յաշխարհի՝ հոգի իմ յայտնապէս տեսանէ, Հաշակէ, լսէ, շօշափէ զոր միանգամ զառաջինն միայն զգայր 'ի ձեռն տկար գործարանաց մերոց։ Ո՞վ։ որ լեզու զօրեացէ նկարել զյաւերժական երանութեան առատութիւնն, յորում բնակիմ 'ի յաւիտեան։ Զոր միանգամ անհուն

զօրութիւն և երկնային առատութիւնն կարեն պարգևել, զհամաձայնութիւնն՝ զոր Ծնանի մեզ բարեկամութիւնն անհամար էակաց բախճանացելոց 'ի նմին երանութեան՝ վայելեմք պարզ կատարելութեամբ։ Տնր ուրեմն փորձայն քեզ վերնակաւորելոյ։ յաւելցես զերջանկութիւնն քոյին Վերգինիայ սիրով՝ որոյ ջնք վաղճան։ երդովք հարանեաց՝ որ անմահ եղլցի։ Ա՛նդ հրահանգեցից զվերջոյս քոյ։ ընչեցից զաղի ցողդ 'ի յաչաց։ Ո՞վ իմ սիրելի բարեկամ։ — այրդ իմ։ ամբարձ զաչս մտաց քոց յանսպառ տեսականութիւնն և բեր համբերութեամբ վայրկենականն ջարեաց։"

Ցուզմունք իմ գլեալ հեղձուցին զարբառս։ Ակնկառոյց լեալ 'ի յիս գոչեաց Պաւլոս։ "Ո՛չ ևս է նա — ոչ և է։" Զհետ որոյ եկն ընդերկար ուստկութիւն վհատութեան։ Իբրև սթափեցաւ՝ ասէ։ "փոխանակ զի բարի է մահն։ փոխանակ զի երջանիկ է Վերգինիա, մեռայց և ես և միացայց ընդ Վերգինիայ"։ Զայս օրինակ միխիթարութեանն շարժառիթք զոր մատուցանէի, միայն նպաստաւորէին անյուսութեան նորա։ Եղէ ես որպէս մարդ որ ձկտի ապրեցուցանել զբարեկամն իւր 'ի միջոյ հոսանաց, որ սուզանի և ջառցէ յանձն զնուզանալ։ Աւա՜ղ։ թշուառութիւնք կանխահան տիոց պատրաստեն զմարդ առ տագնապս

կենաց։ սակայն չէր տեսեալ Պաւլոս զձախողութիւն երբէք։

Ածի զնա անդրէն 'ի բնակութիւնն իւր, ուր գտի զմայր նորա և զտիկինն տ'ւոյ Դաւվրի անկեալ 'ի կարակի թուլութիւն։ այլ Մարգարիտ յաւէտ ևս էր կթուցեալ։ Աշխոյժ բնաւորութիւնք՝ 'ի վերայ որոց և թերեթև տրտմութիւնն գրոշմէ զկնիք՝ ասա՛ անկարող են տանիլ մեծաց թշուառութեանց։

"Ո՞վ ազնիւ բարեկամդ իմ," ասաց Մարգարիտ, "թուեցաւ ինձ տեսանել յանցելում գիշերի զՎերգինիա 'ի զգեստս ըսպիտակս 'ի միջի համատպրամ ծաղկանց անուշից և բուրաստանաց։ Ասաց ինձ. վայելեմ զկատարեալ երանութիւն։ և մատուցեալ ապա առ Պաւլոս ծիծաղաժպիտ դիմաք՝ զնա տարաւ 'ի քաց։ Այն ինչ ջանահնար լինէի ունիլ զորդին իմ, տեսանեմ զի ես ինքնս լքանեմ զայս աշխարհ, և զի կրթէի զհետ նորա անսպատում բերկրանաք։ Կամեցայ ուրեմն զհրաժեշտականն տալ բարեկամիս զիմ ողջոյն, յորժամ տեսի զնա փութալ զկնի իմ Մարիամաւ հանդերձ և Դոմինկոնաւ։ Այլ որ առաւել հրաշաղսոնն է, տիկինն տ'ւս Դաւվրի զնոյնգունակն է տեսեալ զերազ։"

"Սիրուն բարեկամդ իմ," պատասխանեցի։ "աւատամ զի և ինչ պատահէ

յաշխարհի առանց թոյլտուութեանն Աստուծոյ։ Ցեսիլք գիշերոյ կանխագուշակեն երբեմն զՀշմարտութիւն։"

Պատմեաց և տիկինն տ'ալ Դավրի զերազ իւր ամենևին նման միօրինակ։ և զի ոչ բնաւ նշմարեցի 'ի բամբիշս յայտոսիկ զմիտումն ինչ առ մնոտիապաշտութիւն։ ահռեցաւ միտք իմ 'ի համանշան անրջոց նոցին։ զորոց զՀշմարտեալսն և չինչ երկբայէի։

Որում միանգամ ակն ունէի՝ եկեալ պատահեցաւ։ Հաշակեաց Պաւլոս զմահ երկու ամսով զկնի մահուան Աէրգինիայն իւրոյ։ անուն ոյոյ բնակեցաւ 'ի վերայ շրթանց նորա և ևս 'ի յետին վայրկենի օրհասին։ Ուրթ աւուրքք զկնի մահուան որդւոյն իւրոյ ետես Մարգարիտ զվերջին օրհասականն իւր այնուիկ զուարթութեամբ՝ զոր առաքինութիւնն միայն զգայ։ Ասաց տիկնոջն տ'ալ Դավրի զկարի սիրապատար բարեաւ մնալ։ "յուսով," կրկնեաց, "քաղցր և յաւերժականն միաւորութեան։" Մահն է ինաշխարհիկն 'ի բարիս։ "յաւել," և պարտիմք ցանկանալ նմա։ Եթէ կեանքն ի-ցէ պատուհաս։ պիտի մեզ ցանկալ կարՀութեան նորին։ Եթէ փորձ՝ պարտիմք շնորհակալ լինիլ 'ի սակս համառօտութեան նորա։"

Հովանի եղև բդեաշխին Դամինկոնին և Մարիամու։ որ ոչ բաւէին ուժել յաշխա-

տանս ։ և որք յոյժ սակաւ յաւելին 'ի կեանս քան զսիրուհիս իւրեանց։ Որչափ առ Պիտիլէ՝ մաշեցաւ 'ի մահ 'ի վայրկենէ անտի կորուսանելոյ զտէրն իւր։

Ածի զտիկինն տ'ալա Դավրի յիմ 'ի բնակութիւն։ ուր քեր աղետից իւրոց վերմընբարձ արուեստամբ։ Դալակեաց արգահատել զՊաւլոս և զՄարգարիտ ցյետին վայրկեանն կենաց նոցա։ զոր օրինակ թէ ինքեան ջկային տագնապք։ Իբրև ոչ ևս էին ։ խօսէր զնոցանէ հանապազ որպէս զսիրուն բարեկամաց ։ յորոց չէր ինքն բացագոյն։ Եկաց քան զնոսա միով և եթ ամսով առաւել։ Օտար 'ի ստգտանելոյ ըզհօրաքոյրն իւր 'ի տսկս վշտաց՝ զոր նայն պատճառեաց՝ մարդասէր ոգի նորա աղաչէր զԱստուած թողուլ նմա զյանցանս ։ և հրահանգել զայն լուչի մտաց խէթ՝ զոր վաղչան անգթութեանն նորա հաւանականաբար զարթուցանէր 'ի կուրծս նորուն։

Լուայ ես 'ի նաւաց միմեանց զկնի եկելոյ յԵւրոպիոյ ։ եթէ անողորմ ազգայինս այս նեղեալ 'ի տագնապեցուցիչն խլչէ մտաց ։ քքուէր երգիծանէր ցանգ ստգտանէր զանձն 'ի համար սիրայեղց դստեր եղբօրն իւրոյ տարաժամ օրհասին և մահուան մօր նորին ։ և եղև յետ սակաւուց վկրկ 'ի բանականութենէ։ Ազգակցաք նորա՝ յորոց նոցկտայր՝

տիրեցին զինչս նորուն զկնի արգելանելոյ զնա իբրև զխելագար։ Թէպէտ և ունէր զՏերէնք բանականութիւն առ 'ի զգալ զսոսկալի վիճակին իւրոյ զանհնարին ցաւս։ և 'ի վաղճանի երկմարմին անհոգի 'ի տագնապաց վհատութեան։

Մարմին Պաւլոսի եդաւ առընթեր Վերգինիայն իւրոյ 'ի նոյն 'ի Թվոց ոտս։ և 'ի նմին իսկ սրբազան վայրին ամփոփեցան և նշխարք սիրասպասաւոր մարց և հաւատարիմ զանդկաց նոցին։ Ոչինչ մարմարիոն քօղ արկեալ սթարէ զմարգագետինն։ ոչինչ խորագիր արձանագրէ զառաքինութիւնս նոցին։ Սակայն յիշատակք նոցա անջնջելի քանդակեալ են տառիւք 'ի վերայ սրտից մերոց։ և անշուշտ երթէ անապատ ոգիքն այնոքիկ տակաւին ունին զհաղորդութիւն ընդ որ միանգամ անցանեն յաշխարհի, քաղցրացին շուրջ յածիլ ընդ յարկաւայոցիկ բնակութեանց՝ ուր յաջողաձեռն բնակին առաքինութիւնք, արգահատել զաղքատս դժգոհս ընդ կենաց իւրեանց վիճակ, տածել 'ի սիրտս տարփաւորաց զսրբազան բոցն հաւատարմութեան, ազդել զհեշտութիւն ինքն առ բնութեանն շնորհս, առ աշխատանացն սէր և առ փարթամութեան հարստութեանն սոստին։

Զայնն ժողովրդեան՝ որ յոլովակի ընդ լուութեամբ նկատէ զմնհալածանս կանգնեալս

'ի փաղաքշութիւն կոկոսութեանց ինքնակալաց՝ ընծայեալ է ոմանց այսորիկ կղզւոյս կողմանց անուանս՝ որ Վերգինիայ անմահացուցեն զկորուստ։ Հուպ առ կղզին Ամբերայ է 'ի մի-ջի խաղխաղաց հուն իմն անուանեալ Անցք Սան Ճիւռանայ յանուանէ անտի նաւին 'ի նմա ընկղմելոյ։ Սահման այնր մասին երկրի՝ որ երիւք հրատախտ հեռի է և կիսով չափ ծածկեալ 'ի յալեաց, ընդ որ և Սան Ճիւռան ոչ կարաց անցանել 'ի գիշերի անդ նախ քան զթևեղեալն՝ սնուանի Սորաւանդ Դժբաղդութեան։ և առաջի մեր ահա անդ 'ի ծիր հովտին է Պարոյրն գերեզմանի, ուր գտաւ Վերգինիա թաղեալ ընդ առազով։ զոր օրինակ թէ կոհակք հինինեալ էին պրծուցանել զնորին դիակն վասն ընտանեաց նորա, զի վՀարեսցեն նմա զվերջին հարկն թաղծական 'ի յերկրին՝ որոյ շուք ամբծութիւնն իւր եղև։

Ո՞ անկեղծ սիրարփինք՝ որ այսգոյն խանդակաթ յարեալ 'ի միմեանս։ — վատաբաստի՞կ մարք — սիրո՞ւն ընտանիք։ Հաղագս այսոքիկ՝ որ պաշտպանէին զձեզ սաղարթիւք իւրեանց։ վտակքն այնոքիկ՝ որ սուրեալ հոսէին 'ի տակս ձերս։ դարակքն՝ 'ի վերայ որոց անդորրանայիք, տակաւին զշայլ հարկանեն վասն կորստեան ձերոյ։ Զիք ոք որ յանգնեցաւ յայնմ հետէ աբօրադրել զայն գետին անա-

պատ, կամ կանգնել միւսանգամ զկործանեալ խրՀիթն։ Հօրանք ձեր վայրենացեալ։ դաբատանք ձեր քանդեալ։ Թռչունք 'ի բաց հեռացեալ։ և չինչ ուրդ լսի բայց 'ի ձայնէն բազային՝ որ Հասիր առնու զՀովտոք խարակացդ։ Իսկ ես յորմէհետէ ոչ ևս տեսանեմ զձեզ, նմանիմ բարեկամի զլկելոյ յիւրոցն բարեկամաց։ Հօր՝ զլկելոյ յիւրոց որդեկաց։ ուղաւարի՝ որ Թափառի ընդ ոլորտս տիեզերաց, ուր Ճիամ ես յառանձնութեան խաւարին։

Զայս առացեալ բարի ծերունւոյն՝ եկ մեկնեցաւ յինէն ցօղելով զարտօսր։ և յիմց իսկ քամեցան յաչաց ոչ տակաւ արտասուք յընթացս աղետալի Հառիս պատմութեան։

ՊՍԱԿ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

1 Լետա։ դուստր Թեստիասայ և կին Տինդարոսի՝ զառաձեալ յԱրամազդայ ի կերպարանս կարապոյ։
2 Նեոբէ։ դուստր Տանտաղոսի և կին Ամփիոնի։ որ քան զԼետոն զանձն նախամեծար ընտրելով՝ կորոյս զչորեքտասան զորդիս իւր՝ սպանեալ յԱրտեմեայ և յԱպողոնէ։ և ողբայ՝ ցարձանանալ։
3 Թթուիկ։ պտուղ հնդկայ։ որ նախ քան զհասուցանալն յոյժ թթու ելով՝ ի կիր արկանեն՝ ի կերակուրս։ զկնի հասունանալոյն լինի քաղցրախառն թթու։ որ է թոմբը հընթ։ որ և ոմէ։
4 Արմաւենի։ ծառ հնդկայ բարձր յոյժ։ տերևքն նման Ամբրաւենեայ։ և պտուղ կաղամբի։ այն է Տալ։
5 Նարգիլայ։ որ և հնդկայ ընկոյզ։ այն է Ջոզզ։
6 Փոքրաւենի։ պտուղ հնդկայ նման սեխի։ մէջն՝ կարմրագոյն դեղին և քաղցր։ որ կոչի Գոպէ։
7 Ամբ։ պտուղ անուշահամ։ ի հասունանալն հարկանի՝ ի գոյն դեղնաձիրանի և յայլ գեղեցիկ գոյնս։
8 Գուավա։ պտուղ նման տանձի կանաչ և դալկահար գունով — Սգիրոմբ։
9 Հելինէ կամ հեղինէ։ քոյր երկուորակ եղբարց Կաստորի և Պոլիկևտեայ և կին Մենեղաւոսի։ Համբաւեալ առ գեղոյն ի մէջ Հելլենայոց։ Զսա յափշտակեայ նախ Թէսէոս և ապա Պարիս։ յորոյ ի պատճառս և ծագեցաւ տասնամեայ պատերազմն Տրովական։
10 Գագաճին։ գօրօյ։ պտուղ ինչ՝ ի չափ մեծութեան նշոյ կամ բակլայի։ զոր խածղեալ և լուսեալ առնեն նիւթ չոքոլաթի։
11 Կարտինալ։ թուչուն մեծութեամբ արտտի։ կարմրագոյն։ թագագլուխ։ սեւալիզ։
12 Մայիզ։ տեսակ ինն մրայսրենոյ։ Ջոռոլ։

13 Անանաս. պտուղ քաղցրահամ և թթու, փոքր որ-
պէս զբողկ. տերևքն ցցեալ նման տերևոց արմաւե-
նւոյ. որ և Անոնոս։
14 Զղաստոտ. պտուղ ձողաձև ծառոյ, կակուղ և
քաղցր. տերևքն երկայն և լայն, մինչև շատ անգամ՝ ի
տեղի անօթոյ կերակրոյ առնուլ բնակչացն. այն է
Ֆիէլ։
15 Եղեգնաշաքար. ծառ եղեգան քաղցրաւիշի, ուստի
հանին զշաքար. Շաքարդ։
16 Ապարեկ. փոքրիկ տաշտ յերեսակողմն մէջն ու-
ռուցեալ՝ զոր հարկանեն. որ է Գոնգ կամ Գանգէ
Նողրայ։
17 Խրինձ. փայլուն պղինձ, ոսկեպղինձ, դեղնապղինձ։
18 Այծանդր. առասպելեալ չորքոտանի միջով չափ
մարդ և միւս կէսն այծու բերելով զնմանութիւն՝ ի
վերջին սահմանս Լիբիոյ։
19 Յաւերժ հարսունք. դստերք Ռկկիանու և Թեսի-
սայ՝ աստուածուհիք ծովու, գետոց, աղբերաց, ան-
տառաց, դաշտաց և լերանց։
20 Տիկին երկնից. Լուսին։
21 Մատիան. կապարեայ գրիչ. Գէնոէլ։
22 Ոլիմպոս. ըստ բանաստեղծիս՝ երկինք։
23 Ապենիոն կամ Ապենին. բարձրաբերձ լերինք Իտալիոյ։
24 Սաթենի. ծառ խժաբեր անուշահոտ առ ափամբ
վտակաց բուսանելով՝ որոյ խէժ դեղնագոյն զսաթի
բերէ նմանութիւն։
25 Կրիոլք՝ քրիոլք. ծնունդք բնակչաց Ամերիկոյ և
Եւրոպէացանց առաջին տիրապետաց երկրին։
26 Տելեմաքոս. բանաստեղծութիւն շաչխարհիկ աշ-
խարհանաղ Քենելոնի՝ յօրինեալ առ հրահանգու-
թիւն Պուրկոյեան Ալքայազանին Գաղղիոյ։
27 Անտիոպէ. դուստր Իդոմենեայ պսակաւորին Սա-
լենտայ՝ սիրելի Տելեմաքայ. ՝Ի Տելեմաքոս։
28 Եւխարիս. մին ՝ի յաւերժ հարսանց Կալիպսեայ,
յորոյ ՝ի սէր սրտապատ Տելեմաքոս. Անդ։

29 Մուտայք. Հաստուածուհիք երաժշտութեան, բանաստեղծութեան, ևն.

30 Փեպոնին կամ Փեբոս. ստեղծական անուն արեգական։

31 Արգահատիչ աչայ գոյն. սպիտակ, Հելմակ։

32 Խաղխաղ. աւազ գետին՝ ոչ բարձրայեալ քան զՋուր. կամ ժայռք ընդ ջրով։

33 Վահագն. առ Յոյնս Հերակլէս, որդի Արամազդայ և Ալկմենայ։ Բազում զամանէ առասպելաբանեն Յոյք։ Են սորա՝ բայ յայլոց քաջութեանց, և երկոտուն նահապետութեան. և թէ դեռ յորոյանի սպանեալ զերկուս օձս՝ ի Հերայ արձակեալս՝ ի հեղձուցանել զնա։

34 Երիզ. կախեն զզարանոցաւ կամ զուսոց առ՝ ի զարդ։

ՊՍԱԿ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՆՑ.



37422